


25. 626.

ԳՈՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՄԱԴՆԵՐԸՆՅԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՑԵՎ, ՀԱՄԱԴՆԵՐԸՆՅԻ ՔԱՂԱՔԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱՌԱՋՈՒԱՆ

Ի ԳՈԼԴՀԱՏԵՅՆ

ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ԼԵԶԱԿԱՆ  
ՊԱՆԵՐԸ ԿԵՂԵՔՈՒՄ  
ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ



ԳՈԼԴՀԱՏԵՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ • 1939

185 JAN 2010

Պրոլետարիատ բույր յերկրմերի, միացե՛ք

ԽՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՄԱՇԱՐԺԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՅԵՎ ՀԱՄԱՇԽԱՌՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

333.5

4-75

հ. ԳՈԼԴՇԵՑՆ

ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ԼԵՐԱԿԱՆ ՊԱՆԵՐԸ  
ԿԵՂԵՔՈՒՄ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ

Է ՏԸՆ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԿՁՈՒԹՅՈՒՆ  
ՑԵՐԵՎԱՆ ● 1939

22 MAR 2013

25626

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անփառունակ պահական լեհաստանը, վորն իր կարձատե գոյությունը հավերժացրեց զավթումների և միջազգային կողոպուտի բազմաթիվ գործողություններով և յերկրի ներսում արյունոտ տեսորի ռեժիմ եր հաստատել, դադարեց գոյություն ունենալուց։ Անմիտ և պատվագուրի լեհական կառավարությունը յերկիրը գցեց ուղմական աղետների հորձանուտի մեջ և ամոթալուրեն փախավ, ժողովրդին գցելով բախով քմահաճույքին։

Լեհական պետությունը ստեղծվել եր առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմից հետո՝ ուրիշ պետություններից կողոպտած տերիտորիաներից։ Ֆրանսական և անդիմական իմպերիալիստաների աջակցությամբ, վորոնք լեհաստանը վերածել ելին ինտերվենցիայի գործիքի ընդդեմ Խորհուրդների յերկրի, լեհաստանը իր ավագակային գործունեյությունը միջազգային արենայում սկսեց Արևմտյան Ռեկրախնայի և Լիտվական-Բելոռուսական խորհրդային հանրապետության վրա հարձակում գործելուց։ 1919 թ. Հուլիսին պահական լեհաստանը զավթեց արևմտառկրախնական, իսկ 1920 թ. — արևմտաբելոռուսական հոգերը։ 1938 թ. վերջերին լեհաստանը Զեխո-Մոլդվակիայից խլեց Տէշինի մարզը։ Գտնվելով ԽՍՀՄ հետ անմիջական հարկանության մեջ, արհեստականորեն ստեղծված լեհական ծվենսկազմ, բազմազդ պետությունը իմպերիալիստական ընդարձակ դիտավորություններ եր հետապնդում և պատերազմի միջազգային հրածիների գործիք եր հանդիսանում։

Կալվածատիրական-կապիտալիստական լեհաստանն իր գոյությունը պահպանում եր ազգային փոքրամասնությունների թալանով, լեհական աշխատավորների դաժան շահագործումով և իրավադրկությամբ։ Լեհաստանի 35,1 միլիոն մարդ ունեցող բնակչության ընդհանուր թվից 1939 թ. սկզբին վոչ պակաս 16—16,5 միլիոն մարդը ազգային փոքրամասնություններն ելին, վորոնց մեջ հաշվում եր ավելի քան 8 միլիոն ուկրախնայի և 3 միլիոն բնուուս։ Առանձնապես ծանր եր անիբարավագավասար ժողովուրդ-



Ա-4792

49

6276  
39

И. ГОЛЬДШТЕЙН  
КАК ПОЛЬСКИЕ ПАНЫ  
УГНЕТАЛИ КРЕСТЬЯН

Государственное издательство полит. литературы  
Ереван 1939

ների—ազգային փոքրամասնությունների վիճակը։ Ազգային փոքրամասնությունների աշխատավորները յևթարկվում ենին կրկնակի կեղեքման։ Դաժանորեն հետապնդվում ենին ուղարկնացիններն ու բերառուսները, վորոնց նկատմամբ լեհաստանի կառավարող չափանիքը վարում ենին գաղութային կողոպուտի և ուղղակի ֆիզիկական վոչնչացման անսրող քաղաքականություն։

Լեհական բուրժուազիայի և լեհական կալվածատերերի տիրակալությունը յերկիրը հասցրեց քայլայման և թշվառության։ Դեպի անկում դիմեց արդյունաբերությունը։ Լեհական կապիտալիստներն ի վիճակի չեյին լիովին ողագործելու իրենց ձեռքն ընկած հանքերը, գործարաններն ու ֆարբիկաները։ Արդյունաբերության հիմնական ճյուղերի սարքավորումը նշանակալից չափով քայլայման եր՝ տնտեսություն վարելու գիշատչական ժեթողների հետեանքով։

Սիստեմատիկորեն վատանում եր բանվոր դասակարգի դրությունը։ 1935 թ. կատարված պաշտոնական բյուջետային հետազոտության ավյանների համաձայն, բանվորի ընտանիքի մեկ անդամին ընկած շարաթական վաստակը կազմում եր միջին հաշվով 8,6 դրամի, կամ մոտ 1 ռ. 85 կ.։ Այսպիսի վաստակն ի վիճակի չեր ապահովելու անդամ կիսաքա՞ղ գոյությունը։

Ե՛լ ավելի կործանարար կերպով արտահայտվեց լեհական պաների տիրապետությունը գյուղատնտեսության դրության վրա, վորի մեջ զբաղված և յերկրի բնակչության մեծամասնությունը։ Գյուղատնտեսության արտադրողական ուժերը լեհաստանի նույնիսկ ամենաառաջավոր շրջաններում ջլատված եյին։ Հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը լեհաստանում խիստ իջել եր, թեև մեկ հեկտար հողից ստացվող բերքերն առաջ եր միջին հաշվով նշանակելիորեն ավելի ցածր եյին, քան հացահատիկների միջին բերքերը Արևմտյան Յեվրոպայում։ Պանական լեհաստանի հողային քաղաքականությունը հանդում եր գյուղացիության հողի կողոպտմանը հողուտ կարգածատերերի ու կուլակների, հատկապես Արևմտյան Ռեկրահնայում և Արևմտյան Բելոռուսիայում։ Լեհաստանի գյուղացիությունը սաստիկ տառապում եր հողագրկությունից։ Կալվածատերերն ու կուլակները սորվացրել եյին գյուղացիներին։ Փարբիկանաները կողոպտում եյին նրանց, բարձր գներ սահմանելով արդյունաբերական ապրանքների վրա, բանկերը վաշխառությունով ծծում եյին նրանցից վերջին հյութերը։ գյուղացու քայլայումն ավարտում եյին չա-

փեց դուրս հարկերն ու լեհական չինովնիկների կորզումները։ Անհույս կարիք, կիսաճորտական աշխատանք, ազդային ճնշում և զաժան բոնություններ—ահա թե միլիոնավոր գյուղացիներին ինչ բերեց պահական լեհաստանը։

Յերկրի ժողովրդական տնտեսության լիակատար անկում, աշխատավորների հրեշտակում չահագործում, ժողովրդի իրավագրկություն, իշխանությունների սանձարձակ կամայականություն և վաճառվածություն—այս ամենը վկայում եր լեհական կառավարող շրջանների լիակատար սնանկության մասին և լեհական պետության անկենառնակության մասին։ Այս բանն իր ակնառու հաստատումը գտավ լեհաստանի չտեսնաված արագ ուղղական ջախճակամ և նրա մեջ տիրած քառոխ մեջ։

Լեհաստանի աշխատավորների վողբերդական վիճակը և մասնավորապես արյունակից ուկրաինացիների ու բելոռուսների դրությունը միշտ ել խորհրդային բազմութիվին ժողովրդի շերմ համականքն և առաջացրել նրանց նկատմամբ և դրավել ե նրա ամենասեեռուն ուշադրությունը։ Մեր ամբողջ յերկրի հպարտությամբ ու խանդավառությամբ դիմավորեց և պաշտպանեց Խորհրդային կառավարության վորոշումը՝ պաշտպանության տակ վերցնելու լեհաստանի ուկրաինական և բելոռուսական բնակչությանը և բոլոր միջոցները ձեռք առնելու, վորպեսի լեհական բանվորներին ու գյուղացիներին զուրս բերի այն չարաբաստիկ պատերազմից, վորի մեջ նրանց գցել եր լեհական ծախողակ կառավարությունը։

Այս բրոցյուրը նպատակ ունի խորհրդային ընթերցողին ծանոթացնել պահական լեհաստանի գյուղացիների դրությանը։

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՍԱԿԱՎԱՀՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ  
ԿԱԼՎԱԾՍԻՐԱԿԱՆ ՀՈՂԱԲԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Լեհաստանում միլիոնավոր գյուղացիներ տառապում եյին ծայրահեղ սակավահողությունից: Գյուղացիական ընտանիքն ինչքան ել կաշուց դուրս գար, մանր, սակավազոր տնտեսությունն ի վիճակի չեց կերակրելու նրան: Գյուղացիները չնչասպառ եյին լինում իրենց մանրիկ հողակտորների վրա: Նրանց չուրջը, վորտեղ ել նայելու լինելիք, տարածված եյին անծայրածիր դաշտեր, վորոնք պատկանում եյին կալվածատերերին, յեկեղեցուն և կուլակներին: Լեհաստանի հողային ամբողջ տարածության մոտ 42%-ը գտնվում եր խոշոր հողատերերի ձեռքին:

Բայց այն հետազոտության տվյալների, վոր կատարել եր 1935 թ. սոցիալական եկոնոմիկայի լեհական պետական ինստիտուտը և վորն ընդգրկել եր լեհաստանի բոլոր շրջանները, գյուղացիական յուրաքանչյուր 100 տնտեսության ընկնում եր.

Մոտ	9,5	տնտեսություն,	վորոնք	ունեն վոչ պակաս քան	0,5-ական	հեկտար
24	>	>	>	0,5-ից	մինչև	2 հեկտար
30	>	>	>	2-ից	>	5 >
24	>	>	>	5-ից	>	10 >
10	>	>	>	10-ից	>	20 >
2,5	>	>	>	20-ից	>	50 >

Այսպիսով, 1935 թվականին լեհական գյուղում յուրաքանչյուր 100 տնտեսությունից 65 տնտեսությունն ուներ վոչ ամենի քան 5 հեկտար հող:

Մինչև 0,5 հեկտար տարածություն ունեցող տնտեսություններում ընտանիքի մեկ անդամին ընկնում ե միջին հաշվով 0,07 հեկտար վարելահող. 0,5-ից մինչև 2 հեկտար տարածություն ունեցող տնտեսություններում—0,21 հեկտար և նույնիսկ 2-ից մինչև 5 հեկտար տարածություն ունեցող տնտեսություններում—ընդամենը 0,54 հեկտար: Այս թվերը խոսում են միլիոնավոր գյուղացիների հողային հրեշտավոր սովոր մասին, վորոնք վարելու և ցանելու տեղ չունեյին:

Միւնույն ժամանակ մեկ կալվածատիրական տնտեսությանը ընկնում եր միջին հաշվով մոտ 700 հեկտար հող:

Ամենամանը հողամասերը գտնվում եյին հարավային վոյեցություններում (նահանգներում): Այդ վոյեցություններում գյուղացիական ծիերի մեծամասնությունն ուներ 1—2 հեկտար տարածություն: Այդպիսի տնտեսություններում մեկ մարդուն միջին հաշվով ընկնում եր մոտավորապես 1/3 հեկտար վարելահող: Այդպիսի տարածությունից ստացված ցորենի կամ հաճարի բերքը կազմում եր 3,5 ցենտներ: Մինչև անդամ ամենաալքատիկ գյության պայմաններում 5 հոգուց բաղկացած ընտանիքի մուռնով պահանջում և տարեկան վոչ պակաս, քան 2,5 ցենտներ: Մնում ե 1 ցենտներ, վորն արժեքը 10—12 զլոտի (զլոտին հավասար եր 22 կոպեկի վոսկով), այսինքն՝ 2 ռ. 20 կ.—2 ռ. 40 կ.: Այս գումարը մնում եր ցանքի համար, հնձի համար, անհասունների կերի և բազմաթիվ այլ պարտադիր ծախսեր ծածկելու համար: Հագուստ, կոշկեղեն և այլն գնելու մասին, չխոսելով արդեն կուլտուրական և այլ պահանջներ բավարարելու մասին, հարդեւ չեր լինում մտածելու: Միայն հարկերը կլանում եյին նշանակելիորեն ապելի, քան 1 ցենտներ հաճարի արժեքն եր: Այս մոտավոր հաշվարկումն ամեննեին ել լիովին չի բացահայտում այն ամենալաժան կարիքը, վոր այդ տնտեսությունների բաժինն եր, առանձնապես յերբ բացակայում եյին կողմնակի վաստակները:

Ավելի լավ չեր գյուղացիների գրությունը նաև արեւելան վոյեցություններում, մասնավորապես Արևմտյան Բելուսուսիայում, վորանդ վոչ միայն մինչև 5 հեկտար տարածություն ունեցող տնտեսությունները, այլև 5-ից մինչև 10 հեկտար տարածություն ունեցող տնտեսությունների վոչ պակաս քան կեսը ի վեճակի չեյին կերպակելու գյուղացիական ընտանիքին:

Միւնույն ժամանակ կալվածատերերը լեհաստանում բարոր կյանք եյին վարում: Լեհաստանում հաշվուում եր մոտ 30 հազարուոր և մանրակալածքային կալվածատերեր, և այդ չնչին մի բուռը մարդիկ ունեյին 2,5 անդամ ավելի հող, քան 2,5 միլիոն մանը տնտեսատերերը:

Հոկայական հողային տարածություններ պատկանում եյին իշխաններին և կոմսներին:

Լեհաստանում հողային տարածության նշանակալից մասնավետ ամբացված եր նրան տիրող իշխանական կամ կոմսական տոհմերին և յենթակա չեր վոչ բաժանվելու, վոչ վաճառվե-

լու: Այն յենթակա չեր վաճառվելու մինչև անգամ պարտքերի դիմաց և պարտքերով չժանրաբեռնված անցնում եր միայն ժառանգին: Այդպիսի անոտարելի հողերը յերբեմն ամբողջ պալառներ եյին բանում: Այսպես, կոմս Զամոյսկու կալվածքները վերը Սիլեզիայում բանում եյին միքանի գալահար: Նշանանձերից յուրաքանչյուրին պատկանում եր ավելի քան 100-հազարական մորգեն (60 հազ. հեկտար) հող: «Իավիդգրուղենկ» կալվածքը, վորը պատկանում եր իշխան Ռաձիվիլին Պոլեսկոյում, բոնում եր 170 հազ. մորգեն (մոտ 102 հազար հեկտար): Ավելի քան 50-հազարական մարգեն (30 հազ. հեկտար) եյին բանում կոմս Սկուրժեվսկիների, կոմս Կվիլեցկիների, իշխաններ Զարտորիյսկու և Լյուբոմիրսկու կալվածքները: Հոկայական տարածություններ եյին բանում կոմս Պոտոցկու և ուրիշների կալվածքները: Անոտարելի կալվածքների ընդհանուր տարածությունը լեհաստանում կազմում եր մոտ 0,5 միլիոն հեկտար:

Խոչոր հողատերերը կարեւորագույն արդյունաբերական ձեռնարկությունների և բանկերի վարչությունների մեջ եյին: Նրանք գյուղատնտեսական հումք վերամշակող ձեռնարկությունների տերեր եյին: «Գյուղատնտեսական ապրանքների արտահանումը խրախուսելու», «գյուղատնտեսությանը ողնելու» քողի տակ խոչոր կալվածատերերի գրադաններն եյին մանում կառավարական շատ վարկեր, սուրափիաներ, պարզեներ:

Խոչոր արդյունաբերողների և բանկերների հետ մեկտեղ խոչոր կալվածատերերը վորոշում եյին պանական լեհաստանի ներքին և արտաքին քաղաքականությունը:

Լեհաստանում կալվածատերերին պատկանում եր ամենաբարգավանդ հողը: Լեհական կալվածատերերը հարյուրամյակների ընթացքում գյուղացիներին կամ քշում եյին հողից կամ նրանց տեղափոխում եյին անոտար կարելուց հետո մնացած ամենավատ հողերի վրա: Կալվածատերիրական հողը, նույնիսկ լեհական բուժուական գիտնականների սեմիտական խոստովանությամբ, գյուղացիական հողից միջին հաշվով 25%-ով ավելի արգավանդ և: Իսկ իրականում այդ տարբերությունը շատ ավելի մեծ է: Լեհաստանի շատ մասերում գյուղացիներին պատկանող հողն այնքան վատ է, վոր համարյա վոչինչ չի տալիս: Մակայն սովի սպառնալիքի տակ չքափորությունը դատապարտված եր ամբողջ կյանքում կաչուցուց գուրս գալու, քրտինքով ու արյունով առատորեն ջրելով մշակման համար անպետք հողը:

Լեհաստանի գյուղացիության դրության վրա բացառիկ ծանր եղանակապնում այն հանդամանքը, վոր ամբողջ անտառային տարածության ճնշող մասը—88,6%-ը, մարզագետիների 30%-ը և արոտավայրերի ամենից ավելի նշանակալից մասը պատկանում է եյին խոչոր հողատիրությանը: Մինչդեռ գյուղացիները շինարարական փայտի, վառելափայտի և արոտավայրերի հսկայական կարիք ունեցին: Այդ ամենը հարկ եր լինում ստանալ կարգածատիրոջ ձեռքից ամենաստրկացուցիչ պայմաններով: Կիսապրոլետարական և չքավորական անտեսությունները կազմում եյին գյուղացիական բոլոր տնտեսությունների ավելի քան 65%-ը: Այս ցույց ե տալիս, վոր լեհական գյուղում տեղի ուներ դաստիարակացյան շերտավորման խիստ զգալի պրոցես: Զքավորներն աղքատանում եյին և քայլքայլում, ընկնելով կալվածատերերի և կուլակների լիակատար ստրկացման մեջ:

Բոլոր անտեսությունների մոտ 24%-ը կազմում եյին միջակային տնտեսությունները, ըստվորում դրանց մեջ շատ մեծ եր սակավազոր միջակների թիվը, վորոնք իրենց վիճակով քիչ բանով եյին տարբերվում չքավոր գյուղացիներից: Միջակների խավը արագորեն քայլքայլում եր և վերջին յերկու տասնամյակների ընթացքում խիստ պակասեց: Միջակների հսկայական մեծամասնությունն անցնում եր չքավորների և գյուղական կիսապրոլետարիատի կարգը: Միայն շատ քիչ միջակների յեր հաջողվում ուրիշի աշխատանքի շահագործման ճանապարհով մեծացնել իրենց տնտեսությունը և անցնել գյուղական ունեորդկուլակների շարքը:

Կուլակային տնտեսությունները կազմում եյին տնտեսությունների ընդհանուր թիվ մոտ 10—11%-ը: Լեհաստանի մեծ մասում դրանք այն տնտեսություններն եյին, վորոնք ունեցին 12-ից մինչև 50 հեկտար, իսկ յերկրի արևմտյան և հարավ-արևմտյան մասում—10-ից մինչև 75 հեկտար հող: Այդպիսի տնտեսությունները սովորաբար ունեցին ինչպես մշտական, այնպես ել ժամանակավոր բանալորներ: Դրա հետ մեկտեղ նրանք շատ լրայն չափերով դիմում եյին գյուղացիական աշխատանքի շահագործման: Կուլակներն ուժգնորեն զբաղվում եյին նաև վաշխառությամբ:

Ագրարային խոր ճգնաժամը 1929 թ. հետո չափազանց արագացրեց գյուղացիության շերտավորման պրոցեսը, արագ տեմպերով եր ընթանում չքավորների աղքատացումը և լեհական գյուղի միջնակալի մաղումը:

Լեհաստանում կա բազմաքանակ գյուղատնտեսական պրոլետարիատ: 1931 թվականի մարդահամարի տվյալներով հաշվվում եր ավելի քան 1400 հազ. բատրակ և բատրակունքի, վորոնք մըշտապես աշխատում եյին կարվածատերերի և կուլակների մոտ: Գյուղատնտեսական բանվորներն աշխատավարձի գլխավոր մասնաւում եյին վոչ թե փողով, այլ բնաբերքով—հացահատիկի, կարտոֆիլի, կացարանի, բանջարանցի հողակտորի, կով պահելու իրավունքի ձևով և այլն: Այդ ուժեղացնում եր բանվորների կախվածությունը տիրոջ կամայականությունից, նրանց շատ ամուր կապելով վարձակալման տեղին: Այս ամենի հետևանքով լեհաստանի գյուղատնտեսական բանվորների աղքատությունը հասել եր ծայրահեղ չափերի:

Բացի այդ, այդ նույն մարդահամարի տվյալներով, գյուղում կար վարձու աշխատանքով զրադղող մոտ 1300 հազ. մարդ, վորոնք հարկադրված եյին գոյություն ունենալ մեծ մասամբ ժամանակավոր, պատահական, աղջապահ վարձատրվող աշխատանքով՝ կարվածատիրական կալվածքներում, կուլակային տնտեսություններում, անտառամշակություններում և այլն: Զբաղված մենով տարեկան միայն միքանի ամիս, իսկ մնացած ժամանակ զործազրկության մասնված, նրանք կազմում եյին գյուղի ամենից ավելի զուրկ խավերը: Նրանց զգալի մասը հողագուրի գյուղացիներն եյին, վորոնք համեմատաբար նոր եյին կորցրել հողը: Գյուղի ուժեղացող շերտավորման ազդեցության տակ նրանց շարքերն անընդհատ ալելանում եյին:

## ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԶԵՍՉԱՐԿՈՒԹՅՈՒՆԻ ՅԵՎ ԿՈՎԱՋՐԿՈՒԹՅՈՒՆԻ

Լեհական գյուղացիության հիմնական մասը վոչ միայն սակագաղող եր, այլև ձիազուրկի:

1927 թվականին, անասունների հաշվառման տվյալներով, յուրաքանչյուր 100 տնտեսությունից 44-ը ձիազուրկ եր: Վերջին ժամանակներս ձիազուրկ տնտեսությունների քանակն արդեն դասըլուեն ավելի յեր ծիսերի ընդհանուր թիվ 50%-ից: Առանձին շրջանների հետազոտումը հայտաբերեց գյուղեր, վորոնցում ձիազուրկ տնտեսությունների թիվը հասնում եր 80%-ի:

Բացի այդ, հենց այդ նույն հաշվառման համաձայն, յուրաքանչյուր 100 տնտեսությանն ընկնում եր 36 տնտեսություն, վորոնք ունեցին միայն մեկ հատ ձի:

Պահական Լեհաստանն էր աղքատությունով իրենից շատ հետ թողեց նույնիսկ ցարական Ռուսաստանի սովորակար գյուղը: Նախաձեղափոխական ժամանակ սուսական զյուղում ձիագուրիկ տնտեսությունները կազմում էին 29,2%, մեկ ձի ունեցողները՝ 30,3%, վոր միասին կազմում էր 59,5%: Լեհաստանում ձիագուրիկ և միաձի տնտեսությունների տոկոսը զգալիորեն ավելի բարձր է: 1927 թվականին այն կազմում էր տնտեսությունների ընդհանուր թվի 80, իսկ վերջին տարիներին մոտ 90 տոկոսը, կամ 0,9%-ը: Այստեղ մտնում են արդյունաբերական բանվորների, բարակաների և դյուզական արհեստավորների «տնտեսությունների» մի բավականին մեծ թիվ: Նրանք չունեցին վոչ հող, վոչ բանող անասուն: Մինչև 2 հեկտար տարածություն ունեցող համարյա բոլոր կիսապրոլետարական տնտեսությունները նույնպես ձիագուրիկ են:

Զիազուրիկ ծիերի ամենամեծ տոկոսն այն ըրջաններում էր, վորակեղ ամենից ավելի յեն մանր տնտեսությունները, այն է՝ Հարավային ըրջաններում և Արևմտյան Աւկրաինայում, վորը կեղեցիում եր լեհական իմպերիալիզմի կողմից: Այստեղ գյուղացիական ծիերի կեսից ավելին ձիեր չուներ: Մինչև անգամ 2-3 հեկտար տարածություն ունեցող տնտեսություններում սակայ եր պատահում բանող անասուն:

Զիազուրիկ գյուղացին մի «տնտեսատեր է», վորը վաստորեն չունեոր է: Իր հացը նրան յերբեք չի բավականացնում, —նա սովորական և լրացուցիչ զնել այն: Մի կերպ, վարձու աշխատաքով, յեթե այլովին աշխատանք ստանալու հնարավորություն եր լինում, նամի կերպ յուլա յեր գնում որեցոր: Զիազուրիկ գյուղացիներից վոմանք, —այլպիսիները շատ են—իրենց հողը վարձով հանձնում ելին ունեոր մարդկանց, թյուլները հարկադրված ելին ձի խնդրել կուլակից, և այդ վերջնականապես ստրկացնում ու քայլքայում եր նրանց: Լեհական հետազոտողների վկայությամբ, մեկ լուծ ձի ողտագործելու համար կուլակներն առնում ելին որպական 25 զլոտի, մինչդեռ 1 ցենտներ հաճարի գինը կազմում էր 16 զլոտի և ավելի սպակաս: Այսպիսով, մեկ որով մեկ լուծ վարձելուն չքայլորը տալիս եր վոչ սպակաս քան 1,5 ցենտներ հաճար:

Զիեր վարձելու կապակցությամբ ստեղծվում էլին կուլակներից ձիազուրիկ տնտեսությունների ստրկական կախավածության բազմազան ձևեր:

1928/29 թվականներին կենտրոնական և հարավային Լեհաս-

տանի մի շաբք գյուղացիում կատարված 575 ծիերի հարցման տվյալներով, մինչև 2 հեկտար տարածություն ունեցող պրոլետարական տնտեսությունները վարձած ձիերի աշխատանքի 205 որը հատուցել են, բացի փողից, ևս աշխատավճարման 323 որով, իսկ 2-ից մինչև 5 հեկտար տարածություն ունեցող տնտեսությունները ձիերի ողտագործման 1545 որգա համար, բացի փողից, աշխատել են ևս 1424 որ: Ձիազուրիկ տնտեսությունների թվին ավելանում էր տարեցտարի: Այսպես ելին կուլակները չքայլոր գյուղացիներին մուրացիկ գարձնում:

Լավ չեր նաև միաձի գյուղացիների վիճակը: 1927 թվականին լեհաստանում հաշվվում էր մոտ 1½ միլիոն միաձի ծուխ: Միաձի տնտեսություններ առանձնապես շատ ելին սպիտակ-լեհացերի զավթած և քայլքայած Արևմտյան Բելոռուսիայում: Այսպես, նովազրուդեկի վոյեվոդությունում մեկական ձի ուներ բոլոր տնտեսությունների 62%-ը, վիլոյյում—58, Պոլեսյյում—51%-ը: Արանք չքայլոր տնտեսություններ են, վորոնք քիչ հող ունեցին և զրկված ելին մարզակետիներից ու արոտավայրերից: Միաձի տնտեսությունների հոկայական մեծամասնությունը սովորաբար ուներ խզուեկ, կերպ սպակառության պատճառով կիսաքաղց յարու, ուստի և նրանից ստացված ողուտը շատ փոքր է: Յ-4, սակավաղեալ 5 հեկտար ցամելու համար հաճախ հարկ եր լինում կողքից վարձով վերցրած ձի լծել, նրա համար յեռապատիկ թանդ վճարելով փողով կամ աշխատավճարումով: Բայց այդպեսում ևս չքավորին չեր բավականացնում իր հացը: Միաձի, ինչպես նաև ձիազուրիկ տնտեսատերը սովորված էր լինում հաճախ մի կերպ յուլա գնալ վարձու աշխատանքով կալվածատիրոջ, կուլակի մոտ, անտառ կտրելու և լաստառաքելու միջոցով և կատարել ամեն տեսակի այլ ծանր աշխատանք: Լեհաստանում միաձի գյուղացին կիսով չափ արդեն տնտեսատեր չե, այլ ուրիշի տնտեսության մեջ աշխատող վարձիոր:

Լեհաստանի գյուղացիական ծիերի գերակշռող մասսան, ինչպես յերեսում ե բերքած տվյալներից, պատկանում էր պրոլետարական և չքավորական տնտեսությունների թվին:

Գյուղի՝ կուլակների և գյուղական պրոլետարիատի շերտավորվելու մասին են խոսում նաև անառանձների այլ տեսակների բաշխման մասին յեղած տվյալները: Այսպես, 1927 թվականի հաշվառման տվյալներով, յուրաքանչյուր 100 տնտեսությունից 14 տնտեսություն կովազուրի եր և 47 տնտեսություն ուներ մի-

այն մեկ կթի կով։ Կովաղուբկ և մեկ կով ռւնեցող գյուղացիական ծփերի ամենաբարձր ռոկոսը դարձյալ Արևմտյան Ռէլքաինայումն եր, վորտեղ առանձնապես ուժեղ եյին հողի սովոր և կալվածատերերի կեղեքումը։

Լեհաստանի աշխատավոր գյուղի աղքատության ցայտուն որինակ եր հանդիսանում նաև խողերի բացակայությունը «տնտեսատերերի» համարյա մեկ յերբորդի մոտ։ Խողաբուծությունը կապիտալիստական յերկրներում մասառ անասնաբուծության համեմատաբար շահավետ և ամենից ավելի զարգացող գյուղերից մեկն ե։ Բուրժուական գրչակները պնդում են, վոր խողեր պահելը, և այն ել մեծ շահով պահելը, կապիտալիզմի որով մատչելի յե նույնիսկ ամենամանը տնտեսություններին։ Այս կեղծիք է, վոր հնարիխ ե դյուղացիական մասսաներին խարելու համար։ Իրականում չքավորությունը, ինչպես մենք տեսնում ենք Լեհաստանի որինակով, ի վիճակի չեր ոգուտ քաղել այս շահաբեր դործից, և խող պահելն իրենց ձեռքն առան գյուղական հարուստները։ Փողի մշտական կարիքի, կերերի պակասի և հարժար շենքերի բացակայության պայմաններում մասառ և կաթնատու անասնաբուծությամբ զբաղվելը գյուղացիական չքավորության համար նշանակում եր լոկ նրա սեփական սնունդի վատացում։

## ԽՍ.ԲՎԱԾ ՀՈՒՅՍԵՐ ՀՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Բանվորների և գյուղացիների հաղթանակը Ռուսաստանում 1917 թ. հոկտեմբերին — կալվածատերերի և կապիտալիստների իշխանության տապալումը խորապես ալեկոծեց Լեհաստանի աշխատավորական մասսաներին։

Լեհական շատ բանվորներ և գյուղացիներ, վորոնք դանվում եյին դերմանական և ավստրիական զորքերի ոկուլացիայի յենթարկած տերիտորիայի տաճաններից դուրս, դործուն մասնակցություն ռւնեցան Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությանը։ Բուն Լեհաստանում ավստրիական և այլ ոտարերիյա զորքերի հեռանարուց հետո ծագեցին բանվորների դեպուտատների խորհուրդներ։ Ռուսաստանում կատարվող դեպքերի և լեհական բանվորների հեղափոխական յելույթների ազդեցության տակ ուժեղացալ լեհական գյուղացիության ձգտումը՝ բանիկերով գրավելու կալվածատիրական հողերը։ Գյուղացիության լայն խովերը Լեհաստանում սկսեցին համառբին պահանջել բա-

ժանել և իրենց հանձնել կալվածատիրական հողերը։ Գյուղացիական շարժումը շատ տեղերում ընդունեց ցայտուն հեղափոխական ձևեր։ Առանձնապես ուժեղ եր բատրակների մեջ յեղած հոգմունքը։ Արդեն 1918 թ. աշնան ու ձմեռը բատրակներն սկսեցին ուժով արգելակել կալվածատերերի կողմից հացահատիկը ծախսելուն և արտահանելուն, գտնելով, վոր այն՝ հողի, շինությունների և ինվենտարի հետ միասին պետք ե անցնի իրենց։ 1918 և 1919 թվականներին Լեհաստանում առաջանում եյին բատրակների խորհուրդներ։

Գյուղացելով իր իշխանության ամբողջ խախուսությունը, լեհական բուրժուազիան դյուղացիության հողային սովոր և հաշիվ կալվածատիրական կալվածքների լիկվիդացիայի յենթարկելու շատ անորոշ խոստումներ եր տալիս։ Բայց հեղափոխությունից սարսափելուց արված այս հարկադրական խոստումները բուրժուազիան վո՞չ այն ժամանակ, վո՞չ ել հետո մտադիր չեր իրականացնել։ Միայն յերբ հաղթական կարմիր բանակը, խորհրդային հողից դուրս քչելով կապը կտրած լեհական դավթիչներին, մոտեցավ վարչակայի գարպաններին, մահու չափ սարսափած լեհական սեյմը (պառլամենտը), վորը կազմված եր կապիտալիստներից, կալվածատերերից, կուլակային պարագլուխներից և կապիտալիստների առաջ լակերություն անող սոցիալիստներից, 1920 թվականին հաստատեց հողային «ռեֆորմի» որենքը։ Բայց որինքի հողն առաջին հերթին պետք ե ստանային հաշմանդամները, դիմուրները և գյուղատնտեսական բանվորները։ Բատրակներին և գյուղացիներին առում եյին։ «Եթե ճակատ գնաք, ապա հող կատանաք»։ Իսկ իրականում բուրժուազիան չեր ել մտածում աշխատավոր գյուղացիության հողային սովոր մեղմացնելու մասին։

Աշխարհում չկա այնպիսի բուրժուական կառավարություն, վորը գյուղացիներին առանց փրկանքի հանձներ կալվածատիրական հողի թեկուղ և մի մասը։ Միայն Խորհրդային պետությունը, վոչնչացնելով կալվածատերերի և կապիտալիստների իշխանությունը, գյուղացիներին ձրիաբար հանձնեց 150 միլիոն հեկտար կալվածատիրական, պետական և վանքապատկան հողեր։ Դրանով իսկ գյուղացիությունն աղասիլեց վարձակալական հակայական վճարումներ վճարելուց, վորոնք կազմում եյին տարեկան 500 միլիոն սուրլի մի գումար վոսկով։

Այլ եր բանը բուրժուատիրական-կալվածատիրական լեհաստա-

Նում: Յերբ լեհական բուրժուազիայի և կարվածատերերի տիրապետությանը սպառնացող անմիջական վտանգն անցավ և նրանց իշխանությունը ժամանակավորապես փոքրինչ ամրացավ, ամենից ավելի քիչ կարող եր խոսք լինել կարվածատերերի հաշվին գյուղացիներին հող տալու մասին:

Լեհաստանում գյուղացիներն առանց փրկանքի վոչ մի հեկտար հող չստացան: 1920 թվականի՝ հողային «ուժորմի» կանոնադրությունը մերժում եր կարվածատիրական և այլ հողերի վորեւ ձեռվ կոնֆիսկացիան: Այդ կանոնադրությունը մշակել եին կապիտալիստներն ու կարվածատերերը՝ այն ժամանակ իշխանությանը մոտ թողած կուլտային առաջնորդների և այսպես կոչված «սոցիալիստների» մասնակցությամբ:

Այդ հողային որենքը նպատակ եր գնում թույլ չտալ աշխատավոր գյուղացիության գայխք բանվոր դասակարգի հետ: Հենց վելով գյուղի ամենաունեար խավերի վրա, լեհական բուրժուացիան փորձեց ամրացնել իր խախտված աղղեցությունը գյուղացիական մասսաների վրա և նրանց ոգնությամբ խեղել հեղափոխական պրոլետարիատին:

Իր հաշիվը բուրժուալիստն կառուցում եր այնպես, վորպեսզի առաջին հերթին իր կողմը գրավի միջակ գյուղացուն: Միջակը, չնայած նրա տնտեսության ծայրահեղ անկայունությանը և կալվածատիրոջ ու կապիտալիստի կողմից կրած ճնշումներին, տառանդում ե և հաճախ չդիտե, թե հարուստների և աղքատների միջև մղյող մեծ ճակատամարտում ուր և ում հետ գնա, —կապիտալիստների՝ թե բանվոր դասակարգի հետ, վորը պայքարում է հանուն վողջ աշխատավոր ժողովրդի ազատագրության:

Կուլակներն ոգտագործում եին միջակների այդ անկայունությունը և նրանց միջոցով աղղեցություն եին դործում նաև գյուղի քավորական խավերի վրա, նրանց ներշնչելով խարուսիկ հույսեր, թե կապիտալիստի որով ել չնարավոր ե ինչ-վոր մի յելք աղքատությունից և սովոր գուրս գալու համար: Մերժելով կարվածատիրական, պետական և յեկեղեցական հողերը՝ հողուացուացիների, առանց հատուցման վերցնելը, լեհական բուրժուացիան և նրա սպասավորները, իրաղալով գյուղացիների սեփականատիրական դղացմունքների հետ, գյուղացիներին խոստանում եին եժան գնով հող վաճառել:

Բուրժուազիան ձգում եր համոզել գյուղացուն, թե նա պետք ե հույսը դնի միայն աշխատելու իր «յեռանդի» վրա, և

վոչ թե քաղաքի և գյուղի բանվորների հետ հեղափոխական դաշինք կնքելու վրա:

Նրան խարուսիկ հույսեր ներշնչելով միջակին, կապիտալիստներն ու կարվածատերերը միայն կուլտային տնտեսություններն ամրապնդելու մասին եյին մտածում: Նրանք իրենց շատ լավ հաշիվ եյին տալիս, վոր բատրակներն ու քավորությունը փող չունեն վոչ միայն հող ձեռք բերելու համար, այլ հաճախ հարկադրված են իրենց զրկել ամենաանհրաժեշտ բանում, ընդհուպ մինչ չացից: Միջակի խնայողությունները կամ աննշան չափով քիչ են, կամ ամեններն չկան: Խնայողություններ ունի միայն գյուղական բուրժուալիստներին: Իսկ բանկերը և ամեն տեսակի կոոպերատիլու այնձարկությամբ վախատվություն տալիս են համարյա բացառապես հարուստ տնտեսատերերին: Կապիտալիստական յերկը ներում հողային բանկերը հենց նրանց, և վոչ թե հողագործկ գյուղացիների բազմամիլիոն մասսային են ողնում հող ձեռք բերելու:

Հողային «ուժորմի» լեհական որենքը հանդում եր նրան, վոր կարվածատերերին հնարավորություն եր տրվել շատ շահավետորեն ծախելու իրենց հողի մի մասը պետական բանկին կամ այլ կաղմակերպություններին, վորոնք այնուհետեւ այդ հողերը բաժանում եյին մանր կտորների՝ ամենից ալելի «ամուր» տնտեսություններին վերավաճառելու համար:

Հողի գլխավոր մասսան (70%), վորն անցել եր պետական գյուղատնտեսական բանկով մինչև 1937 թ., հիմնականում ծառայեց կուլտային տնտեսություններն ամելացնելուն:

Պետական, ինչպես նաև հենց նույն գյուղատնտեսական բանկի միջոցով գնված հողի քիչ մասը չողտագործվեց խուսորներ սուելծելու համար, վոր հանձնվեցին լեհական բանակի սպաներին և իրենց ժամկետը ծառայած-վերջացրած յենթասպաններին: Լեհական բանակի սպաները հավաքաղրվում եյին գլխավորապես կալվածատերերից, իսկ յենթասպանները—կուլտայիների տղաներից, վորոնք աշխատավոր ժողովրդի դահիճների գեր եյին կատարում: Նրանց խուսորներ եյին տրվում այն հողերում, վորոնք ընկած եյին խորհրդային սահմանի յերկայնությամբ Արևմտյան Բելոսութիւնում և Արևմտյան Ուկրաինայում: Դրանով հետապնդում եր մի նպատակ՝ տեղական վոչ-լեհ բնակչությունը պահել մշտական հակողության տակ, հակազդել հեղափոխական շարժմանը և հենակետեր հիմնել Խորհրդային Միության վրա հարձակում նա-



Ա-9792  
99

խապատրաստելու համար։ Խուսորների ձեռվլ այդ ուաղմական ընակավայրերն ատեղծելը լեհաստանի բելոռուսական, ուկրաինական և լիտվական գյուղացիների հողի անպատկառ կողոպտումն եր։

Եոր կաղմված տնտեսությունների մեծ մասը վորպես սեփականություն անցավ կուլակների տղաներին, վորոնք իրենց հայրերից փող եյին ստացել հող և տնտեսություն ձեռք բերելու համար։ Հենց այդ կուլակների տղաներն ել հողային «ուժորմն» անցկացնելու վերաբերյալ կառավարական ամեն տեսակի հաշվետվություններում համարվում եյին հողագուրկներ։ Այսպիսի պրիուններով ուղում եյին ճշմարտության տեսք տալ այն հեթանօթին, թե հողն անցնում է աշխատավոր ձեռքերին։ Իսկ իրականում նոր ստեղծված տնտեսությունների առյուծի բաժինն անցավ կուլակյին տարրերի և պանական արբանյակների ձեռքը։

Հողի դրամի մասն անմիջականորեն ծախսեցին կալվածատերերըն ու հողային սպեկուլանաները։ Այս դրոժարքների ժամանակ ել ավելի մեծ չափով, քան պետական գյուղատնտեսական բանկի հողային գործարքների ժամանակ, Հողը հանում եր այն տնտեսատերերին, վորոնք կանխիկ փող ունեյին։ 1937 թվականի կեսերին կենտրոնական կառավարական «Գազետա ՊՈԼԵՍԿԱ»-ն ստիպված եր բացահայտորեն ընդունելու։ «Վորովչետե այդպիսի գործարքները կատարվում են կանխիկ վճարով, ապա խոչոր կալվածքների պարցելացիայի ժամանակ հողամասեր ձեռք են բերում առաջին հերթին ունենոր տնտեսատերերը, և վոչ թե մանր, «գաճաճային» տնտեսությունների տերերը»։ Հող գնում եյին նաև ԱՄՆ-ից և այլ յերկրներից վերադարձած եմիգրանտները, վորոնք ուստրության մեջ գտնվելու տամայակ տարիների ընթացքում ինչ-վոր խնայողություններ եյին արել։

Սոցիալական եկոնոմիկայի լեհական պետական ինստիտուտը 1935 թվականին կատարեց 4742 ծովս ունեցող 53 գյուղի հարցում։ Հետազոտության տվյալների համաձայն, 20—50 հեկտար հող ունեցող տնտեսություններն իրենց տարածությունն ավելացրել եյին միջին հաշվով 2,5%-ով, 10—20 հեկտար ունեցողները՝ 4%-ով, մինչդեռ 2-ից մինչև 5 հեկտար ունեցող տնտեսություններն աճել եյին միայն 2,1%-ով, իսկ 0,5-ից մինչև 2 հեկտար և գրանից պահաս ունեցողները՝ 1,5%-ով։ Մինչև հողային «ուժորմ» անցկացումը լեհաստանում 10—15 հեկտար հող ունեցող 375 հազ. տնտեսություններ ունեյին 6,3 անդամ ավելի տա-

րածություն, քան 0,5—2 հեկտար ունեցող 1,1 միլիոն տնտեսությունները, և 1,8 անդամ ավելի, քան 2—5 հեկտար ունեցող 1 միլիոն տնտեսությունները։ Իսկ հողային «ուժորմ» հետանքով կուլակյին տնտեսությունների վոչ-մեծ մի խումբ լրացրուցիչ դնել եր մոտավորապես 14 անդամ ավելի հող, քան մեկ միլիոն պլրուետարական տնտեսությունները, և 3 անդամ ավելի, քան մեկ միլիոն չքավորական տնտեսությունները։

Մասնաման յենթարկված կարիքածքներում աշխատող բատրակները միայն սակավ դեպքերում կարող եյին հողակտոր դնել։ Ամենից ավելի հաճախ նրանք զրկվում եյին աշխատանքից՝ մեծացնելով դորձալուրկների բանակի շարքերը։ Հենց նույնպես ել մասն վարձակալները հողը ծախելիս մեծ մասամբ պետք ել բնողներին իրենց հողամասերը, չստանալով իրենց խոստացված ոգնությունը՝ սեփական տնտեսություն ձեռք բերելու համար։ Ճիշտ է, ցանկանալով կալվածատերերի և կուլակների ուժին ավելացնել հողին ամրացված բանվորների թիվը, կառավարությունը սկսեց ստեղծել վոչ ավելի քան 2 հեկտար, ամենից ավելի հաճախ 0,5—1 հեկտար ամենավատ հող ունեցող պրոբետարական տնտեսությունների նշանակալից մի քանակություն։

Ստանալով մի կտոր հող առանց վորեև շինությունների, առանց անսասւնի և առանց գյուղատնտեսական գործիքների, յերեկով հողազուրկ գյուղացին կամ բատրակը ընկնում եր ավելի վատ դրության մեջ, քան առաջ, վորովհետեւ նա շարունակում եր մնալ բատրակ, բայց բացի այդ հողին ամրացված։ Ապրուստի միջոցներ նա ստանում եր գլխավորապես վարձու աշխատանքով։ Բացի այդ նա ծանրաբեռնված եր մեծ պարտքով՝ հող ձեռք բերելու հետևանքով։ Այդ պարտքը գյուղացին յերեք չեր կարող վճարել։ «Վո՞չ մի կոպեկ չունենալով, — վրում եր կալվածատերական «Կա՛» լրագիրը, — այդպիսի տնտեսատերն իրեն վորջ ե փորում հողում, այն ծածկում ե վերմից ճյուղերով ու տերևներով և այսպես ապրում ե ամենասոսկալի աղքատության, խոնավության և կեղտի մեջ։ Յերեխաները հիվանդանում են թոքախտով, իսկ դեղի փող չկա»։ Ավելի լավ չե նաև նրանց վիճակը, ովքեր փոքրինչ ավելի հող են ստացել։ «Ուստի, — շարունակում ե լրագիրը, — զարժանալու վոչինչ չկա, վոր այս պայմաններում գյուղում առաջ ե գալիս նոր կիսապրուետարների մի խավ։ Նրանք կարծես թե հող ել ունեն, սակայն ինչպես իրենք են ասում — «ավելի», քան հարկավոր ե մեռնելու համար, և չափա-

դանց քեչ ապրելու համար»: Հողն արագորեն ուժասպառ և լի-  
նում, սովում ամեն որ բաղխում է դուռը: Աճում և ատելությու-  
նը»:

Հողային սուր սովի ճնշման տակ աշխատավոր գյուղացիների  
մի մասը հարկադրված եր փրկություն վնասել հող զնելու մեջ:  
կալվածատիրական-կապիտալիստական Լեհաստանում տարեց-  
տարի շարունակ ավելի դժվար եր վարձու աշխատանք դանել:  
Մինչև 1914—1918 թվականների համաշխարհային պատերազմը  
կարելի յեր գնալ քաղաք, Փարբիկա: Սակայն պատերազմից հե-  
տո Լեհաստանի արդյունաբերությունն այնքան թույլ եր զարդա-  
նում, վոր չեր կարող աշխատանք պալահովել մինչև անդամ քա-  
ղաքների բանվոր բնակչությանը: Արդյունաբերության մեջ  
կապված բանվորների թիվը 1928 թվականից սկսած խիստ կրր-  
ձատվեց կրիզիսի հետեւանքուլ: 1937 թվականի վերջին քաղաքնե-  
րում հաշվվում ելին մոտ 2 մելիոն գործազրուրկներ:

Մինչև համաշխարհային առաջին պատերազմը հետազում  
Լեհաստանի կազմի մեջ մտած մարզերից ամեն տարի արտադրու-  
թյում ելին տասնյակ-հազարավոր գյուղացիներ և հարյուր-հազա-  
րավորը մեկնում ելին արտասահման՝ ժամանակավոր վաստակ-  
ների՝ վրաբես սեղոնային բանվորները: Պատերազմից հետո վաս-  
տակների այդ աղբյուրները համարյա կտրվեցին, փորովհետեւ մի-  
շարք պետություններ փակեցին իրենց սահմանները գաղթական-  
ների և սեղոնայինների համար:

Տարեցտարի ընկնում եր վարձու բանվորական ուժի պահան-  
ջը նաև կալվածատիրական կալվածքներում: Գյուղացիներն ամեն  
կողմից զգված ելին կալվածատիրական հողով, տարեցտարի  
նրանք ավելի ելին նեղվում իրենց վաստ հողակտորների վրա, վո-  
րոնք չելին ապահովում նրանց փոքրինչ տանելի գյուղայունը:  
Գործազրկությունը գյուղացի հասալ անասելի չափերի:

Մինչեւ կուլակները հողային «ուժֆորմի» չորհիլ գավթե-  
ցին հողը, չքավորությունն ու միջակները պարտք ելին վերջնում  
վաշխառություն, միայն թե մի կտոր հող ձեռք բերելին: Գյուղա-  
ցին զնալու տեղ չուներ, ուստի նա հարկադրված եր ստրկացնող  
պարմաններին համաձայնվել և կալվածատիրոջ վճարել ամենա-  
քարձր զներ հողի համար: Այս հողի վրա ել զարդացավ հողային  
կատաղի սպեկուլացիա, վորի մեջ գործուն մասնակցություն  
ունեցավ լեհական պետական գյուղատնտեսական բանկը, վորը  
կալվածատերերին այդ սպեկուլացիան վարելու միջոցներ եր տա-

լիս: Կալվածատերերին ու հողային սպեկուլատներին հաջողվեց  
մինչև 1929 թ. ճգնաժամի վրա հասնելը խիստ բարձրացնել զնե-  
րը: Այսպես, «Գազետա Խլոպսկա»-ն 1928 թ. վերջին հաղորդում  
եր, վոր հողի գները հասնում ելին 3300-ից մինչև 6600 զլոտի  
մեկ հեկտարի համար: Գյուղացիական ամենամեծ սակալահողու-  
թյան ըրջանում հողի գների աճումը շարունակվում եր նաև ճրդ-  
նաժամի տարիներին, յեր յյուղատնտեսական մթերքների գներն  
ընկան կիսով չափ և ալելի: Հողատերերի մոնուպուլ գրությունը  
նրանց թույլ եր տալիս պահելու վեր բարձրացած զները: Սոցիա-  
լական եկոնոմիկայի պետական ինստիտուտի հրապարակած՝  
«Գյուղացի աշխատանք չկա» վերնագրով զրքի մեջ մատնանշվում  
է, վոր կազմի վոյեկողության Ռժեշովսկի գավառում շինու-  
թյուններ չունեցող հողի գները 1928-ից մինչև 1930 թվականը  
աճել են 37,5%-ով, և միայն 1931 թվականին և սկսվել զների  
իջնումը: Բայց վորովհետեւ գյուղատնտեսական մթերքների գնե-  
րը ավելի շատ են ընկել, ապա ճգնաժամի տարիներին հողը  
գյուղացու համար յեղել և ավելի պակաս մատչելի, քան առաջ:  
Այդ նույն գրքում մատնանշվում է, վոր 1927 թվականին հողի  
հեկտարի զինը Ռժեշովսկի գավառում հալատար եր 51 ցենտներ  
հաճարի արժեքին, իսկ 1933 թվականին՝ հացահատիկի զների  
անկրան հետեւանքով այն հասել եր արդեն 182 ցենտներ հաճարի  
արժեքի: Մեկ հեկտարից ստացված հաճարի հալաքը նույնիսկ  
ամենալավ բերքի ժամանակի Ռժեշովսկի գավառում եր  
10,3 ց.: Բացի այդ, այդ նպատակի համար արված փոխառու-  
թյունների տոկոսների վճարումները վարկի նույնիսկ ամենաշա-  
հավետ պայմաններում խլում ելին տարեկան ևս մոտ 4 ց. հա-  
ցահատիկ, կամ բերքի մոտ  $\frac{2}{5}$ -ը: Այսպիսի պայմաններում հող  
զնելը գյուղացուն տանում եր գեղի անխուսափելի քայլայում:  
Գյուղացիական «Եվազունե» լուսակիրը գրում եր. «Մանր հո-  
ղամասեր զնած հարյուրավոր և հաղարավոր մարդիկ իեղղվեցին  
պարտքերի մեջ, վոր չեն կարողանա վճարել վոչ իրենք, վոչ  
նրանց յերեխանները, վոչ թոռները, վոչ ել նույնիսկ նրանց ծոս-  
ները»:

Զավագանց շատ դեպքերում հող զնած գյուղացիները հնա-  
րավորություն չունեյին ողտվելու վարկի համեմատաբար շահա-  
վետ պայմաններից պետական գյուղատնտեսական բանկում:  
Նրանք հարկադրված ելին փող պարտք վերցնել վաշխառուներից,  
ընկնելով պարտքային ստրկացման մեջ, վաշխառուներին վճա-

րելով 100, 200, և նույնիսկ ավելի տոկոսներ։ Նրանք թպրտում ենին վաշխառուների ճանկերում, ինչպես ճանձը սարդոստայնում։

Ահական բուրժուական հայտնի տնտեսագետ Գրաբակին 1936 թվականին հայտարարեց. «Այս տոկոսները, վոր գյուղացիներն այժմ վճարում են, պարագի մեջ խրվելով հող զնելիս, հաճախ նրանց վրա դնում են ուժից ե՛լ ավելի վեր բեռներ, քան յերբեմնի կոորդ լուծը ճորտատիրության ժամանակ»։

Նույնիսկ լավագույն, նախաճնաժամային ժամանակում—1926 և 1928 թվականների միջն,—լրացուցիչ հող զնած գյուղացիների դրակի մասն ի վիճակի չեր ընթացիկ մուծումները վճարելու։ Բանկերը, վաշխառուներն ու կարլածատերերը սկսել ելին խլել նրանցից հողը։ Բատկորում գյուղացիները հաճախ կորցնում ելին վոչ միայն լրացուցիչ գնված հողամասերը, այլև անցյալում իրենց պատկանած հողը։ Այդ առաջացել եր նրանից, վոր 1928 թվականից հետո հողի զները խիստ բնկել ելին։ Իսկ գյուղացիները պարտքերը վճարում ելին նախկին չափով և բացի դրանից նաև պարտքը ժամանակին վճարած չեն կամար աճած տոկոսները։

Վերջին հաշվով հողային «ռեֆորմ» անցկացնելու 19 տարվա ընթացքում հարյուր-հազարավոր գյուղացիներ բոլորովին քայլայի ին ու զրկվեցին հողից, և հողի սովոր ավելի շատ սաստկացավ, քան մինչև հողային «ռեֆորմ»։

Գյուղացիների հողի թալանը հոգուտ կուլակների պանական կառավարությունն անց եր կացնում նաև հողաշնարարության անվան տակ, առաջին հերթին շերտընդիջությունը (չերտոլուսակա) վոչնչացնելու պատրակով, վորը շատ մեծ եր Լեհաստանի գյուղացիական հողերում։

Գյուղացիներին խոստացվել եր լրացուցիչ հող տալ այն գեղագում, յեթե նրանք համաձայնվեն հողաշնարարություն անցկացնելուն։ Իսկ իրականում հաճախ կտրեցին նրանց սեփական հողը, վորովհետև շերտընդիջության լիկիդացիայի կապակցությամբ ճանապարհներ անցկացնելը տեղի յեր ունենում դիմացուակես չքայլության և միջակների հաշվին՝ նրանց հողերի միջով։ Լավագույն հողամասերն անցնում ելին կուլակներին, իսկ վատ հողը հասնում եր նրանց, ովքեր միջոցներ չունելին գաղթելու խոստորները, տեղափոխելու այստեղ բնակարանն ու տնտեսական շինությունները և պատշաճ ինվենտար ձեռք բերելու

համար։ Անդամ մնալով գյուղում, չքայլորական տնտեսությունները և միջակների մեծամասնությունն ի վիճակի չեր կրելու նոր հողամասերը մշակելի դարձնելու և նրանց վրա նորմալ ցանքաշրջանառությունը վերականգնելու ծախսերը։ Բացի այդ, նրանք վնասներ ելին կրում հողաշնարարական աշխատանքների առաջացրած՝ հողի ուժասպառ լինելուց և քայլայումից։ Հողաշնարարությունն ուղեկցվում եր նաև համայնական հողերի և արոտավայրերի բաժանումով։ Չքայլոր գյուղացին արգեն տեղ չուներ արածացնելու նաև վերջին կովը։

Կելցիի վոյեկողության 27 գյուղերում 555 տնտեսությունների հասուլի հետազոտության տվյալները ցույց տվին պարագի աճում 2—5 անգամ այն տնտեսություններում, վորտեղ լիկվիգացիայի յեր յենթարկվել շերտընդիջությունը։ Բացի այդ, նըշված տնտեսություններում տեղի ունեցավ նաև ձիերի, կովերի, խոզերի, ինչպես նաև տնտեսական շինությունների քանակի խիստ նվազում։

Նույնիսկ լեհական պաշտոնական մամուլը հարկադրված եր ընդունելու, վոր այդ հողաշնարարությունը գյուղի հետագա աղքատացման պատճառ դարձավ։

Ահա թե ինչու գյուղացիական չքայլորությունը և հաճախ միջակները դեմ ելին դուրս գալիս հողաշնարարությանը, հողաչափներին գյուղերից դուրս քշելով։ Մի շաբթ դեպքերում հողաշնարարությունը բոնի կերպով անցկացնելու համար իշխանությունները ստիպված ելին լինում համապատասխան ուայոններում ուսպմական դրություն մտցնել։

Գյուղացիներին կողոպտելու մյուս տեսակն այսպես կոչված սերմիտուտների վոչնչացումն եր։ Սերմիտուտներ—դա գյուղացիների վաղեմի իրավունքն ե՝ վորոշ տեսակ ողտվելու կալվածատիրական այն անտառներից ու մարգագետիններից, վորոնք հնում պատկանում ելին գյուղացիական համայնքին, բայց հետագայում դրանք դամթել ելին կալվածատիրերը։ Այս վաղեմի իրավունքի բոնի վոչնչացումը կատարվում եր ամենից հաճախ առանց վորեն փոխհատուցման։ սակայ դեպքերում գյուղացիներին զիջազնի ձեռվ տալիս ելին անտառը կտրելուց հետո մնացած շատ վատ, ավագոտ հողի խղճուկ կտորներ։ Այս բանը միայն ավելացնում եր անտառի և արոտավայրերի նկատմամբ գյուղացիների ունեցած կարիքը, և հողային սովոր նրանք զգում ելին ավելի սուր կերպով։

Հողային «ռեֆորմը» և հողաշինարարությունը լիկվիդացիա-  
յի չենթարկեցին գյուղացիական սակավահոգությունը: Այն, ընդ-  
հակառակը, ե՛լ ավելի մեծացավ: Միջակային և չքավորական  
տնտեսություններն ավելի եյին մասնատվում ու մանրանում:  
Գյուղացիական ընտանիքներում ընտանեկան բաժանությունները  
դարձան նշանակելիորեն ավելի հաճախակի, քան մինչև պատե-  
րազմն եր, վորովհետեւ ֆաշիզմի տիրապետության տարիներին  
առանձնապես ուժեղացած՝ յերկրի տնտեսական անկման պատճա-  
ռով գյուղացիական յերիտասարդությունը մեծ մասամբ տեղ չու-  
ներ վաստակ գտնելու: Բուն իսկ գյուղում, ըստ լեհական բուր-  
ժուական տնտեսագետների հաշվումների, կային միլիոնավոր  
այսպես կոչված «ավելորդ» մարդիկ: Լեհաստանում տնտեսու-  
թյունների հրեշտակոր մասնաման մասին ե վկայում այն փաս-  
տը, վոր 1921-ից մինչև 1936 թվականը տնտեսությունների թիվը  
Լեհաստանում ավելացավ 750 հազարով, ըստվորում նրանցից  
միայն 135 հազարն առաջ ե յեկել հողային «ռեֆորմի» և այլ մի-  
ջոցառումների հետեւանքով, իսկ ավելի քան 600 հազար տնտե-  
սությունները—ընտանեկան բաժանումների հետեւանքով:

Լեհաստանի աշխատավոր գյուղացիության հողադրկումն ու-  
ղղութեարացումը ընթանում եյին յոթմղոնանոց քայլերով:

## ԿԱՐԱՎԱԾԱՅԻՆ ՅԵՎ ԿՈՒԼԱԿՆԵՐԻՆ ՍՏՐԿԱՅՈՒԹ

Կարավատերերը լեհաստանում իրենց կարավաճքներում ող-  
արվում եյին բարբակների և սեղոնային բանվորների աշխատան-  
քից: Սակայն նրանք ստիպում եյին, վոր իրենց համար ստրկաց-  
նող պայմաններով աշխատեն նաև շրջակայքի գյուղացիները,  
ոգտվելով նրանց սակավահողությունից և անելանելի կարիքից:

Գյուղացին տեղ չուներ անսունն արածացնելու կամ ձմեռ-  
վան խոտի պաշար պահելու համար, և նա ստիպված եր լինում  
դիմել կարավատիրոջը: Մարդագետին վարձակալելու կամ կալ-  
վածատիրական արոտավայրում իր կովն արածացնելու իրավուն-  
քի համար գյուղացին և նրա ընտանիքը հարկադրված եյին հա-  
տուցել կարավատատիրոջ մոտ բազմաթիվ որեր աշխատելով: Լե-  
հաստանի բուն կենտրոնում, վարչավայի մոտ, կարավատերերը  
ամառ ժամանակ մեկ կով արածացնելու համար գյուղացուց  
վերցնում եյին 10 որվա աշխատավճարում: Խոպչիցիու գավառով  
բրոնիշել գյուղում դեռ մինչև ագրարային ճղնաժամի սաստի-

ցումը, 1928 թվականին, գլխավորապես արոտավայրի և վարձա-  
կալած հողամասերի համար գյուղացիների աշխատավճարած որե-  
րի քանակը հասնում եր 109-ի՝ մեկ տնտեսությանը: Արևմտյան  
Ռուկաբինայում, Գործողնեսկի գավառի Ունիժ գյուղում, մեկ կով  
մայիսից մինչև նոյեմբեր արածացնելու համար գյուղացիները  
կարվածատիրոջն աշխատավճարել են 35-ական որ:

Անսունների կերի պակասությունը գյուղացիներին ստիպում  
եր աշխատել ճակնդեղի վլուչերի համար: 1 մորդեն (մոտ 0,6  
հեկտար) տարածությունից ստացվելիք վլուչերի համար գյուղացի-  
ները Պողնանի վոյեկուլությունում պետք ե հավաքելին 2 մորդեն  
ճակնդեղ, իսկ Լյուբլինի վոյեկուլությունում՝ պետք ե հավաքե-  
յին և կրեյլին շաքարի գործարան:

Կարվածատիրական անստառից շինանյութ, վառելափայտ կամ  
պարզապես չորուկ ստանալու համար գյուղացին ամենուրեք աղ-  
քատիկ վարձով ձիու հետ մեկտեղ վարձվում եր անտառային  
աշխատանքների: Գյուղացիներն աշխատանքով եյին վճարում ան-  
տառում հատապտուղ հավաքելու իրավունքի համար, կարվածա-  
տիրական հորից ջուր հանելու համար, կարվածատիրական հո-  
ղով յերթեկելու համար և նույնիսկ կարվածատիրական միջնա-  
կով անցնելու համար:

Լեհաստանում խիստ զարգացած եր կիսրարությունը: Լե-  
հական ամենախոշոր կարվածատերերից մեկի, կոմս Զամոյսկու  
կարվածքներում մարդագետիների 95%-ը հավաքում եյին այն  
գյուղացիները, վորոնք մինչև ագրարային կրիզիսի սրումը դրս  
համար ստանում եյին հնձած խոտի  $\frac{1}{4}$  մասը, իսկ հետո—  
միայն  $\frac{1}{10}$ -ը: Լեհաստանի հարավային մասում, վաղովիցիկ գա-  
վառում, գյուղացիները գենես 1926 թվականին կարվածատիրա-  
կան հացը հավաքում եյին բերքի  $\frac{1}{16}$ -ը, 1929 թ.- $\frac{1}{18}$ -ը, իսկ  
1933 թվականից  $\frac{1}{20}$ -ը և ավելի պակաս ստանալով:

Այս ստրկացնող պայմանները հիշեցնում են ճորտատիրական  
իրավունքի ժամանակները: Բայց ստրկացումը պակաս չեր նաև  
այն ժամանակ, յերբ կարվածատերերը գյուղացիներին փողով  
եյին վճարում: «Յեթե,—զրում եր գյուղացիական կուսակցու-  
թյան որդան «Եազօղե»-ն, —այժմ յան ժամանակները համեմա-  
տենք ճորտատիրության վաղ ժամանակների հետ, ապա նախկին  
կոռը դգունանում ե այժմյան կոռի առջև: Ճիշտ ե, այսոր վոչ  
վորի զոռով չեն քշում աշխատելու աղայի համար: Սակայն ծայ-  
րահեղ կարիքը սակավահող գյուղացուն ստիպում ե աշխատել  
տիրոջ կարվածքում որական 75 գրոշ աղքատիկ վարձով»:

Սակավահող և հողազուրկ գյուղացիների շահագործումը աշխատավճարման և կիսրարության ողնությամբ լայնորեն կիրառում ելին նաև կուլակային տնտեսությունները։ Աշխատավճարումը խիստ տարածված եր Պողնանում, Պողլյաստյեյում և Բելստոնկի վոյեվոդությունում—այն ուայոններում, վորտեղ դերակշռում են կուլակային տնտեսությունները։ Կարտոֆիլի մի կտոր գաշտի կամ կացարանի համար կուլակը հողազուրկ գյուղացուն ստիպում եր հատուցել աշխատավճարումով։ Մակավ չեն այնպիսի գեղեցերը, յերբ պարտքերի համար չքավորը հարկադրված ե յեղել ստրկացնել վոչ միայն իրեն, այլ նույնիսկ իր փոքրահասակ յերեխաներին, նրանց աշխատանքի ուղարկելով կուլակ-վաշխառուի մոտ։

Կալվածատերերի կողմից վարելահողը մանր վարձակալության հանձնելը ընդհանուր առմամբ շատ ուժեղ չել տարածված։ Այն գեղեցում, յերբ այդպիսի վարձակալում տեղի ուներ, այն հաճախ անց եր կայցում աշխատավճարի պայմաններով։ Աշխատավճարումներ առանձնապես լայնորեն ելին կիրառվում կաթոլիկական, ունիթոռական և ուղղափառ յեկեղեցիներին պատկանող հողերի վրա։ Բերենք մի գյուղացու բնորոշ նամակը, տպագրված նույն այդ «Եվազունե» լրագրում։

«Մեր ծխում քսենձն ունի 30 մորգեն հող, վորոնցից միքանի մորգեն վարձակալում և չքավոր գյուղացիների մի խումբ։ 1929/30 թվականին նրանք քսենձի հետ պայմանավորվեցին վճարել նրան 60-ական զլոտի և 8-ական որ աշխատավճարում յուրաքանչյուր մորգենի համար։ Յուրաքանչյուր աշխատավճարած որ գնում եր 2 զլոտի 50 գրոշի տեղ՝ հնձի ժամանակ և 5 զլոտուտեղ՝ խոտհարելու ժամանակ։ Հետո, յերբ գյուղատնտեսական բոլոր մթերքների գները շատ խիստ իջան, այդ «քրիստոսի ծառան» չցանկացավ իջեցնել վարձավճարը, բայց իջեցրեց աշխատանքի վարձը և խոտհարելու համար սկսեց հաշվել 3 զլոտի, իսկ չնձի համար՝ 1,5 զլոտի որական։

Ճորտատիրական իրավունքի ժամանակներում 30 մորգենի համար գյուղացին կոռ աշխատավճարում եր շարաթական և որդիա, կամ տարեկան 312 որդիա չափով։ Իսկ աշխատահատուցման քանի որ և հարկ լինում վճարել քսենձին այժմ հենց նույն 30 մորգենի համար։

Դրամական վարձավճարն աշխատանքային որերով և աշխատավճարումներով հաշվելով կազմում ե միասին 1440 որ։ Այլ

խոսքով, 5 հոգի պետք ե ամբողջ տարին աշխատելին 30 մորգեն հողի տարեկան վարձակալման համար։ Ինչո՞վ կոռ չե այս։ Վաղ ժամանակներում աղայի կառավարչի մտքակը ժողովրդին քշում եր կոռի, իսկ այժմ նրան քշում են աղքատությունն ու կապիտալիստական շահագործումը»։

Իր արտօնյալ դրությունից ոգտվելով, հոգեորականությունը գյուղացիներին ստիպում եր աշխատել իրեն համար նաև յեկեղեցական արարողությունները կատարելու համար։ «Մեր ծխում, —հաղորդում է լեհական մի գյուղացի վերը հիշված լրագրին ուղղված նամակի մեջ, —մեռավ մի տնտեսատեր։ Թաղման համար վճարելու դիմաց կինը հարկադրված յեղավ համաձայնին քսենձի ոգտին աշխատավճարելու 20 որ։ Յեվ միթե միայն նա։ Մեզ մոտ շատ կան այնպիսիները, վորոնք, յերբ զահնձի ժամանակը, պետք ե աշխատավճարեն հարսանիքների ու թաղումների համար»։

Կոռի այս ժառանգության հետ մեկտեղ լեհաստանում կային ճորտատիրության այլ մնացորդներ ևս։ Մատնանշենք թեկող և շերտընդմիջությունը, վորը սաստկացել է հաջորդական շատ բաժանումներով։ Հարավային վոյեվոդություններում մեկ տնտեսության ընկուամ և միջին հաշվով 37 հողակտոր, և հաճախ ե պատահում, վոր մեկ տնտեսությունը կազմված և 100 շատ փոքր հողակտորներից, վորոնք իրարից հեռու յեն միքանի կիլոմետրերով։ Շերտընդմիջությունն ուժեղացնում եր գյուղացու կախումը կալվածատերերից կամ կուլակներից, վորովհետեւ շատ հաճախ նա չեր կարողանում հասնել իր հողամասին այլ կերպ, քան նրանց հողերի վրայով։ Իսկ դրա համար գյուղացին հարկադրված եր հարկ տալ աշխատավճարման ձևով։ Բացի այդ, շերտընդմիջությունն առաջացնում եր ավելորդ ուղեորդություններ, գյուղացու ընտանիքի ուժի և ժամանակի կորուստ։

## ԱՏՐԿԱՑՈՒՄՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՃՆՇՈՒՄԸ ԱՐԵՎՄՏՑԱՆ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ ՅԵՎ ԱՐԵՎՄՏՑԱՆ ԲԵԼՈՒՌԻՄԻՄՈՒՄ

Ճորտատիրական կարգերի մնացորդներն առանձնապես ուժեղ ելին Արևմտյան Ուկրաինայում և Արևմտյան Բելոռուսիայում, վորտեղ գրանք զուգակցվում ելին ուկրաինական և բելոռուսական աշխատավորների ազգային անտանելի ճնշման հետ։ Լեհա-

կան կապիտալիստներն ու կարվածատերերը Արևմտյան Ռէկրաբնան և Արևմտյան Բելոռուսիան վերածել ելին իրենց գաղութների, իսկ Ռէկրաբնական և բելոռուսական բանլորներին ու գյուղացիներին դիտում ելին վրալես իրենց ստրուկներ։ Լեհական իմպերիալիզմը վարում եր նույնիսկ այն թույլ դարձացած արդյունաբերությունը վոչչացնելու քաղաքականություն, վորայտեղ կար առաջ։ 1909 թվականին Արևմտյան Բելոռուսիայում կար 9 ֆաբրիկա՝ թվով 100-ից ավելի բանլորով, իսկ 1928 թվականին այնտեղ մնացել եր ընդամենը 2 այդպիսի ֆաբրիկա։ Արդյունաբերության խիստ կրծատում եր տեղի ունեցել նաև Արևմտյան Ռէկրաբնայում։ Դրա հետ մեկտեղ լեհական կապիտալիստները հափշտակում ելին Արևմտյան Ռէկրաբնայի և Արևմտյան Բելոռուսիայի բնական հարստությունները—նավթը, փայտը, կալիումը և այլն։

Արևմտյան Ռէկրաբնայի և Արևմտյան Բելոռուսիայի վոչմիայն արդյունաբերությունը, այլև գյուղատնտեսությունը աչքի յեր ընկնում ծայրահեղ հետամնացությամբ, այստեղ ամենացածր բերքերն ելին։ Գյուղացիներն այստեղ ունեն ամենանվազած անսասուն, գութան սակավ ե հանդիպում, և ամբողջ ինվենտարը սովորաբար կազմում ե փայտե արորը։

Արևմտյան Ռէկրաբնայում կարվածատերերի, մեծ մասամբ լեհական պաների ճեռքին եր գտնվում միջին հաշվով ամբողջ հողի մոտ 88%-ը։ Սատնիսակովի վոյեվոդությունում լեհական 630 պան տիրում ելին ամբողջ հողի տարածության կեսից ավելին, մինչեւ 200 հազար և ավելի չքավորական տնտեսությունների տիրությունները մեկ քառորդից պակաս ելին։ Արևմտյան Բելոռուսիայում կարվածատերեական հողատիրությունը դրավում եր ամբողջ հողի մոտ կեսը։ Պոլեսյեյում 1 հազ. կարվածատերերի ճեռքին կենտրոնացված եր ամբողջ հողային տարածության  $\frac{2}{3}$ -ը, իսկ 70 հազ. բելոռուսական չքավոր գյուղացիներին եր այդ հողի  $\frac{1}{16}$  մասից պակասը։

Իրենց հոկայական «ծայրամասային» կարվածքներում կարվածատերերը գոփողական տնտեսություն ելին վարում։ Այդ կարվածքներում չկար վո'չ տրակտոր, վո'չ արդի կատարելազորքած գյուղատնտեսական մեքենաներ և դործիքներ, վորովհետեւ կարվածատերոջն ավելի շահավետ եր հնարավորին չափ մեծ քանակությամբ գործադրել վրակայքի գյուղացիների ծայրահեղ էժան աշխատանքը։ Կարվածատերերը շատ քիչ բարակ ելին

շարձում, ոգտագործելով գլխավորապես շրջակայքի գյուղացիների—հենց այդ կարվածատերերի նախկին ճորտերի թոռների և ծոռների աշխատանքը։ Կարվածատերական հողը հաճախ մշակվում եր գյուղացիական ինվենտարով։ Գյուղատնտեսական աշխատանքների վարձն այստեղ շատ ավելի ցածր եր, քան բուն լեհաստանում։

Գյուղատնտեսական մշտական բանվորի աշխատավարձն Արևմտյան Ռէկրաբնայում և Արևմտյան Բելոռուսիայում սովորաբար 22%-ով, իսկ արտաժամյա աշխատանքների վարձը 60%-ով ավելի պակաս եր, քան բուն լեհաստանում։ կարտոֆիլ ցաներու համար նրա ստացած հողամասը պակաս ե 15 արով, իսկ վառելանյութ նրան բաց եր թողնվում 40%-ով պակաս։ Ինքը աշխատանքն ել ավելի մեծ չափով կրում եր կոռի հետքեր։ Արևմտյան Բելոռուսիայում, որինակ, բարակ հոր մահվանից հետո յերեխաները պիտք ե նրա փոխարեն աշխատելին կարվածատիրոջ մոտ՝ մինչև վարձվելու ժամկետը վերջանալը։ Արևմտյան Բելոռուսիայում շրջակայքի գյուղացիների սեղոնային աշխատանքը նշանակալից մասով վճարվում եր բնաբերքով։ Վարձակալության ստացած հողակտորի համար գյուղացին հարկադրված եր կարվածատիրոջը հատուցել աշխատավճարումով կամ բերքի մի մասով։ Յեթե մնացած լեհաստանում կարվածատիրոջը տալիս ելին բերքի կեսը (կիսրաբություն), ապա արեւելյան ծայրամասերում գյուղացին հարկադրված եր տալ բերքի  $\frac{2}{3}$ -ից վոչ պակաս։ Բարանովիչի, կոսովի և Ստոլցի գավառներում կարվածատերերը վարձականերից վերցնում ելին ստացված բերքի 60—65%-ը նույնիսկ այն ժամանակ, յերբ վոչ մի մասնակցություն չելին ունենում հողը մշակելու, ցանելու և հնձելու ծախսերին։ Կարվածատերերը գործադրում ելին ձմեռը կանխավճարներ և փոխատվություններ տալու և գարնանն ու ամառը պարտադիր կերպով աշխատավճարելու սիստեմ։

Արևմտյան Ռէկրաբնայի մի շարք շրջաններում չքավոր գյուղացիներն աշխատավճարում ելին 15—20-ական որ տարեկան, ընդլուրում գործի ամենայեռուն ժամանակ։ Հաճախ կարելի յեր հանդիպել այնպիսի գյուղացիական ընտանիքների, վորոնք տարվա ընթացքում աշխատավճարում ելին 50—60-ական որ։

Բերքով վճարելու պարմաներին այստեղ նույնպես ավելի ծանր ելին, քան բուն լեհաստանում։ Պողոլիայում կարվածքների համարյա ամբողջ հացը հալավում եր բնաբերքով վճարելու

պայմաններով, ըստվորում կալվածատերերը գյուղացիների հետ կիսրարությամբ հավաքելու պայմանների մասին պայմանավորվում եյին սովորաբար ձմեռը, յերբ չեր կարելի նախատեսել լինելիք բերքի չափը, և յերբ գյուղացիները գտնվում եյին առանձնապես աղետալի վիճակում: Զմեռային վարձումը—վարձման այդ բացառապես ստրկացնող ձեւ—միացած վաշխառության հետ՝ այստեղ ընդհանրապես չափ ուժեղ եր տարածված: Գյուղացիական չքավորությունը հարկադրված եր համաձայնվելու ուղած պայմաններին, միայն թե անսունների կերի, հացահատկի և այլնի կանխավճար ստանաբ:

Չնայած վոր կալվածատերոջ վորպես դատավորի և պետի իշխանությունը, ինչպէս ճորտատիրական իրավունքի ժամանակ եր, ձևականորեն վերացված եր, սակայն արևմտառելրաբնական ու արևմտարելուուսական գյուղում կալվածատերն իսկական փոքրիկ ցար եր: Կալվածատերոջից, տերտերից և վոստիկանական չինովնիկից կազմված վարչական «յերրորդությունը» կողպատում և քաղաքականապես ճնշում եր գյուղացուն: Լեհական դավթիչները խեղզում եյին ուկրաինական և բելոռուսական աղդային կուլտուրայի ամենափոքր արտահայտությունը: Ուկրաինական և բելոռուսական դպրոցները փակվում եյին: 1918 թվականին Արևմտյան Ուկրաինայում կար 3662 ուկրաինական ժողովրդական դպրոց, իսկ 1935 թվականին մնացել եր միայն 543: Բայց այդ դպրոցներն ել մեծ մասամբ ուկրաինական եյին կոչվում միայն անունով, վորովհետեւ դասավանդումը դրահցում տարվում եր լեհական լեզվով, իսկ ուկրաինական լեզուն դասավանդվում եր վորպես յերկրորդական առարկաներից մեկը: Այդ դպրոցների նպատակն եր ուկրաինական բնակչության լեհացումը: Բայտ 1935 թվականի տվյալների, այսպէս կոչված Արևելյան Գալիցիայում մայրենի լեզվով սովորում եր ուկրաինացի յերեխաների միայն 5%-ը, իսկ Վոլինում, Պոլեսյեյում և Խոլմչչենյում—0,02%-ը: Մեծ քանակությամբ յերեխաներ ընդհանրապես վոչ մի դպրոց չեյին կարող հաճախել: 182 միջնակարգ դըպրոցների ընդհանուր թվից Արևմտյան Ուկրաինայում 1935 թվականին կար միայն 5 ուկրաինական դիմնապիտ:

Լեհաստանում 8 միլիոն ուկրաինական բնակչությունը չուներ ուկրաինական վոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն: Լվովի համալսարանի ուկրաինական ամբիոնները, վորոնք գոյություն ունեյին լվովը Ավստրո-Հունգարիայի կազմի

մեջ յեղած ժամանակաշրջանում, իմակվեցին, ըստվորում այդ համալսարանն ընդհանրապես ընդունվում եյին աննշան քանակությամբ ուկրաինացիներ միայն:

Ե'լ ավելի կոպիտ կերպով եր կատարվում բելոռուս բնակչության լեհացումը: Արևմտյան բելոռուսիայում 1935 թվականին հաշվում եր ընդամենը 16 բելոռուսական ժողովրդական դպրոց և մեկ միջնակարգ դպրոց: Զկային բելոռուսական ուսուցչական սեմինարիաներ և բարձրագույն ուսումնական հաստատություններ: Բելոռուսական ժողովրդական դպրոցներում 1935 թվականին սովորում եր ընդամենը 2 հազար յերեխա, յերբ յերեք միլիոն բելոռուսական բնակչություն կար: Պոլեսյեյի վորովդությունում, վորտեղ լեհերեզ բնակչության 10%-ից պակաս են, լեհական դպրոցները կազմում եյին բոլոր դպրոցների 94%-ը, իսկ բելոռուսականները—1%-ը:

Լեհական ֆաշիզմի հարձակումը ուկրաինական և բելոռուսական ազգային կուլտուրայի վրա վերջին տարիներին ե'լ ավելի ուժեղացավ: Փակվում եյին նույնիսկ՝ ուկրաինական և բելոռուսական այն փոքրաթիվ կուլտուրական հիմնարկները, վորոնք մինչ այդ անվնաս եյին մնացել: Զարմանալի չե, վոր Արևմտյան Ուկրաինայում բնակչության 50%-ը (ներառյալ նաև քաղաքայինը) անդրագետ ե, իսկ կանանց մեջ անդրագետները համարյա 76% են: Նովոգրուդեկի լոյեվոդությունում, Արևմտյան բելոռուսիայում, անդրագետները կազմում են հասակավոր բնակչության մոտ 60%-ը, իսկ Պոլեսյեյի վոյեվոդությունում—70%-ը:

Հալածանքի եյին յենթարկվում նաև արևմտառելրաբնական ու արևմտարելուուսական կոոպերատիվները և տնտեսական այլ ընկերություններ: Ուկրաինական և բելոռուսական աշխատավորներին դուրս եյին անում պետական ծառայությունից, դուրս եյին անում յերկաթուղիների վրա ու պետական ֆարբիկաներում ունեցած աշխատանքից և նրանց փոխարինում եյին լեհ ազգության մարդկանցով: Ուկրաինացիներին ու բելոռուսներին թույլ չեյին տալիս նույնիսկ վորոստային ավագի կամ տանուտերի պաշտօններ կատարելու:

Շահագործմանը և ազգային ստրկացմանը դիմադրելու ամեն մի փորձ դաժանորեն ճնշվում եր լեհական զավթիչների կողմից: Պատժիչ արշավախմբերը խոշտանդում և սպանում եյին տղամարդկանց և կանանց, ծերերին ու յերեխաներին: Բնակչության զլխովին ծեծը, անորեն ձերբակալություններ, աղջիկների և կա-

նանց վրա գործած ծաղրանք ու բռնաբարություններ, մասսայական գնդակահարություններ—այս եր սանձարձակ պաների միակ պատասխանը ուկայինական և բելոռուսական գյուղացիների որինական պահանջներին:

## ԳՅՈՒՂԱՑՈՒՆ ԿՈՂՈՊՏՈՒՄ ԵՅԻՆ ՖԱԲՐԻԿԱՆՏՆԵՐՆ ՈՒ ԱՌԵՎՏՐԱԿԱՆՆԵՐԻ

Շահագործման կիսաճորտատիբական յեղանակների հետ մեկտեղ լեհաստանում առանձնապես մեծ եր գյուղացիության կապիտալիստական շահագործումը:

Լեհաստանն ընդհանուր առմամբ հետամնաց յերկիր եր՝ մանր ձեռնարկությունների և արհեստավորների շատ մեծ թվով: Սակայն արդյունաբերության մի շարք ճյուղերում—ածխի, նավթի, մետալուրգիական և միքանի այլ ճյուղերում—արտադրության գլխավոր մասսան կենարունացված եր միքանի տասնյակ խոշոր ձեռնարկություններում: Առանձին ձեռնարկությունների կապիտալիները յերբան հասնում եյին միքանի հարյուր միլիոն պատիի: Այդպիսի ձեռնարկություններում աշխատում եյին հազարավոր վարձու բանվորներ:

Յերբ մի խումբ ամենախոշոր կապիտալիստներ իրենց ձեռքումն են պահում տվյալ ճյուղի պղունքների արտադրության առյուծի բաժինը, ապա այդ խումբն այնտեղ ձեռք ե բերում բացառիկ դրություն, վորչ նրան թույլ ե տալիս շուկայի վզին փաթեթելու իր պայմանները: Մանր և միջակ «տնտեսատերերը» չեն կարողանում դիմանալ խոշոր ձեռնարկատերերի կոնկորենցիային և լիովին յենթարկվում են նրանց: Բացի այլ, խոշոր ձեռնարկատերը սերտորեն կապված են բանկերի հետ, վորոնք նրանց միջոցներ են հայթայթում արտադրությունը լայնացնելու համար: Վերջապես, միքանի տասնյակ ամենախոշոր ձեռնարկատերերի համար ավելի հեշտ ե միմյանց հետ պայմանավորվել սպառզին և ավելի մանր ձեռնարկատերերին կողոպտելու ճանապարհով շահույթները մեծացնելու մասին՝ իրենց արտադրանքի վրա մենաշնորհային բարձր գներ սահմանելու, վաճառահանման շուկաները բաժանելու, հումքի աղբյուրները զավթելու և այլնի ողնությամբ: Այդ նպատակով ձեռնարկատերերը միմյանց հետ համաձայնություն եյին կնքում և ստեղծում եյին հատուկ միավորումներ, վորոնք կոչվում եյին կարտելներ, սինդիկատներ և այլն:

1934 թվականի վերջերին լեհաստանում հաշվում եյին կապիտալիստների 216 այդպիսի միավորումներ: Գործելով իշահ մի բուռ խոչոր ձեռնարկատերերի, կառավարությունը վերջին տարիներին ամեն կերպ ոգնում եր նրանց կարտելներ ու սինդիկատներ ստեղծելու: Նա մանր կապիտալիստներին ել եր հարկադրում կարտելները մտնել, դրանով իսկ հեշտացնելով, վոր խոչոր ձեռնարկատերերը նրանց խեղդեն: Լեհական պետությունը և շատ խոչոր գործիչներ ու չփոփնիկներ իրենք եյին մասնակցում այս կամ այն մոնոպոլիաներին: Բացի այլ, պետությունը մոնոպոլիա մատրեց առաջին անհրաժեշտության մի շարք ապրանքների վրա:

Բոլոր ապրանքների համար գյուղացին հարկադրված եր յեռապատիկ թանգ վճարել: Գյուղացու համար կարեռագույն արդյունաբերական ապրանքների—յերկաթի և մի շարք յերկաթե ու պղղպատի շինվածքների, արհեստական պարարտանյութերի, նավթի, ածխի, լուցկու, աղի, շաքարի, թութունի, սպիրտի և այլնի վրա սահմանվեցին բացառիկ կերպով բարձր մոնոպոլ գներ: Այն թվերի համեմատությունը, վորոնցով լեհական ֆաբրիկանաները 1936 թվականին վաճառում եյին իրենց ապրանքները յերկրի ներսում և արտասահմանում, ցույց ե տալիս, վոր լեհաստանի աշխատավոր բնակչության կողոպուտը անասելի չերերի յեր հասնում:

Մեծավաճառքի դինը	Վաճառելու դինը
ներքին շուկայում	արտագին շուկայում
Ածխի (1 տոննի համար) . . . . .	25 դուսի
Սպիրտ (1 լիտրի համար) . . . . .	50 դրու
Կերոսին (100 լիտրի համար) . . . . .	24,5 դուսի
	8,6 դրու

Այն, ինչ լեհական կապիտալիստները կորցնում եյին արտաքին շուկայում, այնտեղ իրենց ապրանքները վաճառելով ցածր գներով, նրանք ավելիով ծածկում եյին, իրենց հատուցելով ներքին շուկայի բարձր գներով: Խոչոր կապիտալի թալանչիական քաղաքականությունը տանում եր գեպի բնակչության լայն խավերի աղքատացում և ջլատում եր առանց այլ ել հետամնաց յերկրի տնտեսությունը:

Լեհաստանում ածխի սպառումը միջին հաշվով մեկ բնակչին 5 անգամ ավելի պակաս եր, քան, որինակ, բելգիայում: Նավթի և յերկաթի սպառումը միքանի անգամ ավելի պակաս եր, քան Արևմտյան Յելլոպաշյում: Նույնը պետք ե ասել շաքարի, ծխախոտի և այլ մթերքների մասին: Լեհական գյուղացիները հար-

կադրված եյին չափագանց բարձր գներով արդյունաբերական ապրանքներ գնել և միևնույն ժամանակ չափագանց եժան վաճառել իրենց մթերքները։ Իրենց տիրապետող դրությունից ոգտվելով, խոշոր ֆաբրիկանոների և առևտրականների միավորումները ցածր մակարդակի վրա եյին պահում գյուղացիներից իրենց զնած գյուղատնտեսական հումքի զները։ Դյուղացիներն ի վիճակի չեյին պայքարելու կապիտալիստների զորեղ միավորումների գեմ, վորոնք թելադրում եյին վուշի, ծխախոտի, չափարի ճակնդեղի և հումքի այլ տեսակների զները, ինչպես նաև դրանք ընդունելու պայմանները։

Բերենք մի քաղվածք «Պոլյսկի քրոնիկա» կրօնական համարակալված՝ Արևմտյան Ռէկրախնայի Տարնոպոլի վոյնիվորության մի մասը ծխախոտապործի նամակից։ «Տարվա յերեք քառորդն ստիպված ենք չարաչար աշխատել ծխախոտ մշակելու վրա, միքիչ փող ստանալու հուսով։ Մինչեւ այստեղ ել են քեզ խարում։ Հանձնում ես առաջին տեսակի ծխախոտ, իսկ ընդունողից լսում ես միայն՝ «Յերբորդ»։ Այդ քիչ եւ—«Չորրորդ», հինգերո՞րդ տեսակի... Խոսա՞ն եւ—կարող ես թաղել»։ Խեղճ ծխախոտապործն ուզում ե վշտից գոռալ, բայց նա ինքն ել չգիտե, թե ինչ գոռա։ Մնում ե վոր ասես. «Լավ ե դեռ, վոր հենց ինձ չեն թալում»։

Գյուղացիները տնքում եյին թանգությունից։ 1933 և 1934 թվականներին սոցիալական եկոնոմիկայի լեհական պետության ինստիտուտի հավաքած՝ գյուղացիների նամակների մեջ նրանք սուր ատելություն են արտահայտել զեսլի գյուղացուց յոթ կաշի մաշկող կապիտալիստները։ Լոձի վոյեվոդության լենչիցիկ գովառում 16 մորգեն սննդեսության տեր միջակ մի գյուղացի գանգատվելով զների կողոպտչական քաղաքականության վրա, գրում եր. «Այժմ, յերբ լեհաստանում առկա յի մոտ 200 կարսել, գյուղատնտեսությունը բարեկալման վոչ մի ճանապարհ չունի»։

Նույնիսկ «Պոլյսկա գոսպոդարչա» ռեակցիոն ժուռնալը (1935 թ. № 12) հարկադրված եր ընդունելու, վոր «կարտելներն ու սինդիկատները ատելի յեն գյուղացիներին»։

1929 թվականի ճգնաժամի ժամանակականից գյուղացիների շահագործումը կապիտալիստների կողմից դարձել եր ե՛լ ավելի դաժան, քան առաջ։ Մոնոպոլիսմերը բարձր մակարդակի վրա եյին պահում գյուղացու համար բոլոր կարեորագույն արդյունաբերական ապրանքների զները։ Ճգնաժամի ժամանակաշրջանի

ընթացքում այդ ապրանքների զների մակարդակը համարյա չեփոխվել։ Մինչդեռ խոշոր առևտրականների վաճառած գյուղատնտեսական մթերքների զները 1928 թվականի համեմատությամբ ընկել են 3 անգամ, գյուղացիների վաճառած մթերքների զներն ընկել են 4—5 և ավելի անգամ։

Նույնիսկ բուրժուատական լեհական մամուլում շատ անգամ են նշվել գեղագիր, յերբ գյուղացին 1931 և 1932 թվականներին հարկադրված եր կովը կամ ձին ծախել 10—15 զլոտիով, մինչդեռ միքանի տարի առաջ նա ինքը ձիու համար վճարում եր 420—450, իսկ կովի համար—500—550 զլոտի։ Ամենուրեք այն գյուղացիները, վորոնք 10—20 կիլոմետր յեկել եյին շուկա յուղով, ձվերով, ճաներով, այս ամենը տալիս եյին միքանի գրոշով։ Ամենահամարական առաջնական տարի առաջ նա ինքը ձիու համար գյուղացին տալիս եր 3—5 անգամ ավելի մթերքներ, քան ճգնաժամից առաջ։

Դատելով նույնիսկ բացահայտորեն շատ պակասեցված կտորավարական տվյալներով, գութան զներու համար 1927/28 թվականին գյուղացին պետք է ծախեր 100 կիլոգրամ հաճար, իսկ միքանի տարի հետո հենց նույն գութանի համար նա արդեն պետք է տար 271 կիլոգրամ հաճարի արժեքը։

Ե՛լ ավելի վողրանի յի բանը, յեթե մեկ գութանի գինն արտահայտենք խոզի մսի կիլոգրամներով, առաջ այն համապատասխանում եր 20 կիլոգրամի, իսկ այնուհետեւ—72 կիլոգրամի։

10 կիլոգրամ աղի գինը, արտահայտված հաճարի կիլոգրամներով, հենց այդ տարիներին աճել ե 8-ից մինչև 28 կիլոգրամ, այսինքն՝ 3,5 անգամ։ 10 լիտր նավթի գինը—13-ից մինչև 27 կիլոգրամ հաճար, —ավելի քան 2 անգամ։

10 մետր բամբակի գործվածքի համար գյուղացին մինչև ճգնաժամը 53 կիլոգրամ հաճարի վաճառքից ստացածն եր վճարում, իսկ 1935 թվականին—արդեն 98 կիլոգրամին։

Վերջին տարիների կրկնող անբերությանը չնայած, արդյունաբերական և գյուղատնտեսական ապրանքների զների մակարդակի միջև յեղած՝ գյուղացիների համար քայլքայիշ տարրերությունը լեհաստանում մնում եր զգալիորեն ավելի բարձր, քան արևմտայիշուղական յերկրների մեծ մասում։ Հողագործության նախկին լեհական մինչսար Պոնյատովսկին սեյմում 1937 թվականին հայտարարել ե, վոր հողագործական մթերքների հենց միևնույն քանակության հասույթով լեհական գյուղացին կարող

Հ ձեռք բերել միքանի անգամ ավելի պակաս քանակությամբ շարքար, կերպարին, նազիթ և այլն, քան Անդլիայի, Ֆրանսիացի և ուրիշ յերկրների գյուղացիները: 1937/38 թվականին տեղի ունեցավ աղբարային ճգնաժամի մի նոր խիստ սրում: Չնայած ամենաառժեղ անբերությանը, այն գները, վորով գյուղացիները հարկադրված ելին վաճառելու հացահատիկը, նույնիսկ ըստ կառավարական հաղորդումների, մեկ տարում ընկան 20%-ով: Իրականում հացի գինն ընկել եր ավելի մեծ չափով: 1938 թվականի բերքահավաքը բերեց հացահատիկի գների հետագա խիստ իջնում: Շարունակում ելին ընկնել նաև գյուղացիական տնաեսության մյուս մթերքների—անսառունի, յուղի և այլնի գները:

Հացահատիկի առևտրի մեջ անբաժանելիորեն տիրապետում ելին խոչոր հացառականները և կալվածատիրական սինդիկատները, վորոնց պանական կառավարությունն ուժում եր բարձրացնելու հացի գինը ներքին շուկայում և հավելավճար եր տալիս այն ավելի ցածր գներին, վոր նրանք ստանում ելին համաշխարհային շուկայում հացը վաճառելուց: Այսպիսի ճանապարհով աշխատավոր ժողովրդի գրավանից հոգուտ առևտրականների, կալվածատերերի ու կուլակների գուրս ելին քաշում հարյուր միլիոնավոր զլոտի: Բնակչության չունեսոր խավերի հաշին հարստանալով, հացառականները և կալվածատիրական սինդիկատներն իրենք միևնույն ժամանակ հացահատիկի համար գյուղացիներին չափաղանց ցածր գներ ելին վճարում:

Լեհաստանում ձվի առևտրի ասպարեզում վճռական դերը պատկանում եր արտասահման ձու արտահաններով զրագվող խոչը առևտրականներին: Այդ խոչոր առևտրականների շահերի համար կառավարությունը հրատարակել եր առևտրի այդ ճյուղը կանոնավորող մի շարք պարտադիր կանոններ: Նույնիսկ բուրժուական տնաեսագետ Տենենբառումը ստիպված եր ընդունելու, վոր «այդ կանոնները արտանություն ստեղծեցին խոչը առևտրական կաղմակերպությունների համար, մանր առևտրականներին ավելի ևս զրկելով ձվերի արտահանումով զրագվութու հնարավորությունից»: Խոչոր առևտրականները զավթել ելին ձվի ամբողջ շուկան: Նրանք իրար հետ համաձայնության ելին յեկել և մթերման շրջանները բաժանել այնպես, վոր գյուղացին հարկադրված եր ծախելու միայն մեկ խոչոր մթերողի: 1932 թվականին Լյուբլինի և Վոլինի վոյենկողությունների ձվի արտադրանորդների միության նախագահը մամուլում անկեղծորեն պար-

ծենում եր, վոր իրեն հաջողվել ե գյուղացիությանը լիակատար կախման մեջ գնել խոչոր արտահանորդից: Զվի գների ասպարեզում տիրում եր առևտրականների ամենալիակատար կամացականություն: Ուղարկելով այն բանից, վոր գյուղացիների վաճառական հարացանդով սահմանված բարձր պահանջներին, արտահանորդը գյուղացիներին վճարում եր բացառիկ ցածր գներ:

Գյուղացիների համար առանձնապես ծանր հետևանքներ ունեցավ 1928 թվականին խոզերի և յեղջերավլոր անսառունների արտահանորդների սինդիկատ ստեղծելը, վորը հենց միանդամից խիստ իջեցրեց ընդունման գները:

Գյուղացիներին ամեն կերպ խարող և կողոպտող բարձաթիվ հավաքագնորդներն ել մեծ չափիք ելին ներկայացնում գյուղի համար:

Գյուղացիներին խարում և կողոպտում եր նաև կուլակային կոոպերացիան: «Կոոպերացիան պահպանվում ե գյուղացիական գժրախտությամբ», —ասում ելին գյուղացիները լեհաստանում: Տարնոպոլի վոյենկողության բուչացիկի գավառի՝ 6 մորգեն հողի տեր մի գյուղացի գրում եր. «Արդեն մեզանից շատերն են համոզվել, թե ինչ կոոպերացիա ունենք: Մենք հանձնում ենք կաթ, խոկ այստեղ քաշում են սերը և վերադարձնում յերեսը քաշած կաթը, մեզ վճարելով 7—8 գրոշ (մոտ 1,5 կոպեկ). մեկ լիտր կաթից սոսացված սերի համար: Կարծ ժամանակի ընթացքում կոոպերացիան մեզնից քամեց ալելի քան 9 հազար զլոտի: Մենք վարժվել ենք չոր ուտելիքի և պատի, վորովհետև կարիքն սոխում ե վերջին կաթը տանել կաթի մթերման կայանը»:

Յեվ այնուամենայնիվ, չնայած վոր լեհաստանի գյուղացին հացահատիկը, միսը, յուղն ու ձուն ծախում եր չնչին գնով, քաղաքային սպառողն այդ ավրանքներին վճարում եր բարձր գներ:

Կապիտալիստներն ոգտագործեցին գյուղատնտեսական ճգնաժամը, վորը լեհաստանում տեսք ամելի քան 10 տարի, վորպեսզի պակասեցնեն գյուղացու բաժինը գյուղատնտեսական մթերքների համար քաղաքային սպառողի վճարած զնի մեջ: Այսպես, նույնիսկ ըստ կառավարական տվյալների, հաճարի հացի մանրածախի զնի մեջ գների մեջ գյուղացու բաժինը ճգնաժամի տարիներին ընկալ 2/5-ով, խոկ խոզի մոխ մանրածախի զնի մեջ—1/4-ով: Իրականում այդ անկումն ել ավելի զգալի յեր:

Հաղորդեզով այս փաստերը, ուազմական մինիստրության

«Польска збройна» լրագիրը մատնանշում եր. «Ամենաբնորոշն այն է, վոր քանի ավելի ուժգին են ընկնում դյուզատնտեսական մթերքների գները, միաժամանակ այնքան ավելի յե պակասում նույնպես դյուզացուն ընկնող բաժինը»:

### ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

Հեհաստանի դյուզացիության բազմամիլիոն մասսաները կապիտալիստների ստրկության մէջ եյին ընկած նաև իրենց հոկայական պարտքի հետևանքով: Գյուզատնտեսության ընդհանուր պարտքը առ 1935 թվականը կազմում եր վոչ պակաս 7 միլիարդ զլոտիից: Բայց դյուզատնտեսության լինական պետական ինստիտուտի ավալների, վորը, սակայն, հաշվի յե առել դյուզացիական պարտքերի մեկ մասը միայն, 2-ից մինչև 50 հեկտար տարածություն ունեցող տնտեսությունների պարտքը արդեն 1926 թվականին հավասարվում եր միջին հաշվով նրանց տարեկան մաքուր յեկամտին: 1929 թվականին աղբարային ճղնաժամը սրվելուց հետո այդ պարտքն աճեց ավելի քան 2,5 անդամ, իսկ յեկամուտը խիստ իջավ: Դրա հետեանքով դյուզացիական տնտեսության այդ յեկամուտն արդեն չեր կարող բավականացնել նույնիսկ միայն պարտքի տոկոսները վճարելուն: Պարտքն սկսեց հրեշտական արագությամբ միծանալ նաև այն դեպքերում, յերբ դյուզացին այլևս նոր գումարներ պարտք չեր վերցնում: 1931/32 թվականին դյուզացիական տնտեսություններում մեկ հեկտարին ընկնում եր արդեն 384 զլոտի պարտք, մինչդեռ հեկտարից ստացված մաքուր յեկամուտը կազմում եր այն ժամանակ ընդամենը 10 զլոտի: Այսպիսով, պարտքը համարյա 38,5 անդամ գերազանցում եր յեկամտից: Ե՛լ ավելի վատ եր զաղթականների պարտքի զործը: Այն հենց նույն թվին կազմում եր միջին հաշվով հեկտարին 1028 զլոտի, մաքուր յեկամտից գերազանցելով 102,8 անդամ:

Պարտքերի մեջ մյուսներից ավելի թաղվեցին չքաղորական և միջակային տնտեսությունները: Դրանց մեկ հեկտար հողի պարտքը միջին հաշվով 1,5 անդամ ավելի բարձր եր, քան 30—50 հեկտար տարածություն ունեցող խոշոր կուլակային տնտեսություններինը:

1934 թվականին սոցիալական եկոնոմիկայի ինստիտուտի կողմէց զանազան կողմեր ուղարկված հարցաթերթիկին դյուզացիների տված պատասխաններից պարզվեց, վոր, մինչդեռ կուլակայիները

փոխ եյին առնում հող, գյուղատնտեսական մեքենաներ և պարաբռանյութեր գնելու համար, չքաղորական տնտեսությունները հարկադրված եյին փոխ առնել գլխավորապես պարտքերը, պարտքերի և հարկային ապառքների տոկոսները վճարելու համար, ինչպես նաև սպառողական կարիքների համար: Բնական է, վոր դրանից դյուզացու վզի ողակն ավելի ու ավելի պինդ եր աեղմվում:

Կալվածատերերն ու կուլակները փոխ ստանում եյին բանկերում, և առաջին հերթին պետական գյուղատնտեսական բանկում: Դրանք մեծ մասամբ յերկարաժամկետ փոխառվություններ եյին համեմատաբար ցածր տոկոսներով: Այլ եր մանը և միջակ դյուզացու բանը: Համեմատաբար պակելի եժան և ավելի յերկարաժամկետ բանկային փոխառվություններ նրանք ստանում եյին շատ սակալ դեպքերում, այն ել փոքր քանակությամբ, ուստի և հարկադրված եյին մեծ մասամբ դիմելու վաշխառուներին: Դյուզում վաշխառությամբ զրադկում եյին առավելապես կուլակները, քանենձներն ու կալվածատերերը: Կենտրոնական վոյելովություններում փոխառվությունների վոչ պակաս քան 68%-ը դյուզացիներն ստացել եյին կուլակներից: Պետական գյուղատընտեսական բանկն ու վարկային կոռպերացիան ողնում եյին կուլակների շահագործելու և ստրկացնելու դյուզացիներին, տալով նրան վարկեր, վորոնք նա հետո ըրջանառության մեջ եր զնում չքաղության մեջ, նրանցից առնելով տարեկան 100, 200, 300 և նույնիսկ ավելի տոկոս:

Հաճախ կուլակը վարկային հիմնարկություննում յերաշխավորում եր միջակին վարկ բաց թողնելու և գրա համար նա ստանում եր փոխառվության 15—20%-ը:

Կուլակները չքաղորությանը և նույնիսկ միջակներին փոխ եյին տալիս վոչ միայն փող, այլև հաց: Ահա թե, որինակ, ինչ հաղորդում վարչակայի վոյելովության Յեկանովի գալառի միջուղյացի. «Հունիսի 10-ին յես գնացի մի հարուստ գյուղացու, ինդը ինձ փոխ տալ ինձ 2 ամսով 1 ցենտներ հաճար: Նա սիրով համաձայնեց, բայց հայտարարեց. «Հաճար փոխ տալ չեմ կարող, կարող եմ միայն այն վաճառել: Այսոր 1 ցենտներ հաճարի գինը 25 զլոտի յե: Յես կտամ քեզ 1 ցենտներ, իսկ դուքքերից հետո ինձ կտամ այնքան հաճար, վորքան վոր յերկու ամսից հետո կարելի կլինի գնել 25 զլոտիով: Բացի այդ, դու կվճարեն 50 գրոշ տոկոս»: Յերկու ամսից հետո, յերբ հավաքեցինք

Հացահատիկը, 1 ցենտում հաճարն արժեքը արդեն 12 զլոտի 50 գրոշ, և յես ստիպված յեղա հանձնելու 2 ցենտում և բացի այդ 50 գրոշ տոկոս»:

Բարձր տոկոսներին ավելանում եր նաև ստրկացումն՝ աշխատավճարումը կուլակային տնտեսության մեջ, կուլակներին փոքրահասակ յերեխաներ վարձու տալը, հողի մի մասն ոգտագործելու զինուլը և այլն: Անհուսալիորեն խճճվելով պարտքերի մեջ, գյուղացիները կորցնում եյին իրենց հողերը և գյուղատնտեսական ինվենտարը: Ահա թե ինչ են դրում իրենք գյուղացիները, պատասխանելով մեր հիշատակած հարցաթերթիկին: «Ինձանից, — գրում է Թժեշովի գալարի մի գյուղացի, — պարտքը մարելու համար վերցրին 2 մորգեն հող»: Կեցիի վոյելողության մի գյուղացի գրում ե: «Պարտքերը և խնայողական դրամարկղի փոխավությունները ծածկելու համար յես հարկադրված եյի չնչին գնով ծախելու ծնած ու ստեղծ կովերս»:

Գյուղացու հողն ամենուրեք պարտքերի գիմաց աճուրդով եյին ծախում: Նույնիսկ այն գեպքերում, յերբ գործը հարկադրական վաճառքի չեր հասնում, գյուղացիները միայն անունով եյին մնում իրենց տնտեսությունների սեփականատերեր: Իսկ այդ տնտեսությունների իսկական տերերը բանկերն ու վաշխառուներն եյին, վորոնց գրպանն եյին դնում գյուղացու բոլոր յեկամուռները, այդ թվում նաև նրա կողմնակի վաստակներից ստացված յեկամուռները:

Յերբ 1932 թվականին հողի գները կատաստրոֆիկ կերպով ընկան, կառավարությունը հրատարակեց պարտքերի վճարումը տարածամկետելու, տոկոսներն իջեցնելու մասին և այլն մի շարք վորոշումներ: Այդ վորշումները հրատարակելու պատճառն այն եր, վոր հողն ու գյուղատնտեսական ինվենտարը խիստ իջեցված գներով վաճառելն անձեռնոտու գուրս յեկալ փոխառուներին: Ինչպես մատնանշում ե հենց նույն պրոֆեսոր Տենենբաումը, «պարտապանի տնտեսությունն աճուրդով ծախելը հաճախ արդեն չի համապատասխանում իրենց՝ փոխառուների շահերին, վորով հետեւ նրանց մի մասը կարող ե մնալ առանց վոչնչի: Ուստի հաճախ փոխառունին ավելի շահավետ ե պարտապանին թողնել նրա տնտեսությունը, վորովհետեւ նա զտնում ե, վոր պարտապանի տնտեսության վիճակը դեռ կարող ե լավանալ և նա այդպիսով ավելի լավ կապահովի իրեն իր փողերը վերադարձնելը»:

Պարտքերի վճարումը տարածամկետելու և տոկոսներն իջեց-

նելու մասին յեղած կառավարական վորոշումները վերաբերում եյին գլխավորակես բանկերին ունեցած պարտքին, վորոնք փոխավություն կուլակներին, իսկ չքավորական և միջակային տնտեսություններին փոխատվություն համարյա չեյին տալիս: Այսպիսով, աշխատավոր գյուղացիության վիճակը վոչնչի միայն չլավացավ, այլ, 1937 թվականից սկսած, նույնիսկ ել ավելի վատացավ: Պարտքերը վճարելու տարածամկետման մասին համաձայնության գալու համար կառավարության սահմանած ժամկետները լրացան 1936 թվականի վերջին: Բանկերն ու վաշխառուներն արդեն 1937 թվականի առաջին կեսին թունդ կերպով ձեռնամուխ յեղան «անձատապահ վճարորդների» գույքի հարկադրական վաճառմանը:

Այս եր լեհական գաժան իրականությունը, վորը աշխատավոր գյուղացիությանը մատնեց լիակատար քայլայման:

### ԳՅՈՒՂԱՑՈՒ ՀԱՐԿԱՅԻՆ ԿՈՂՈՉՈՒՏԸ

Գյուղացիական տնտեսությունների քայլայմանը նպաստում եյին նաև չափից գուրս հարկերը: Տիրապետող դասակարգերը ժողովրդի վրա եյին գցում այն ծախսերի լուծը, վորոնք ուժից վեր եյին այնպիսի աղքատ յերկրի համար, ինչպիսին լեհաստանն եր: Լեհական գանձարանից հսկայական միջոցներ եյին գուրս գալիս մոնոպոլիստական կազմակերպությունների, բանկերի, կալվածատերերի ու տերտերների յեկամուռները մեծացնելու համար: Առանձնապես խոչըր գումարներ եյին հափշտակում չինովնիկները, վորոնք գանձագողության բոլոր սեկորդներն եյին շահել: Ռազմամոլության, վոստիկանության և բանտերի վրա արված ծախսերը կլանում եյին տարեկան ավելի քան 1 միլիարդ գլուխի: Տենտորեն պատրաստվելով ուրիշի հողերը զավթելու և կողոպտելու, լեհաստանն առանձնապես ուժգնորեն եր զինվում և զգալի չափով տնտեսությունը փոխադրեց ռազմական ուկների վրա, վորը հսկայական միջոցներ եր կլանում: 1937/38 թվականին, բանակի և տնտեսության ռազմական նախապարաստության բոլոր տեսակների վրա արված ծախսերը հասան 2 միլիարդ գլուխի գումարի: Սպառազինումների վրա արված ծախսերը ծածկելու համար կառավարությունը դիմեց խոչըր փոխառությունների: Այդ փոխառություններն ու նրանց տոկոսները վճարելն իրեւ մի նոր լուծ ընկապ հարկատունների վրա:

Հարկային սիստեմը կառուցված եր այնպես, վոր այն եր

ամբողջ ծանրությամբ ընկնում եր բնակչության չքավորագույն խալիքի վրա: Չքավորներից ու միջակներից, որինակ, գանձվում եր հողահարկի 2/3-ը, կալվածառերերից ու կուլակներից՝ միտյն 1/3-ը: Ինչ-վոր յերեք տարվա ընթացքում այդ հարկը բուն է-հաստանում մեծացալ յեռապատիկ, իսկ Արևմտյան Ռւկրաինայում և Արևմտյան Բելոռուսիայում՝ քառապատիկ: Մացվեցին մի շարք նոր հարկեր: Նոր գույքային հարկ՝ 140 միլիոն զլոտիի շափով, յեկեղեցական նոր գանձումներ՝ պիտական բոլոր գանձումների 5%-ի չափով, գուստային հավասարար հարկ և այլն: Է-հաստանում ընդհանուր առմամբ գանձվում եյին ավելի քան 190 գանձազան տեսակի հարկեր և տուրքեր, վորոնց մեջ կային ապորինի տուրքեր կովիր, խողի, ձկու, սաղի և նույնիսկ շան համար, ապորինի տուրքեր կեթակների համար, տերտերների աները պահպանելու գանձումներ և այլն:

1939 թվականին մացվեց չափազանց բարձր ռազմական հարկ:

Հարկերի վճարման նվազագույն ուշացման համար գանձվում եյին շատ բարձր տույժեր: Բացի այդ պարտքը չմուծողը պետք է յուրաքանչյուր ծանուցագրի համար վճարեր 1,5 զլոտի: Յեղել են դեպքեր, յերբ գյուղացուն մեկը մյուսի հետեւց ուղարկում եյին 20 կամ ավելի այլպիսի «հիշեցումներ», և նա պետք է դրա համար վճարեր 30 և ավելի զլոտի: Դրան միանում եյին անթիվ տուղանքները:

Է-հաստանում ինչի՞ համար ասես չեյին տուղանում գյուղացուն: Գոյություն ուներ, որինակ, լուցկու պետական մոնուպ-լիա, վորից ստացված յեկամուտները ծախավում եյին ոտարեք-կրյա փոխառությունների տոկոսները վճարելու վրա. այսինքն՝ ոտարերկրյա կապիտալիստների գրավաններն եյին մտնում: Կո-ռավարությունը հրամայել եր կրակ վառել միայն լուցկիներով, վորոնք շատ թանգ գնով ել վաճառվում եյին: Բավական եր, վոր գյուղացին գործածեր վառոց կամ կայծքար ու դավ, —և նրան տօւղանում եյին միքանի զլոտիով: Տուղանում եյին նաև սանի-տարական, ճանապարհային և ուրիշ, ծայրահեղ մանրախնդիր և հաճախ միանողամայն անհեթեթ կանոններ խախտելու համար: Տուղանում եյին այն բանի համար, վոր շունը կապած չե: Լայ-նորին տարածված եյին քաղաքական «զանցանքների» տուղաք-ները: Այդպիսի «զանցանքների» քողի տակ գյուղացիներին տաւ-գանում եյին քսենձի, տեղական գոստիկանի և նույնիսկ ուղղակի

հարեւանի հետ վոչ բավականաչափ հարդանքով խոսելու համար, յեթե վերջինս պանական կառավարության կողմնակիցն եր:

Տուղանքների և տույժերի լայնորեն զարգացած սիստեմը չափազանց յեկամուտաբեր գործ եր Լեհաստանի կառավարող դաստ-կազզերի համար, տարեկան գանձարկին տալով 50—60 միլիոն դուտի:

Գյուղացու համախառն յեկամտի 1/3-ից մինչև 1/2-ը գնում եր հարկերին ու ապորինի տուրքերին: Լեհաստանում գյուղացինե-րից գանձվող հարկերի գումարը 5—7 անգամ ավելի յեր, քանի իր ժամանակին ցարական Ծուսաստանում:

Գյուղացիությանն առանձնապես ուժեղ հարվածում է յին բազմաթիվ չափազանց բարձր անուղղակի հարկերը: Համարյա-թե չկար այնպիսի ապրանք, վոր գյուղացին զնելով չվճարեր ար-դյունաբերական, առեւտրական և այլ հարկեր, վոր զնում եյին նրա վրա ֆարբիկանաներն ու առեւտրականները: Յեկ, վերջա-պես, հոկայական բաժային և այլ տուրքերը:

Ճգնաժամի հենց սկզբից, յերբ գյուղացիներն սկսեցին իրենց ապրանքները չնչին գնով ծախիլ, հարկային լուծն արդեն բուլ-րովին խեղդեց գյուղացիական տնտեսությունները: Լեհական բուլ-ժուական տնտեսագետ Միխայլովսկին, վորը 1934 թվականի վեր-ջին հետազոտել եր կազմի վոյնովության նժեշտվ դավառի գյուղերը, սահմանել եր, վոր «գյուղացու համարյա միակ դրամա-կան ծախսը հարկերը վճարելու է: Բայց հարկերը վճարելու համար գյուղացին հարկադրված և ծախելու վերջին կովը»: Նույնիսկ կտառավարական որգան «Գազետա պոլյսկա»-ն հարկադրված եր ըն-դունելու, վոր «հարկային կեղեքան ճնշման տակ գյուղացին իրեն զրկում և հացի վերջին կտորից և ամեն բան ծախում և, միայն թե վճարի»: Դե ել ինչպես չվճարի, յերբ այլ կերպ գյու-ղացուն կքայլաքեն հարկերի հարկադրական գանձման ծախսերով միայն: Այդ ծախսերը մեծ մասամբ միքանի անդամ գերազան-ցում եյին հարկային ապառքները:

Վորքան ավելի աղքատ եր տնտեսությունը, այնքան ավելի քիչ եյին քաշվում գատական կատարածուները: Գյուղացիներից վերցնում եյին այն ամենը, ինչ նրանք ունեյին: «Պисьма պոլյսկի քրեական օ սահմանական անձնագիրը կատարածության Ստոպնիցիկ գավառի Պյասկի գյուղի մի գյուղացի գրում և: «Մեղ մատ՝ Պյասկի ժամանեցին չորս դատական կատարածու: Ամբողջ յերկու որ նրանք թրե եյին դալիս Պյասկիում: Զենց

վոր մեկի մոտ միքիչ հացահատիկ եյին դանում, անմիջապես վերցնում եյին: Գյուղացիներից խլում եյին նստարանները, ռընդուկները, հայելիները, փետրաներքնակները, հորթերը, կովերը—ամեն ինչ ուղարկում եյին քաղաք:

1934 թվականից սկսած աճուրդով վաճառում եյին արդեն ամբողջ գյուղեր: «Газета варшавская»-ն հաղորդում եր յերեք գյուղ միասին աճուրդի հանելու հայտարարության մասին, ըստ վորում գյուղերից մեկն առաջ ունելոր եր և նրա մեջ հաշվում եյին թիթեղով ծածկված շատ քարե տներ և տնտեսական շնուրուններ, շատ պտղառու այդիներ և այլն:

1938 թվականի սկզբին լեհական թիթերը հաղորդում եյին հարկերը չվճարելու համար գյուղացիական տնտեսությունները աճուրդի հանելու մասսայական վաճառքների նոր աճման մասին:

Միևնույն ժամանակ կալվածատերերը միանդամայն անդատիժ կերպով հարկերը չեյին վճարում շատ տարիների ընթացքում: Նրանք գիտեյին, վոր մի վորոշ ժամանակ անցնելուց հետառ նրանց պարտքերը կջնջվեն, ինչպես այդ արդեն յեղավ 1932 թվականին գույքային հարկի վերաբերյալ, ըստվորում կալվածատերերն ու կապիտալիստները դրանից «Հաճեցին» 500 միլիոն զլոտի:

### ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Լեհաստանում գյուղացիական տնտեսությունների հակայական մեծամասնությունը միշտ ել շատ հետամնաց և յեղին: Այդ տնտեսություններում մինչև այժմ տիբապետում եր յեռագաշտի ուստամեմը. կերպախոտի ցանքեր պատահում եյին շատ սակալ, ցանքերի ամենամեծ տարածությունը բռնում եյին հաճարն ու կարտոֆիլը: Վերջին տաս տարում գյուղացիական դաշտերում կարտոֆիլը արտամղում եր մյուս կուլտուրաներին, վորը վիայում և գյուղացիների և քաղաքային սպասողների հիմնական մասսայի աղջատության աճման մասին: Գյուղացիական դաշտերի բերքատվությունը չափազանց ցածր է. նույնիսկ ըստ կառավարական տվյալների այդ բերքատվությունն ըստ հացահատիկային կուլտուրաների առնվազն 30%-ով ավելի ցածր է, քան կալվածատիրական տնտեսություններում: Իսկ իրականում այս ավելի քիչ է, վորովհետեւ կառավարական տվյալները միազումարում եյին գյուղացիական բոլոր տնտեսությունները, չնայած

կուլակային, միջակային և չքավորական դաշտերի բերքատվության մեջ յեղած նշանակալից տարբերությունը:

Գյուղացիների մեծամասնությունն ունի հողե հատակ և ծղոտեա առաստաղ ունեցող խրճիթներ, անտեսական վատ չինություններ, վորոնք տարիների ընթացքում լիովին անպետքացել են՝ գրանք վերականգնելու և կարգուկանոնի մեջ պահելու անհրաժեշտ միջոցների բացակայության հետեանքով: Այդպիսի տնտեսություններում չկան նույնիսկ ամենահասարակ գյուղատնտեսական գործիքներ: 1928/29 թ. մի շարք գյուղերում կատարված հեաաղոտությունը ցույց տվեց, վոր հազվադեպ և մինչեւ 2 հեկտար ունեցող տնտեսությունների գյուղատնտեսական ինվենտար տնենալը, իսկ մինչև 5 հեկտար ունեցող տնտեսությունները շատ քիչ ինվենտար ունեն: Ըստ պաշտօնական տվյալների, գյուղացիական տնտեսությունների գերակշուղ մեծամասնությունը ձեռքով ե ցանում, իսկ Արևմտյան Բելոռուսիայում ուրիշացան կարելի յեր տեսնել միայն կալվածատիրական կալվածքներում:

Հենց նույն Արևմտյան Բելոռուսիայում, վորն առանձնապես անքում եր պանական դաժան լծի տակ, շատ գյուղացիներ արորով եյին վարում: Դեռ ավելին, գութանի և արորի փոխարեն գործածվում եր նույնիսկ բրիչ, վորովհետեւ հողագուրկ և սակավագույղ գյուղացին հաճախ ստիպված եր լինում մշակել կարգածատերերից վարձակալած այնպիսի հողամասեր, վորտեղ անտառը կտրելուց հետո կոճղերը հանգած չեյին լինում—այլ կերպ քան ձեռքով՝ այդպիսի հողը չես մշակի: Այդ հողակտորների չերտն այնպիսին է, վոր նույնիսկ մաքրելուց հետո ել արմատները հանել չի կարելի, և ստիպված են լինում սահմանափակիլել լոկ ցանքաը տափանելով: Միքանի տարվա ընթացքում հողն ուժապատ եր լինում է, վերջապես, լըլում եր: Գյուղացին քուշում եր ուրիշ հողամաս, վորտեղ նրան սպասում եր հենց նույնպիսի տաժանակիր աշխատանք, վորը յեկամուտ եր տալիս միայն հարուստ հողատերին: Միայն հին ժամանակներում, և հենց հիմա ել թափառակյաց ժողովուրդների մոտ կդանմի հողը մշակելու այդպիսի յեղանակ:

Աղբարային ճնաժամի սրման ժամանակվանից լեհաստանի գյուղացիական տնտեսություններն ել ավելի ընկան: Գյուղացիները համարյա ամենեկին գաղարեցին գյուղատնտեսական գործիքներ գնելուց: Գյուղատնտեսական մեքենաների և գործիքների վաճառքանումը 1937 թվականին 70%-ով պակաս եր, քան 1928 թվա-

կանին. սա ամբողջ գյուղատնտեսության դժով նրա նվազման միջին տոկոսն է։ Գյուղատնտեսական մեքենաներ և գործիքներ գնում էին գլխավորապես կալվածատերերն ու կուլակները։ Գյուղատնտեսության մթերքների ցածր գները և գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների բարձր գները վերջիններամբ աճանայն անմատչելի դարձրին աշխատավոր գյուղացու համար։

Լեհաստանի գյուղացիների գյուղական մասը, առանձնապես Արևմտյան Բելոռուսիայում և Արևմտյան Ուկրաինայում, գութան գործադրելուց անցավ անդրչընդեղայան արորին։ Հաճախ գյուղացիները վերադառնում եյին այն գործիքներին, վորոնք գործածվում եյին հազար տարիներ առաջ, յերբ մարդիկ դեռ մետաղներ չգիտեյին և ոգտվում եյին քարեց շինած գործիքներից։ Բուրժուական «Վեցուր վարշավСКИ» լրագիրը գրում եր. «Լեհական գյուղը ծայրամասերում վերադառնում է քարե դարին... Արևմտյան Բելոռուսիայում գյուղացին դադարում է յերկաթե կացինից ուղավելուց, վորովհետև հինը փչացել է, իսկ նորի համար փող չկա։ Յերբ պետք է մի բան ջարդել, նա աշխատում է այդ անել քարե կացինով, վոր պատրաստված է նախապատմական քարե դարում գործադրված յեղանակով։ Նա այլևս յերկաթե մեխեր չի գործածում, դրանք փայտե մեխերով փոխարինելով։ Վոչ վոք ձի չի պայտում, քանի վոր հողը փափուկ է, — ափսոս է յերկաթե պայտելու վրա գործածել։ Յերկաթե նույնիսկ ամենափոքր կտորները գանձ են Պոլեսյելի գյուղացու համար։ Նրա գտած յերկաթի ամեն մի կտորը խնամքով պահպում է, վերակրվում է փոփոխվում։ Ե շատ անդամ։ Նա, ով ծղոտահատի կանոնավոր դանակ ունի, գյուղում հարուստ է համարլում։»

Միաժամանակ իսկամ կրծատվել է արհեստական պարարտանյութերը։ 1929 թվականի աշնանը՝ լեհաստանում արհեստական պարարտանյութ վաճառվեց 90,1 միլիոն զլոտիի, իսկ 1934 թվականի աշնանը՝ միայն 16,4 միլիոն զլոտիի, այսինքն՝ 5,5 անդամ ավելի պակաս։ 1936 թ. աշնանը պարարտանյութ վաճառվեց 22,6 միլիոն զլոտիի—4 անդամ պակաս, քան 1929 թվականին։ Պարարտանյութեր դնում եյին գլխավորապես կալվածատերերն ու կուլակները։ Զքավորական և միջակային տընտեսությունները համարյա լիովին դադարեցրին արհեստական պարարտանյութերի գործածումը։

Գյուղացիական տնտեսությունների անկման մասին առանձ-

նապես ցայտուն կերպով վկայում եր ձիերի քանակի նվազումը։ 1931-ից մինչև 1934 թվականը լեհաստանում ձիերի քանակը սուհաստեց 400 հազարով։ 1937 թվականի կեսերին ձիերի գլխաքանակը գեռես 236 հազարով պակաս եր, քան 1931 թվականին։ Այդ ժամանակվա ընթացքում ծխերի թիվն ավելացել եր մոռավորապես 10%-ով։ Այսպիսով, լեհաստանում արագործեն տեղի յեր ունենում գյուղացիների ձիազրկությունը, առաջնելով գյուղացիական հողերի մշակման հետագա վատացում։

Լեհաստանում աղբարային ճշնաժամի ամենասուր ժամանակաշնչանում, 1931 և 1933 թվականների միջև, յեղջուրավոր անասունների գլխաքանակը կրծատվեց 800 հազարով, իսկ խոզերինը՝ 1500 հազարով։ Գյուղացիական տնտեսություններում յեղած յեղջուրավոր անասունը մանր է։ Կովը շատ քիչ կաթ և առվլու, սովորաբար որական 2-3 լիտրից վոչ ավելի։

Վատ մշակելու, պարարտանյութեր չլինելու և գյուղացիական տնտեսության ընդհանուր անկման հետեանքով լեհաստանում բերքատվությունը տարեցտարի ընկնում եր։ 1930 թվականին, սերմացուն հանելուց հետո, բնակչության մեկ չնչին ընկնում եր տարեկան 250 կիլոգրամ հացահատիկ, 1936 թվականին՝ 210, իսկ 1938 թվականին՝ 180 կիլոգրամ։

## ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ ԱՂՔԱՏԱԹՅՈՒՆՆ ՈՒ ՍՈՎԼ

Ֆարբիկաններին և կարլածատերերին ողնելով կողուտելու աշխատավորներին, հարկերի միջոցով ժողովրդից քամելով վերջին հյութերը, լեհական կառավարությունը աշխատավոր բնակչությանը, մասնավորապես գյուղացիական մասսաներին հասցեց ծայրահեղ աղքատության ու սովի։ Լեհական մամուլը համարյա ամեն որ լիքն եր լեհական գյուղի պղքատության և յերկրի զանազան մասերում մոլեկոնդ սովի նկարագրություններով։

Կառավարող շրջաններին մոտ կանգնած «Ալլուստրանա կյուրեր լուծենի» լրագիրը գրում եր. «Գյուղի պղքատությունը մեզ մոտ անորինակ է։ Միայն Հնդկաստանի կամ Բրազիլիայի վորեն տեղում կարելի յե նման բան գտնել։ Մեր պղքատությունն այնքան մեծ է, զոր զրկում է մեզ կուլտուրական յերկիր կոչվելու իրավունքից»։

Գյուղացիները նույնիսկ ամենաանհրաժեշտ բան գնելու միջացներ չունեյին։ Առցիալական եկոնոմիկայի լեհական պետական

ինստիտուտի կատարած հետազոտությունները ցույց տվին, վոր 5 հազ. և ավելի բնակիչ ունեցող ամբողջ գյուղեր յերկարագու ժամանակվա ընթացքում ձեռք ելին բերում ամսական 5 զլոտիկց վոչ ավելի գումարի արդյունաբերական ապրանքներ: Յուրաքանչյուր 10 հոգուն, այսպիսով, ընկնում եր 1 գրոշի գնում:

Այդպիսի պայմաններում մեկ տուփ լուցկին գյուղացու համար դարձավ անմատչելի պերճանք: «Լուցկի չլինելու պատճառվ՝ գրում եր «Ալլուստրան» կուրիեր ցօճենի» լրագիրը, — գյուղացիներն առաջոտները սպասում են, մինչև վոր վորեւ խրճիթի ծխնելույղից ծուխ յերեա, և գնում են այնտեղ կրակ խնդրելու»: Կենարոնական և արևելյան շրջաններից ստացված մի շարք թղթակցությունների մեջ հաղորդվում եր, վոր ամենաունելիր գյուղացիներն անդամ լուցկին խնայելու նպատակով սովորել են այն չորս մաս անել, մեկից չորս լուցկի ստանալով:

Ցեթե լուցկին գյուղացու համար դարձել ե հազվագյուտ բան, ապա ե'լ ավելի պակաս մատչելի յեր նրան նավթը: «Մեր գյուղերը խավարի մեջ խեղդվում են, — գրում եր կալվածատերերի «СЛОВО» լրագիրը, — գյուղում վոչ մի լուսավորված պատուհան չի կարելի տեսնել»: Իր «Грипп свирепствует в Направе» գրքում լեհական գրող Յալյու Կուրեկը գրում է. «Յերեկոյան նապրավան ամենեին չի յերեռում: Գիշերը մի աեսակ աննկատելիորեն ե դալիս»:

Վոչ վոք կրակ չի վառում: Պատուհանները մեռած են: Նավթ չկա, նավթի փող չկա: Գվիջի մոտ ահա արդեն յերկրորդ շաբաթն ե, ինչ դրված ե աղաջրով մի աման, վորի մեջ շատ անդամ են կարտոֆիլ յեփել: Այդ թանգարժեք հեղուկը թափել չի կարելի, նրա մեջ գեռ շատ անդամ կարտոֆիլ կեփիլ»:

Լեհական մամուլը գանգատվում եր, թե գյուղացիները դադարել են անդամ աղ գնելուց, իսկ դրա փոխարեն գնում ելին սելյողկաների հին փոսած տակառներ, յեփում ելին դրանք և աղաջուրը կերակրի մեջ դործածում ելին աղի փոխարեն: «Роботник» լրագիրը հաղորդում եր. «Լեհաստանում կան շատ գյուղեր, փորոնց բնակիչները յերեք մի կտոր շաքար չեն տեսել: Միայն առանձին անձեր կարող են իրենց թույլ տալ, և այն ել տարին մեկ անդամ, գործածել մի պաղունց սախարին»: Գյուղացու համար անմատչելի յեր նաև ոճառը: Նույնիսկ ամենաուները տնտեսություններում գործածվում եր անցյալ լմացքից մնացած կեղտուտ սապնաջուրը:

Գյուղը մերկ ու վուաբորիկ եր ման գալիս: Պիլսուդսկիանների որդան «Կուրիեր պօրանի»—ն 1935 թվականին գրում եր. «Մեր գյուղի. և, Հատկապես, Արևմտյան Գալիցիայի գյուղի համար ընորոշ են հետեւյալ կենցաղային Փիդուրները. Հայր, վորը ձմեռը յերեխաններին գրկած ե տանում դպրոց, — վորովհետեւ ընտանիքում միայն նա կոչիկներ ունի, — և յերեխաններ, վորոնք ամբողջ որը փաթթաթված են մանր կտրտված հարդի պարկերում, այլ կերպ նրանք առանց հագուստի կտառչեյին չտաքացվող խրճիթներում»:

«Զելենայ շտանդար» գյուղացիական լրագրի մեջ մի գյուղացի այսպես եր բնութագրել գյուղի վիճակը 1936 թվականին. «Մեզանում մարդկանց կեսը ամբողջ ձմեռը նստած ե առանց հացի: Զեմ չափազանցում և չեմ խարում: Թող իշխանությունները գան մեղ մոտ, և յես նրանց ցույց կտամ տներ, վորտեղ բացարձակապես վոչինչ չկա: Յես վկա եի, թե ինչպես մի կին աղաչում եր իրեն հինգ հատ կատ կարտոֆիլ տալ յերեխանների համար»: «Կաս» լրագիրը գրում եր. «Լոձի վոյելվողության գյուղացիների կեսից ավելին ամիսներով հաց չի տեսնում: Գյուղացիական չքավորությունը փախչում ե քաղաքները, գյուղում նա սովամահության ե մատնված»: Բայց քաղաք փախած այդ մարդկանց ել ավելի լավ վիճակ չեր սպասում, վորովհետեւ քաղաքներում տիրում եր հսկայական գործադրկություն և աղքատություն: Զայն բարբառը հանապատի յեր հնչում այն նամակը, վոր ստորագրել ելին Ռոպչիցիկի գավառի նագուին գյուղի գյուղացիները. «Մենք աղաչում ենք փրկել մեղ, վորովհետեւ մենք քաղցից ու կարիքից կոտորվում ենք: Մենք և մեր յերեխանները ինչո՞ւ պետք ե սովից մեռնենք: Մենք ցանելու և ուտելու բան չունենք, մենք սոված ու ուկոր ենք ման դալիս: Մենք հաց չունենք: Մեր անասունները սովից կոտորվում ենք: Մամուլում հաճախ հաղորդվել ե այն մասին, վոր գյուղերում շատերը սնվում են ծառի կեղեկի յեփուկով:

Դեռ ամենեւին նորերս, 1938 թվականի սկզբին, «Роботник» լրագիրը գրում եր. «Գյուղը խրված ե կեղտի մեջ, փողը չի հերթում ջուր տաքացնելու, վառելիք, լվացվելու և լվացքի համար ոճառ գնելու համար: Դրան պետք ե ավելացնել սիստեմատիկ թերասումը: Մենք կանգնած ենք մի սարսափելի ուրվականի առաջ, փոք սպասում և մեր ամբողջ ապագային»: 1937 թվականի աշնանը կրկնված անբերիությունը վատացքեց գյուղացիության դրությունը: Անցյալ տարիներին սովն ընդգրկում եր գլխավորա-

պես արևելյան և Հարավային Լեհաստանի շրջանները: 1937/38 թվականի ձմեռը սովոր ընդգրկեց Լեհաստանի նույնիսկ այն կենտրոնական շրջանները, վորտեղ մինչև այդ ժամանակ բերքի գործը համեմատաբար ավելի բարեհաջող եր լինում: 1938 թվականին սովոր եր լյուրլինի, Վարչավայրի և այլ վոյեվոդությունների ամբողջ գավառների բնակչությունը: Կերապակասությունից սովահար եյին լինում ու կոտորվում անասունները:

Սովոր հոգի վրա զարդանում եյին Փիզիկական ուժասպառությունն ու մասսայական հիմնդությունները: «Письма крестьяни о своем жизни»—ում, նամակներ, վոր Հավաքվել եյին 1934 թվականին, կարելի յէ հանդիպել այսպիսի հաղորդագրությունների: «Физико-химия в аյнքան և թուլացել, վոր կարմածատիրոջ կարմածքում վերջին հունձն անելիս հնձվորներն ուշաթափում եյին»: Անգլական մինիստրության «Польска збройна» լրադիրը ահազանգում եր այն բանի առթիվ, վոր գյուղերից յեկած զորակոչիկների մեծ մասը հիմնէ եր թոքախտով:

Առանձնապես սովոր յէ յերեխանների առողջության վիճակը: Վերոհիշյալ գրող Յալու Կուրեկը գրում ե. «Յես սեփական աշքերով տեսել եմ, թէ ինչպես դպրոցի ուսուցիչները ուսումնական տարին ալվարտովելուց հետո յերեխաններին բերին կոստյոլ: Ժամանացության ժամանակ յերեխաններն ուշաթափում եյին ուժապառությունից, և ուսուցիչները նրանց գուրս եյին տանում բակը: Այժմ Նազրավագությունում յերեխանների կեսը հիմնդ և թոքախտով, վորովհետեւ բորիկ, պատառությամբ և սոված, նրանք հեշտությամբ են մրսում: Հենց վոր մտածում ես ապագայի մասին, ապա սիրադ ճմլվում ե թախծից ու տաղնապից: անում և վատառողջ ու անկենառնակ ժողովուրդը: 1936 թվականին Գալիցիայի մի շարք գյուղերը հետազոտած լեհական բժիշկներից մեկը «Роботник» լրագրին հաղորդեց: «Յերեխանների 3/4-ը հիմնդ և թոքախտով. բոլոր յերեխաններն ունեն գեղձերի մեծացում. յերեխանների մեծամասնությունը հիմնդ և ուսիսով»: «Иллюстрованы курьера подзенны» լրագրը 1937 թվականի ապրիլին գետեղեց գրող Յան Վիկտորի ուրվագծերը Կրակովի շրջանի գյուղացիական յերեխանների գրության մասին: Դպրոցներում բժշկի կազմակերպած զրույցները պարզեցին, վոր յերեխանները ծայրատիճան հյուծված են: Յերեխանները զարմացած լուսմ եյին բժշկի խրատները մնիւթու ճիշտ ռեժիմի մասին ու պատասխանում: «Մենք որական մի անգամ ել միշտ չե, վոր ուսում ենք:

Հայրեկն ասում ե, թէ յերեխան չի մեռնի, յեթե որական թեկուզ մեկ անգամ ուտի»: «Այդ յերեխանները,—գրում ե Յան Վիկտորը,—ունեն դուրս ցցված թիակներ, ներս ընկած կուրծք, ուսուած փորերը: Նրանց զգալի մասը մատնված ե թոքախտի: Նրանց ապահած տներում վիստում են միջատները, մոլեզնում ե թոքախտը. տրախուման»:

Առանձնապես սովոր պայմաներում են գտնվում ծծկեր յերեխանները: «Իրենց կյանքի արգեն առաջին ամիսներին,—գրում եր 1938 թվականին «Роботник» լրագրը,—գյուղացու յերեխան քաղց և զգում: Նրան չի կարող կրծքով կշտացնել աշխատանքից հոգնած և սովահար յեղած մայրը: Հենց վոր յերեխան առաջին ատամներն ե հանում, կարտոֆիլս արգեն սկսում ե նրա միակ կերակուրը լինել: Նույնիսկ չոր հացը չքեղություն ե: Թերասընման, զարդուրելի կեղտի և բնակարանային կոշմարային պայմանների հետևանքով գյուղական յերեխանների մեջ տարածված են թոքախտը, արախտըն, սկարլատինը, դիֆտերիտը և տիֆը: Վերը հիշված գրող Յան Վիկտորը պատմում ե, թէ ինչպես իրենց կատարած հետազոտության ժամանակ մայրերը բժշկի յերկար պնդումներից հետո եյին բերում ծծկեր մանկիկներին: «Կարմիր, հաշմանդամ դարձած՝ կեղվանքով ծածկված մեջքով ու կրծքով յերեխանները շարժվում եյին ցնցուինների մեջ: Ուսուցքները թարախակալում են, պատովում... Յերեխան, —նշում ե Վիկտորը,— նման ե մեջքի վրա շուռ աված գորտի: Հենց նույնպիսի ուսուած փոր և փայտի նման բարակ վոտներ: Յամաքած ըրթունքներ: Նա չի կարող անկամ լաց լինել: Մայրը պարզաբանում ե. «Դուք կարծում եք, թէ միայն իմ յերեխան ե այսպես, գյուղում բոլոր յերեխաններն են այսպես»: Յեզ, իրոք, լեհական գյուղում յերեխանների 90%-ը այդպիսի սովոր տեսք ունեն»:

Մրանք են սովոր և աղքատության արդյունքները: «Լեհաստանում կյանքը սովոր յե»,—սովոր եյին գյուղացիները: «Ասուկալի յե,—գրում եր գյուղացիական յերիտասարդության մի խումբ «ՅԱԿ» լրագրում, —նայել գյուղացիների նիհար դեմքերին, թերասնությունից և սովոր մեռնող յերեխաններին»:

## ԳՅՈՒՂՆ Ս.ՌԱՆՑ ԲԺՇԿԻ

Պանական Լեհաստանը գյուղը թողել և համարյա առանց կուրեկական ուղղության: Ընկնելով կատաղի սպառազինումների հետեւց, կառավարությունը շարունակ ավելի յեր կտրում հի-

վանդանոցներին հատկացվող առանց այն ել աղքատիկ միջացները: Մայրահեղ անբավարար բուժական ցանցը տարեցտարի կը ըստում եր: Ամբողջ տասնյակ, իսկ յերբեմն ել հարյուրավոր կիլոմետրի շրջակայքում վոչ մի բժիշկ չկար: 1937 թվականի փետրվարին առողջապահության վիճակի հարցին նվիրված՝ բժիշկների կոնֆերենցիայում հրապարակվեցին ավագաներ այն ժամին, վոր լեհական գյուղում մեկ բժիշկ ընկնում ե 7 հազ. քանակին, իսկ Արևմտյան Ռուբրինայում և Արևմտյան Բելոռուսիայում—9 հազարի:

Յուրաքանչյուր 10 հազ. բնակչին (քաղաքում և գյուղում միասին) լեհաստանում ընկնում է միայն 20 մահճակալ: Մայրերին և յերեխաններին բժշկական հակողությամբ և խորհուրդներով ողնություն ցույց տվող կոնսուլտացիաներ լեհաստանում գոյություն չունեցին: Ծննդատների մասին աշխատավոր կանայք նույնական լսած չկային:

Վերը հիշատակված կոնֆերենցիայում գեկուցողներից մեկը, բժիշկ Կացպչակը հայտարարեց, վոր լեհաստանում գյուղացիների հսկայական մեծամասնությունը մեռնում եր բացառապես բժշկական ողնության բացակայության պատճառով: «Դա խայտակություն է լեհական հասարակության համար,—հայտարարեց Կացպչակը, —վոր մեզ մոտ մեռնում են այնքան շատ մարդիկ, վորոնք կարող ենին փրկվել, յեթե բժիշկը ժամանակին տեղում մներ»: Նշված կոնֆերենցիայի մի այլ մասնակիցը, լեհաստանում հայտնի բժիշկ, պրոֆեսոր Շիմանովսկին հայտարարեց. «Լեհական գյուղը մնացել է առանց բժշկի: Այդ տեսակետից մենք այնչափ սարսափելի հետ ենք մնացել, վոր շատ հետ ենք մնում նույնիսկ նախապատերազմյան ցարական Ռուսաստանի համեմտությամբ, վորտեղ գոնե կային զեմստվային բժիշկներ և զեմստվային հիմանդանոցների ցանց»:

Բայց նույնիսկ յեղած աղքատիկ բուժական ցանցն ել գյուղացիների համար անմատչելի յեր: Ահա թե ինչ եր գրում «Բօ-  
թոնիկ» լրագիրը 1938 թվականի սկզբին. «Գյուղում, վորապես կանոն, վոչ վոք չի բուժվում: Գյուղացիները աղքատության պատճառով գուրկ են բժշկին դիմելու հնարավորությունից, առավել ևս, յեթե բժիշկը հեռու յե ապրում: Նրա մոտ ընկնելու համար հարկ ե լինում ձիեր վարձել: Բացի այդ վստահություն ել չկա, թե բժիշկը կհամաձայնի այդքան հեռու գնալ: Յեթե նույնիսկ գյուղացին բժիշկ հրավիրի, ապա նա դեղի փող չունի: Զքավոր

և նույնիսկ միջակ գյուղացիների համար այդ դժվարությունները անհաղթահարելի յեն: Ծննդկաններին ամեննեին ողնություն ցույց չի տրվում, մինչդեռ այն ծայրահեղ անհաժեշտ է, վորովհետև նրանց մեծամասնությունը ուժասպառ յեղած, առաղջությամբ թույլ կանայք են, վորոնք յերեխա ժամանակ ուսիսի են ունեցել: Այստեղից՝ մահացու վախճան ունեցող ծնունդների քանակի զարհուրելի աճումը: Գյուղը միանդամայն անողնական է այդ չարիքի դեմ, վորը աղքատության հետեանք և հանդիսանում:

Զարմանալի չե, վոր 1936 թվականին բժշկական քննության յննթարկված գյուղացիների մոտ 65%-ը հիվանդ դուրս յեկալ: Մրանք են աշխատավորներին հիվանդության և վաղաժամ մահան դատապարտող ուժիմի «նվաճումները»:

## ԳՅՈՒՂԸ ՊԱՀՈՒՄ ԵՅԻՆ ՏԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Պանական լեհաստանը հետամնաց յերկիր եր վոչ միայն արևոտական, այլև կուլտուրական տեսակետից: լեհաստանում ժողովրդական կրթությունը գտնվում եր ամենավողբարի վիճակում: Հեղափոխության ահից լեհական բուրժուազիան ճգտում եր աշխատավորներին խավարի և տղիտության մեջ պահել: Կրթության վրա արվող ծախսերը տարեցտարի կրծատվում եյին: Ժողովրդական կրթությանը արված համկացումները 1936/37 թվականի բյուջեյում 155 միլիոն զլոտիով: Պետական և տեղական բյուջեներից համարյա բոլորովին չքաց' լ եյին նոր դպրոցների շինարարության վրա արվող ծախսեն: Ճգնաժամի տարիներին լեհաստանում շատ դպրոցներ փակ եցին և զգալիորեն կրծատվեց ուսուցիչների թիվը: Միայն 1935/36 ուսումնական տարում փակվեց մոտ 6 հազ. դպրոց, իսկ ուսուցիչների քանակը պակասեց 1,5 հազ. հոգով: 1936/37 թվականին հաշվվում եր մոտ 20 հազ. դորձազուրկ ուսուցիչ: Կառավարությանը մոտ կանգնած «Կյուր ուրանի» լրագրի հրապարակած տվյալների համաձայն 1936/37 ուսումնական տարում դպրոցական հասակի 1,5 միլիոն յերեխա դպրոց հաճախելու հնարավորություն չուներ: Կառավարությունը ջանում եր դպրոցները վորքան կարելի յե քիչ բանվորների և գյուղացիների յերեխաները թողնել: Դպրոցներում սոսկալի նեղվածություն եր: Հաճախ դասարանում, վորը նեղվածք և կեղ-

տում մի տեղ եր գյուղացիական խրճիթում, հավաքված եր լինում 50—100 հոգի: Գյուղացիների յերեխաները, յեթե նրանք նույնիսկ դպրոց ընկնում եյին, ստիպված եյին դպրոց հաճախելու համար շատ կիլոմետրեր կտրել: «Роботник» լրագիրը հազրություն եր, վոր հաճախի են յեղել զեղեր, յերբ յերեխաները սրբաք և քայլեյին որական 14—20 կիլոմետր, վորովհետեւ դպրոցը գտնվում եր գյուղից 7—10 կիլոմետր հեռավորության վրա: «Յերեխաներին դպրոց ուղարկելը, —հաղորդում ե մի գյուղացի «Պисьма крестьян о своей жизни»-ում, —հսկայական դժվարությունների հետ և կապված: Հաղուստի, դրքի և տեսրի փողչկա»: Այդպիսի պայմաններում գյուղացի մերկ ու բորիկ յերեխաների մեծամասնությունը չեր կարող դպրոց հաճախել, առանձնապես ձմեռը: Հենց միայն այս պատճառով լեհաստանում դպրոցականների քանակի մասին յեղած կառավարական պաշտոնական տվյալները տեղն ու տեղը խարելություն եյին:

Լեհաստանում գյուղական դպրոցը բայցի այդ գտնվում եր այնքան վողբալի վիճակում, վոր յերեխային քիչ բան կարող եր սովորեցնել: Ահա թե ինչ եր գրում «Роботник» լրագիրը այդ դպրոցների դրության մասին 1937 թվականի վերջին. «Գյուղական դպրոցների մակարդակը չափազանց ցածր է: Այդպիսի դըրոցները բաց են թողնում, դլավորապես, կիսադրադես մարդիկ: Այստեղից՝ անդրադիտության մեծացում»:

Գյուղական դպրոցներում տեր ու տիրական եյին կալվածատերերն ու քանձնները: Ազնիվ ուսուցիչները դաժանորեն հետապնդվում եյին և վերջիվերջո վկնդվում:

Գյուղական դպրոցում յերեխաներին անողոքաբար ծեծում եյին: «Курьер пораньше» լրագրում ծնողներից մեկը գրում եր. «Դպրոցում ծեծում են: Ծեծում և դպրոցի վարիչը, ծեծում և քսենձը և ծեծում են բոլոր մնացածները, վարիչի որինակից դրդված»: Լեհական մամուլի մեջ հրապարակվել են հսկայական քանակությամբ այսպիսի գանդատներ:

Անդրագետների թիվն աճում եր տարեցտարի և կաղմում եր ժողո 10—12 միլիոն հոգի: Բայց գրագետ գյուղացիներն ել մեծ դժվարությամբ եյին դիրք կամ լրագիր սահնում: «Письма крестьян»-ի նամակներից մեկի հեղինակը հաղորդում եր, վոր իր ապրած գավառը, վորը 10 հազ. բնակիչ ուներ, ստանում եր ընդամենը միայն 12 լրագիր: Մի ուրիշ գյուղացի գրում եր. «Ազատ

ժամանակը լրագիր կամ ոգտակար գիրք կարդալու մասին խոսք անդամ չի կարող լինել: Զքավորը վո՞րտեղից վերցնի գիրք կամ լրագիր գնելու փող»: Յերրորդ գյուղացին նշում եր. «Քիչ թե շատ կարգին դրքի գինը հավասար է 0,5 ցենտներ հաճարի գնին»:

Գյուղի անկուլուրականությունն ու խավարը աննվարդընդի յեն: Յեկ միանդամայն ճիշտ եր նշում «Письма крестьян»-ի նամակներից մեկի հեղինակը, վոր այդ խավարը «ինչ-վոր մեկը պահպանում է»: Լեհ գյուղացին հասկանում եր, վոր կապիտալիստներն ու կալվածատերերը շահագրգուլած եյին գիտակցորեն աշխատավորներին պահելու խավարի և տղիտության մեջ: Իրենք՝ լեհական իշխանություններն ել հարկ չեյին համարում այդ թագանցնել: Վարչավայրի քաղաքային վարչության լուսավորության բաժնի դիրեկտորը, —ինչպես իր ժամանակին հաղորդում եր «Тыдзень роботничий» լրագիրը, —ուսուցիչների խորհրդակցությանն ուղղակի հայտարարեց, վոր «կիրթված տաս քաղաքացին պետությունը ալեկի շատ գլխացավանք է պատճառում, քան մի ամբողջ հազար անդրագետներ»:

Պաներն ու կապիտալիստները լավ գիտեյին, թե մասսաների գիտակցության մթագնմանն ինչպես ուժեղ եյին նպաստում քննները, տերտերները, ուրբինները և այլն:

Ամեն կերպ կասեցնելով աշխատավորների կուլտուրական զարգացումը, լեհական իշխանությունները բոլոր ուժով պաշտպանում եյին հոգևորականությանը, և առաջին հերթին կաթոլիկ հոգևորականությանը: Լեհաստանում քսենձները շատ արտօնյալ դիրք ունեյին, նրանց իշխանությունը գյուղում շատ մեծ եր: Նրանց ծառայելու միջու պատրաստ եյին չինովնիկներն ու վոստիկանները: Բավկական եր, վոր քսենձը մի խոսք ասեր միայն—և գյուղացու շուրջը կակսեյին վոստիկանական անվերջ հետապնդումները: Քսենձներն աչալրջորեն հետևում եյին, վորպեսզի աշխատավոր գյուղացիներն ապրեյին «աստծու յերկյուղով», այսինքն՝ հնապանդ լինեյին Փաշխտական ուժեմին, յենթարկվեյին չինովնիկներն ու վոստիկաններն, ժամանակին վճարեյին հարկերն ու անտրասունդ թույլ տային կալվածատերերին, կապիտալիստներին ու չինովնիկներին, վոր թալանեն իրենց: Գյուղի հետամնաց խավերի վրա ունեցած իրենց ազգեցությունը քսենձները կարողանում եյին սոսապործել սնոտիխապաշտություն պահպանելու և աշխատավորների միջև ազգային յերկարակություն սերմանելու համար: Նրանք կապիտալիստների և կալվածատերերի ձեռքով քայլքայլող

Դյուղացիներին գրգռում եյին հրեաների դեմ, նպատակ ունենաւ-  
լով ուշադրությունը չեղել աշխատավորների թշվառությունների  
գլխավոր հանցավորից և յելք տալ դյուղացիների կուտակված  
ցամժամանը:

Կրոնական հաշիչն առանձնապես ուժեղ եր արմատավորվում  
գեղջկուհիների մեջ: Իբենց քարոզներում քսենձները բացահայ-  
տորեն դեմ եյին դուրս գալիս դյուղացի յերեխաների, առանձ-  
նապես աղջիկների, դպրոց հաճախելուն:

Յեկեղեցին խոշոր հողատեր եր. յեկեղեցական բարձր հար-  
կերը կեղեքում եյին դյուղացուն. քսենձները դյուղում զրադվում  
եյին վաշխառությամբ. նրանք բացահայտորեն պաշտպանում  
եյին կալվածատերերին և դյուղացիներին ատելի ուեժիմը: Այս  
ամենը հասցնում եր այն բանին, վոր տարեցտարի աճում եր  
դյուղացիների թշնամանքը դեպի հոգմորականությունն ու յեկե-  
ղեցին:

Կապիտալիստական բոլոր յերկրներում կապիտալիստների  
կողոպտած դյուղացիության լայն խալերը գուրկ են մարդկու-  
թյան կուլտուրական նվաճումների բարիքներից ոգտվելու հաս-  
րավորությունից: Այդ նվաճումները գարձված են քաղաքների  
բնակչության հարուստ խալերի սեփականությունը: Այս տեսա-  
կետից կապիտալիստական բոլոր յերկրներում քաղաքի և դյուղի  
միջև գոյություն ունի մեծ գժտություն: Սակայն շատ սակավ  
տեղերում այլ գժտությունն այնքան մեծ չե, ինչպես լեհաստա-  
նում եր:

## ԲԱՏՐԱԿՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎԱԶՈՒՐԿ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Լեհաստանի աշխատավորները գուրկ եյին նույնիսկ այն  
խղճուկ իրավունքներից, վորոնցով ոգտվում են բուրժուական  
դեմոկրատիայի յերկրների աշխատավորները: Կառավարությունը  
սերառեն կապված եր կալվածատիրական վերնախալի Հետ:  
Զգտելով այդ վերնախալի ձեռքում պահել հողը և դյուղացինե-  
րին անարգել շահագործելու հնարավորությունը, կառավարու-  
թյունը դիմում եր ամենասանձարձակ վոստիկանական կամայա-  
կանության և արյունոտ տեռորի: Վոստիկանական ամենափոքք  
պաշտոնյան գյուղում հաճախ անսահման իշխանություն ուներ  
դյուղացու բախտի վրա: Զինովիկիների ու ժանդարմների ինքնիշ-

խանությունը, «իշխանություններին դիմադրելու համար» դյու-  
ղացիներին ծեծելու ու սպանելը սովորական յերեսույթ եյին լե-  
հաստանում, մանավանդ Արևմտյան Ռեկրախնայում և Արևմտյան  
Բելոռուսիայում: Գյուղ եյին ուղարկվում պատժիչ ջոկատներ:  
Լեհական կառավարության ձախողակ դրուխ գեներալ Մալվոյ-  
Սկլավեկովսկին փորձված «խաղաղացնող» եր: Նրան են պատկա-  
նում այս խոսքերը. «Վոստիկանությունը հենց նրա համար եւ  
դյուղություն ունի, վոր կրակի, նա կրակում ե և կկրակի»:

Մենք առաջ արդեն մատնանշել ենք, վոր Արևմտյան Բել-  
ռուսիայում և Արևմտյան Ռեկրախնայում կալվածատերը դյու-  
ղի համարյա անսահման տերն եր: Բայց բուն լեհաստանում եւ  
կալվածատիրոջ իշխանությունը բատրակների և շրջակայքի դյու-  
ղացիների վրա բացառակես մեծ եր, իսկ վոստիկանական և չի-  
նովնիկական պարարտը փաստորեն կախման մեջ եր դրված կալ-  
վածատիրոջից: Ռւստի կալվածատերը դյուղում անում եր այն  
ամենը, ինչ իր քեֆն եր ուղում, և իր քմահաճույքով դատաստան-  
եր տեսնում: «ՌՈՅՈՆԻԿ» լրագիրը հաղորդում եր. «Կրակովի  
վոյեվոդության Կոլսկի գավառի լեհչի կալվածքում կառավարի-  
չը ճիպոտվ ծեծեց և վոտքով տրորում եր բատրակ լեռն Ժու-  
րավիչին: Յերբ ծեծվողին պաշտպանելու դուրս յեկալ նրա հայր  
Ստանիսլավ Ժուրավիչը, ապա կառավարիչը ծեծեց նրան և ։  
Հայր և վորդի գնացին գանդատվելու կալվածատիրոջը՝ Վիշ-  
նեսկուն, բայց նա հայհոյեց ծերունի Ժուրավիչին, իսկ վորդուն  
միքանի անդամ Խիեց ճիպոտվ: Վոստիկանությանը տված զան-  
գատը վոչ մի հետեանք չունեցով: Մի ուրիշ կալվածատերը, Մեր-  
ժինսկին, հենց նույն Կրակովի վոյեվոդությունից, իր դրասե-  
նյակը կանչեց մի դարբնի և իր կառավարչի հետ մեկտեղ սկսեց  
ծեծել նրան: Այդ ինքնաղատաստանը նախորոք եր նախապատ-  
րաստված, վորովհետեւ կալվածատերը նախ փակեց բանվորի  
թերանը, իսկ կառավարիչը սկսեց նրան մահակով ծեծել:»

Կալվածատերերի և նրանց վարձկաների ծեռքով բատրակնե-  
րին ու դյուղացիներին վոչ միայն ծեծելը, այլ և սպանելը սո-  
վորական գործ եյին պահական լեհաստանում և մնում ելին  
միանդամայն անպատիժ:

Լեհական հայտնի կին գրող Վանդա Վասիլեվսկայան «ՌՈՅՈ-  
ՆԻԿ» լրագրի մեջ (1937 թ. հունիսի 21-ին) գետեղել և մի յերի-  
տառարդ դյուղացու սպանության նկարադրություն:

«Ինձ հաղորդեցին, վոր Սոկոլովի գավառի Սալիցա-Բրոնի-

գա գյուղում պահակները սպանել են մի յերիտասարդի: Այդ հանցագործության մանրամասնություններն այնքան սարսափելի եին, վոր յես այդ ամենը համարում եյի չափազանցություն և բամբասանք: Հարկադրված յեղա դնալ և դործը ստուգել տեղում: Ստեֆան Սավիցկին, 25 տարեկան մի յերիտասարդ դյուզուղի, լողանում եր լճակում, վորը պատկանում է կոմս Ռոտրով-ոկուն, Բարտկովի կարմածքում: Յեկան յերկու պահակ հատկապես վարժեցված չներով, նման այն չներին, վոր յերբեմն պահում էյին Ամերիկայում փախստական նեղերին վորսալու համար: Պահակները յերիտասարդին հրամայեցին ջրից դուրս գալ, իսկ այնուհետև սկսեցին ծեծել նրան: Յերիտասարդն ոկսեց փախչել, իսկ չները նրա հետեւց: Յանկանալով փրկվել նրանցից, նա բարձրացավ լճակից վոչ հեռու մի ծառի վրա: Այն ժամանակ պահակները սկսեցին քարկոծել նրան, իսկ չները պատառուսում եյին նրա փեշերը: Հետազայում ծառի տակը գտան 24 մեծ քար: Շուտով մի պահակ ել յեկավ: «Գյաղայի փորին խիեք, փորի՞ն»—հրահրում եր նա իր ընկերներին: Սավիցկին յերկար ժամանակ րդավում եր, հետո ծառից ընկավ և լրեց: Այդ որը յերեքարթի յեր: Իսկ շաբաթ որը լճակին մոտեցած մի գյուղացի ջրի մեջ դառավ Սավիցկու ուռած մարմինը: Դիահատումը հաստատեց, վոր կոտրված և Սավիցկու դանդի մի մասը գաղաթի մոտ, խեղված և լյարդը, փորի ցածի մասը վերածված և շիլավիլավի... Երջակայքի գյուղացիները,—դրում և վասիլեևսկայայն, —կասկածում են, թե մարդասպանները պատիժ կրնեն: «Չափազանց ուժեղ և կոմս Ռոտրովսկին»: Բնորոշ ե, վոր սա այդ պահակների անպատիթ մնացած արդեն առաջին հանցագործությունը չե: Զնայած վոր նրանց ձեռքերը մեկ անգամ չե, վոր ներկվել են մարդկային արյունով, բայց այդ պահակները իրենց տեղերումն են մնում: Բարտկովում կատարված հրեշային սպանությունը ինչ-վոր պատահական բան չեր, այլ իրենից ներկայացնում եր ողակներից մեկը հենց միենույն սիստեմի շլթայում... Մեր մամուլում արդեն չափազանց հաճախակի յեն դարձել կարծ հաղորդագրություններ, այն մասին, վոր մարդկանց սպանում են անտառում հափաքած մեկ կապոց յախի համար, մեկ փոքր զամբյուղ սունկի համար, մեկ աման մորու համար»:

Սպառուծանակ, ճնշում, կամայականություն, —այս եր Լեհաստանի գյուղացիության բաժինը:

## ԱՆՈՐԻՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՏԵՌՈՐԻ ԹԱԳԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Կեղեցված աղջային վուգրտմանությունների և լեհական աշխատավորական մասսաների ատելությամբ շրջապատված՝ Լեհաստանի տիրապետող դասակարգերն իշխանության դլուր մնում եյին ամենասանձարձակ տեսորի ողնությամբ:

Լեհաստանի բանվորներն ու գյուղացիները մի անգամ չե, վոր վուգի յեն յելել իրենց իրավունքները պաշտպանելու: Լեհաստանի բանվոր դասակարգի մեջ ամուր եյին Ռուսաստանի պրոլետարիատի և գյուղացիության հետ 1905 թվականին ցարիզմի գեմ մղած համատեղ հեղափոխական պայքարի սքանչելի արագիցիաները: Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունը և ԽՍՀՄ հաղթական սոցիալիստական շինարարությունը հեղափոխականացնող աղջեցություն եյին դործում Լեհաստանի բանվորական շարժման վրա: Լեհաստանի պրոլետարիատը համառ պայքար եր մղում լեհական բուրժուազիայի և կառավարության դեմ:

Այն թափ ստացավ նաև գյուղացիական շարժումը: Ամենից պվելի սուր բնույթ նա ուներ Արեմտյան Ռևլահնայում և Արեմտյան Բելոռուսիայում, վորտեղ կարմածատերերի դեմ գյուղացիների մղած պայքարը սերտորեն միահյուսվում եր ուկրաինական և բելոռուսական աշխատավորների պայքարի հետ ընդդեմ լեհական զավթիչների:

Վորքան ավելի եյին աճում մասսաների ուժուհությունն ու թշնամանքը զետի կառավարությունը, այնքան ավելի ուժեղ եր դառնում անիրավության ուժիմը: Լատ լեհական «սահմանադրության» աշխատավորական մասսաները գրկված եյին վորեւ քաղաքական իրավունքներից: Ամբողջ իշխանությունը պատկանում եր միայն լեհական պրեզիդենտին, իսկ սեյմը և սենատը նրա անդուր կցորդներն եյին միայն: Պրեզիդենտն ու նրա մինիստրներն աղատ եյին ուղած բոպեյին ցրելու յերկու սրալատն ել: «Սահմանադրությունը» չեր ճանաչում աշխատավորների քաղաքացիական իրավունքները, նա չեր ճանաչում աշխատանքի վոչ մի պաշտպանություն, թույլատրում եր փոքրահասակների շահադում, վերացրեց հողային ուժիրմը: Լեհաստանի ընտրական որենքները բանվորներին և գյուղացիներին բոլորվին զրկում եյին սեյմի իրենց ներկայացուցիչներն ընտրելու ամեն տեսակի հնարավորությունից, ըստորում աշխատավոր բնակչության հշանակալից մասը նույնիւկ իրավունք չուներ ընտրություններին

մասնակցելու : Բանվարների և գյուղացիների առնջանքները ու դնդակահարությունները, ռազմա-պաշտամյին գատարաններ, արյունոտ խաղաղացումներ—այս եր պանական Լեհաստանում կառավարման մեթոդների արսենալը : Հստ պաշտոնական տվյալների, վերջին տարրիներին գյուղացիները կազմում ելին լեհական բաներում առնջիած բանտարկյաների 40—50%-ը և նույնիսկ 60%-ը :

Լեհաստանի կառավարող դասակարգերի գաղանային դեմքն առանձնապես ուժեղ յերեան եր գալիս աղջային-սպատազրական շարժման դեմ մղած պայքարում : Յերբ 1930 թվականին Արևմտյան Ռուկահինայով մեկ բողոքի լայն ալիք ծավալվեց ընդդեմ իրավածափական կեղեքնան և լեհական զամփիչների կամացականության, կառավարությունն արևմտառւկրաինական գյուղն ուղարկեց հակայական քանակությամբ վոստիկանական ջոկատներ և բանդաներ, վորոնք նշանակալից մասով կազմված ելին հատկապես այդ նպատակի համար բանտերից աղատմած քրեական հանցագործներից, կալվածատերերի աղաներից և Փաշինտական դրուժիննիկներից : Սկզբեց արյունոտ խաղաղացում : Տասնյակ դյուլերի բնակչությունը յենթարկվեց անխորիր ծեծի, կանաչք բռնաբարվում և ծեծվում ելին : Ամբողջ գյուղեր թալանվեցին և այրվեցին, գյուղական ուկրաինական կոռպերատիվները և կուլտուր-լուսավորական կազմակերպությունների շենքերը քարուքանդ արվեցին : Շատ գյուղացիներ սպանվեցին : Հարյուրավոր աշխատավորներ գատապարտվեցին յերեարատու բանտարկության :

1933 թվականի ամառը, կվոյի և Կրակովի վոյեվոդություններում գյուղացիական հուղումները ճնշելու ժամանակ, վորոնց մասնակցում ելին ալելի քան 100 հազար գյուղացի, լեհական գործերն ու ժանդարմերիան սպանեցին և վիրավորեցին հարյուրավոր գյուղացիներ : Խաղաղացնողները «Հրի ու որի» մատնեցին Արևմտյան Ռուկահինան, ամբողջ գյուղեր այրելով և ամբողջ գագաները քայլայելով :

1937 թվականի աշնանը, համարյա թե ամբողջ լեհաստանն ընդդրկած «գյուղացիական գործադուլը» ճնշելու ամենալաժման բնույթ ելին կրում վոստիկանության և գորքերի պատժիչ գործողություններն Արևմտյան Ռուկահինայում և Արևմտյան Բելոռության ամառական գործադուլը : Բավական ե բերենք կվոյի վայեվոդության Յարուլիմի գավառում տեղի ունեցած արյունոտ դեպքերի նկարագրությունը, վորը մենք վերցրել ենք 1938 թվականին գյուղացիական կուսակցության («Строництво Людове») ղեկավարության հրա-

ռարարակած հատուկ բյուլետենից . «Յաբասլավի դավառում համարյա չկա մի գյուղ, —ասված և բյուլետենի մեջ, —վորուեղ սպանված շինի, առնվազն մեկ կամ յերկու գյուղացի : Ընդհարումների վայրերում շատ տաճայակ սպանվածներ մնացին : Վերաբարբարակածների քանակը վորոշել չե կարելի, վորովհետեւ վիրավորված գյուղացիները թագնվում ելին անտառներում : Պատճիչ ջակատները մոտենալիս գյուղացիներն ամբողջ գյուղերով հետանում ելին անտառները : Միջանի ամիս անց գաշտերում դեռ դըմանում ելին գյուղացիների դիմումները : Գյուղացիներին պատճառած նյութական վնասները հաշվելու հնար չկա» : «Վոստիկանությունը, —տաված և այսուհետեւ բյուլետենի մեջ, —ըրջապատում եր գյուղերը, հիմնահատակ ավերում եր գյուղացիական խրճիթները, վոչնչացնում եր գյուղատնտեսական գործիքները և անային ամբողջ յեղած-չեղածը, սրաբենամթերքը և հաղուստեղենը, մատուկներին դուրս եր գյուղ որորոցներից, առանջում և բռնաբարում եր կանանց» : Դատաստանի սաբսակներից փախած շատ գյուղացիներ յերկար ժամանակվա ընթացքում չելին վերապատում իրենց գյուղերը : Հարյուրավոր գյուղացիներ ձերբակալվեցին և առժանակիր բանտի գատապարտվեցին :

Կառավարող դասակարգերի հրեշտակին բարբարոսությունը բացահայտորեն յերեան հանեց լեհական պետության ներքին անզրությունը : Դեռ 1930 թվականին Փրանսական գիտնական պրոֆեսոր Ռենե Մարտելը Արևմտյան Ռուկահինայի արյունոտ խաղաղացման կատակցությամբ գրում եր . «Այդ դեպքերը նորից հայտարենցին լեհական պետության բուլությունը : Այդ պետությունն ինքն իր մեջ կրում է մահվան և խայֆայման նապմբը : Նրա կազմալուծման պրացես անխուսափելի յե . արտաքին բազատական դեպքերը կարող են արագացնել պայրյունը, բայց կեղեմման, գաղութային սորկացման և բռնի լեհացման բազատականությունն ինքն է այդ պետությանը մռանցնում իր վախճանին : Ժամանակակից լեհաստանը մի հրեշտական պակաս, և պանական լեհաստանի լիտակատար կրախը իրականություն գարձագի : Արևմտյան Բելոռության Ռուկահինայի աշխատավորները հասան իրենց աղատագրությանը :

Անցել և մեկ տասնամյակից ավելի պակաս, և պանական լեհաստանի լիտակատար կրախը իրականություն գարձագի : Արևմտյան Բելոռության Ռուկահինայի աշխատավորները հասան իրենց աղատագրությանը :

ԱՐԵՎԱՏՍԱՌԻԿՐԱՒՆԱԿԱՆ, ԱՐԵՎԱՏՍԱԲԵԼՈՌՈՒՆԱԿԱՆ  
ՅԵՎ ԼԵՀԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԶԳՏՈՒՄԸ  
ԴԵՊԻ ԽԱՐՀՐՄԱՅԻՆ ՄԻՋԻԹՅՈՒՆԸ

Առցիալովմի հաղթանակը ԽՍՀՄ-ում հսկայական հեղափոխական ներգործություն արեց Լեհաստանի գյուղացիության վրա և ուժեղացրեց նրա ձգտումը դեպի Խորհրդային Միությունը:

1917 թվականի հոկտեմբերին Խուսաստանի բանվորներն ու գյուղացիները Լենինի-Ստալինի կուսակցության զեկավարությամբ տապալեցին կալվածատերերի և բուրժուազիայի լուծը և խորհրդային իշխանություն հաստատեցին: Խորհուրդների յերկրի աշխատավոր մասնակին կարողացան պաշտպանել նրա նվաճումները համառ քաղաքացիական պատերազմում և ինտերվենտների դեմ մղած պայքարում: Այդ նվաճումների հետևանքով արմատապես փոխվեց խորհրդային գյուղացիության գրությունը, վորին խորհրդային իշխանությունը հանձնեց 150 միլիոն հեկտարից ավելի նախկին կարմածատիրական, պետական և վանքապատկան հողեր:

Այդ հողը գյուղացիներին տրվեց առանց հետզնման, վրասես համաժողովրդական սեփականություն: Իսկ վորակեսդի այդ հողը չկարողանար ընկնել հարուստ մարդկանց ձեռքը և վորակեսդի նրանից ոգտվելիյն միմիայն աշխատավորները, մեկն սահմանվեց, վոր այն չի կարելի վոչ ծախել, վոչ զնել: Խորհրդային իշխանությունը գյուղացիներին աղատեց կարմածատերերին և բանկերին ունեցած հսկայական պարագից: Զքավորությանն ու միջակներին նա կուլակությունից իր պաշտպանության տակ վերցրեց և սկսեց նրանց տնտեսական ողնություն ցույց տալ դրամական փոխառվություններով, սերմացվով և մեքենաներով: Կուլակային շահագործումը վերջնականապես լիկիդացիայի յենթարկելու համար, կարերից գյուղացիության դուրս գալուն և ունենոր կյանքի հասնելուն ողնելու համար հարիափոր եր վերջ տալ մանր տնտեսությունների դարավոր մասնաշաճությանը, նրանց աշխատանքի խղճուկ գործեքներով հանդերձ: Վճռական պայքար մղելով կուլակության դեմ և բայնորեն արմատավորելով կոռուպտափական հասարակայնությունը, Լենինի-Ստալինի կուսակցությունը համոզելու և ցուցաբերման ճանապարհով գյուղացիական մասնաերին հասցնում եր ընկերային, կոլեկտիվ տնտեսության: Առաջավոր սոցիալիստական հողը ինդուստրիայի ստեղծումը հնարա-

կորություն տվեց արագացնել մանր-գյուղացիական տնտեսությունների միավորումը խոշոր կոլեկտիվ տնտեսությունների մեջ: 1929/30 թվականին ծավալվեց գյուղացիների՝ ամբողջ գյուղերով, շրջաններով, մարզերով մասսայաբար՝ կոլտնտեսություններ մանելը:

«Համատարած կոլեկտիվացումը նշանակում եր գյուղի ըրջանում գտնվող բոլոր հողերի անցում կոլտնտեսության ձեռքը, բայց այդ հողերի զգալի մասը կուլակների ձեռքին եր դաշնվում, —այդ պատճառով գյուղացիները կուլակներին վկնդում եյին հողից, կուլակաթափ եյին անում նրանց, խում եյին անասունները, մեքենաները և Խորհրդային իշխանությունից պահանջում եյին կուլակներին ձերբակալել ու արտաքսել»<sup>1</sup>: Կոլտնտեսությունների ու խորհնտեսությունների աճման կապակցությամբ խորհրդային իշխանությունը 1929 թվականի վերջերին «...վերացրեց կուլակաթափության արդելքը: Նա գյուղացիներին թույլատրեց կոլտնտեսությունների ոգտին կուլակությունից բանադրավելու անառունները, մեքենաները և այլ ինվենտարը: Կուլակությունն եքսպրոպրիացիայի յենթարկելեց: Նա եքսպրոպրիացիայի յենթարկվեց նույնպես, ինչպես 1918 թվականին արդյունաբերության ընազավառում եքսպրոպրիացիայի եյին յենթարկելել կապիտալիստները, սակայն այն տարբերությամբ, վոր կուլակության արտադրության միջոցներն այս անդամ անցան վո՞չ թե պետության ձեռքը, այլ միավորված գյուղացիների ձեռքը, կոլտնտեսությունների ձեռքը:

Այդ ամենախոր հեղաշրջում եր, մի թուիչք հասարակության հին վորակական կացությունից դեպի նոր վորակական կացությունը, մի հեղաշրջում, վորն իր հետևանքներով 1917 թվականի հոկտեմբերի հեղափոխական հեղաշրջմանը հավատար նշանակություն ուներ:

Այս հեղափոխության յուրորինակությունն այն եր, վոր այն կատարվեց վերևից, պետական իշխանության նախաձեռնությամբ, վորին ցածրից ուղղակի կերպով ողնում եյին գյուղացիների միլիոնավոր մասնակին, վորոնք պայքարում եյին ընդդեմ կուլակային ստրկության, հանուն կոլտնտեսային ազատ կյանքի»<sup>2</sup>: Դասակարգային թշնամու դեմ մղած համառ պայքա-

1 Համկ(բ)կ պատմության համառու դասընթաց, Հայ. Հրատ., էջ 408:

2 Համկ(բ)կ պատմության համառու դասընթաց, Հայ. Հրատ., էջ 410—411:

ըում կոլտնտեսային կարգը հաղթանակեց։ Կոլտնտեսային դյուրացիությունը ստացավ 80 միլիոն հեկտար կուլտակային հողեր վորպես այն կալվածատիրական, վանքապատկան և պետական հողին, վոր խորհրդային իշխանությունն առաջ եր տվել դյուրացիությանը։ Աշխատավոր դյուրացիության — անցյալում չքամբուների և միջակների — ոգտագործման տակ այժմ գտնվում է մոտ 371 միլիոն հեկտար, այսինքն՝ համարյա 3 անդամ ավելի հող, քան նրանք ունեցին ցարիզմի որով։ Բատվորում հողն ամրացված և կոլտնտեսություններին ձրի և անժամկետ (առհավետ) ուժագործելու։

Խորհրդային կոլտնտեսային գաշտերում դործադրվում է նշանակելիութեն ավելի բարձր մեքենական տեխնիկա, քան ԱՄՆ-ում՝ ամենազրդացած կապիտալիստական հողագործության յերկրում։ ԽՍՀՄ մեջ ստեղծվել է մեքենա-արակտորային կայանների մի վիթխարի ցանց, վորոնք 1938 թվականին սպասարկում եյին համարյա բոլոր կոլտնտեսություններին։ Մինչև այդ ժամանակը մեքենա-արակտորային կայաններն ունեցին մոտ 496 հազ., արակտոր, մոտ 105 հազ. կոմբայն, տանըյալ-հաղարավոր ապրանքատար ավտոմեքենաներ և ամեն տեսակի այլ մեքենաների ու գործիքների հսկայական պարկ։

Խորհրդային կառավարությունն իր վրա վերցրեց այդ զորեղ տեխնիկայով կոլտնտեսային դյուրացիությանը զինելու բոլոր ծախսերը։ Այդ ծախսերը շատ միշտարդ ուռւրիներ են հաշվվում։

Կոլտնտեսային կարգերի հաղթանակով յերկրում սկսվել է հողագործության՝ անցյալում չտեսնիած ծաղկում։ Զափազանց աճել են աշխատանքի արտադրողականությունն ու բներքատվությունը Խորհրդային Միության դյուրատնտեսության մեջ։ Հացահատիկային տնտեսության մեջ աշխատանքի արտադրողականությունը 1928-ից մինչև 1937 թվականն աճել է ավելի քան 3,2 անգամ։

Մեր ձեռքով հաջողությամբ իրականացվող ստալինյան յերրորդ հսկամյակի վերջերին արտադրանքի հետագա աճումն ամբողջ դյուրատնտեսության մեջ պետք է կազմի 57%՝ 1937 թվականի նկատմամբ։

Լիովին արգարացան ընկեր Ստալինի նշանակոր խոսքերը, վոր ասել ե նու 1929 թվականին, թե «... մեր յերիտասարդ խոչը սոցիալիստական հողագործությունը (կոլտնտեսայինը և

խորհութեայինը) մեծ ապագա ունի, վոր նա աճման հրաշքներ և յերկան բերելու»<sup>1</sup>։

Խորհրդային դյուրացիությունն ընդմիշտ դուրս է յեկել աղքատությունից և վատահորեն քայլում է զեսլի յերջանիկ և ունեցող կյանք։ 1937 թվականին կոլտնտեսությունների մեծ մասի մեջ աշխարին տրվում եր 5-ից մինչև 12 և շատ կոլտնտեսություններում նույնիսկ 20 կերպարամ հացահատիկ, չհաշված գյուղատնտեսական մթերքների այլ տեսակները և փողը։

Աշխարին տրվող յեկամտի աճմանը զուգընթաց տեղի յէ ունենում ինչպես կոլտնտեսականի ընտանիքի յուրաքանչյուր աշխատանակ անդամի, այնպես ել առանձին ծիփ աշխարիրի թվակելացումը։ 1937 թվականին մեկ աշխատունակին ընկնում ել 194 աշխարի՝ 1935 թվականի 180-ի դիմաց, իսկ մեկ ծիփն 438 աշխարի՝ 1935 թվականի 378-ի դիմաց։

«Յերկան յեկան միլիոնավոր կոլտնտեսային տնտեսություններ, վորոնք մեկ տարվա ընթացքում ստացել են 500-ից մինչև 1500 փութ հացահատիկ հացահատիկային ռայոններում, և վորոնք ստացել են տասնյակ հացարավոր ոռութիների տարեկան յեկամուտ՝ բամբակի, ճակնդեղի, վուշի, անասնաբուծական, դինեղործական, ցիտրուսային, պտղա-բանջարաբուծական ռայոններում։ Կոլտնտեսությունները զարձան ունեուրուսությունների կառուցումը դարձավ կոլտնտեսային տնտեսության դլամայոր հոգսը, վորովհետև մթերքների այն պահանջաները, վորոնք հաշվի եյին առնված տարվա անհշան պաշարների համար, չեյին բավարարում կոլտնտեսականների նոր պահանջների մի տասերորդական մասին անդամ»<sup>2</sup>։

Արագորեն աճում է միլիոնատեր կոլտնտեսությունների թիվը։ 1937 թվականին կոլտնտեսությունների ընթացիկ հաշիվներում կար 2314 միլիոն ոռութի։ Խիստ աճել են անբաժանելի ֆոնդերին արվող դրամական մասհանումները (1935 թվականին միջին հաշվով մեկ կոլտնտեսությանն ընկնող 5820 ոռութուց մինչև 7·310 ոռութի 1937 թվականին), ըստվորում անբաժանելի ֆոնդերի տեսակարար կշիռը բաշխված յեկամտի մեջ այդ նույն ժամանակաշրջանում իջել է 14,7%-ից մինչև 12,4%<sup>3</sup>։

<sup>1</sup> Ստալին, Լենինիզմի հարցերը, Էջ 293, 10-րդ հրատ., Հայ. հրատ., Էջ 377։

<sup>2</sup> Համեկ(բ)կ պատմության համառոտ դասընթաց, Հայ. հրատ., Էջ 457։

<sup>3</sup> ՏԵ՛ս «Большевик» № 10, 1939 թ. Ժայռ, Էջ 44։

Խիստ փոխվել են դյուղի կուլտուր-կենցաղային պայմանները : Հիմա կոլտնտեսություններում կան հիմնդանոցներ, ամբուլատորիաներ, գեղատներ, մանկամատրներ, միջնակարգ դպրոցներ, գրադարաններ, սեփական հանդստյան տներ և Փիզիոլոգային ստադիոններ : Կոլտնտեսականներն աղահորեն նետվեցին դեպի կուլտուրան ու դիտությունները, գեղի վորը տանող բույրը ուղիները բաց են նրանց համար :

Խորհրդային Միության աշխատավորների պատմական նվաճումներն իրենց մարմնացումը դտան Ստալինյան մեծ Սահմանադրության մեջ, վորն ապահովում է գեմովրատիզմի բաղմակողմանի զարգացումը, աշխատավորների ամեն տեսակի մասնակցությունը պետության կառավարմանը և յերկրի ամբողջ հասարակական կյանքին : «Այնպիսի կարողերը, վորտեղ աշխատավորներն իշխանության դրուխ են կանոնած ու վորտեղ աշխատանքի մարդուն հասարակության մեջ պատվավոր տեղ և պատկանում, չեն կարող չգրավել բոլոր յերկրների աշխատավորների համակրանքը»<sup>1</sup> :

Վոչ մի կեղտուա հնարանքով, վոչ մի ստոր դրաբարանքով լեհական բուրժուացիային չհաջողվեց դյուղացիներից թափցնել ձշմարտությունը խորհրդային կոլտնտեսային դյուղացիության յերջանիկ, փարթամորեն ծաղկող կյանքի մասին : Լեհաստանի դյուղացիական լայն մասսաների կողմից դեպի խորհրդային կոլտնտեսությունները ցուցաբերած հսկայական հետաքրքրությունը դեռ միքանի տարի առաջ հարկադրված յեղակ բացահայտութեն ընդունել այն ժամանակի հողագործության լեհական մինիստր Նախոնենիկուլ-Կլյուկովսկին, վորը 1933 թվականին սեմում հայտարարեց, թե «Լեհաստանի դյուղացիական յերիտասարդությունը հիանում և ոռուսական կոլեկտիվացումով» : Գյուղացիական կուսակցության աջ առաջնորդները նույնական դանդատվում ենին, թե «գյուղացիները, առանձնապես այլելի յերիտասարդները, հենց միայն այն մասին են խոսում, թե ինչ և տեղի ունենում է ՍՀՄ-ում . գյուղացիական յերիտասարդությունը մեծ ուշադրությամբ հետևում է, թե ինչ և ձեռնարկվում է կոլեկտիվացման զարգացմամբ» :

Գյուղացիության մեջ աճում եր ատելությունը և թշնամանքը

<sup>1</sup> Մոլոտով, Հոկտեմբերյան հեղափոխության քսանամյակի առթիվ, հայրատ., էջ 15:

դեպի բուրժուական-կալվածատիրական լեհաստանը : 1938 թվականին հրատարակված «Молодое поколение крестьян» ժողովածությունը մեջ ունեցիրոն «Եрիտասարդության կաթոլիկական միության» քարտուղարը գրում է . «Դյուղը լեհական պետության մեջ տեսնում է իր թշնամուն և ատում և նրան : Նա նրան ամբողջ հոգով կործանում է ցանկանում : Կոմունիզմի մասին գյուղը յերազում է վորագես ստրկությունից աղատադրվելու մասին» : Նշենք, վոր այսուղ խոսքը բուն լեհաստանի դյուղացիների տրամադրությունների մասին է :

Առանձնապես մեծ է արևմտա-ուկրաինական և արևմտաբելուսալիսն աշխատավոր դյուղացիության սերը դեպի Խորհրդագյին Ռւկրաինան և Խորհրդային Բելուստսիան : «ԴԱԼՕ» լրագիրը պետք է անկեղծորեն ընդուներ . «Վոչ միայն կոմունիստներին թշնամի կամ համակիր մամուլի միջոցով, այլ նաև Խորհրդագյին Միության մեջ ապրող աղգականների ու ծանոթների նամակների միջոցով, ամեն տեսակի այլ աղբյուրների միջոցով ուկրաինական դյուղ են մտնում նոր լուրեր : Յեվ բոլոր կասկածները խեղզվում են մեկ, ուկրաինական մասսաներում շարունակալի այլելի աճող համոզմունքով, վոր այնտեղ, Խորհրդային յերկրում, սահմանի այն կողմը, կյանքը դառնում է ավելի ու ավելի բարձր...» :

Խորհրդային Միության մեջ իրականացել են աշխատավորների լավագները : Այսուղ մարդկության պատմության մեջ առաջին անդամ ընդմիջտ վոչնչացված և մարդու շահագործումը մարդու կողմից, վոչնչացված և կարիքը և կեղեցումը : «ԴԱԼՕ»-ն չեր կարող թագցնել, վոր Սրեմտյան Ռւկրաինայի դյուղացին իր սեփական սովահար գյուղությունը գառնությամբ եր համեմատում իր խորհրդային յեղացրների լիառատ կյանքի հետ, «Լեհաստանի ուկրաինացի դյուղացու մեջ անհաղթահարելի ուժով համեմատություն և ծագում իր սեփական կյանքի հետ : Նրա կյանքը տարեցարի գառնում և ավելի ծանր և ավելի վատ : Աճում է կարիքը գյուղում... Լեհաստանի արևմտա-ուկրաինական դյուղացին ակամա մտածում է . այնտեղ, Խորհրդային յերկրում, կյանքը զնալով ավելի լավանում է, իսկ այստեղ շարունակ ավելի ուժեղ և ճնշում կարիքը : Վո՞րտեղ եւ ուրեմն լավ, այստեղ թե այնտեղ... Մասսաների հայացքներն ուղղվում են դեպի Արևելք...» :

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունը

յերկրագնդի <sup>1/6</sup> մասում վոչնչացրեց ազգային ճնշումը և աղպային անհավասարությունը: Լենինի և Ստալինի կողմից աշխատավորների խոկական միջազգային յեղայրության և համերաշխության վորով դաստիարակված ոռւսական քանվորները նախկին ցարական Ռուսաստանի յերեմնի կեղեքված ժողովուրդներին ողնեցին աղատագրվելու կապիտալիստների և կալվածատերերի լծից և կառուցելու աղատ, յերջանիկ սոցիալիստական կյանք: Վոչնչացված ե անիստահությունը ժողովուրդների միջև, վորոնք հավասարության և հոժարակամության հիմունքներով միավորվել են վորպես միասնական միութենական պետություն: Ստալինյան Սահմանադրությունը, վորն ամրացրել է ԽՍՀՄ աշխատավորական ժամաների նվաճումները, ոռողորված ե խորհրդային ժողովուրդների այդ յեղայրության, դեպի յուրաքանչյուր աղջի աղատությունն ու անկախությունը տածած նրանց խորագույն հարգանքի վորով:

Խորհրդային իշխանությունն ապահովել է Միության բոլոր աղջությունների վիթխարի տնտեսական և կուլտուրական վերելքը: Բոլոր ազգային հանրապետություններում ստեղծված ե խոչըր արդյունաբերություն:

Ուկրաինական ԽՍՀ միայն խոչըր արդյունաբերության արտադրանքը 1937 թվականին հասել է 17·395 միլիոն ռուբլի գրանդիոզ թվի, 1913 թվականի համեմատությամբ ավելանալով համարյա 8·3 անգամ: Բելոռուսական ԽՍՀ արդյունաբերությունը միևնույն ժամանակի ընթացքում աճել է նույնիսկ 21 անգամ, իսկ Թուրքմենական ԽՍՀ-ինը—187 անգամ:

Աղջային հանրապետությունների կոլտնտեսությունների ու խորհանտնեսությունների գաշտերում աշխատում են տասնյակ-հազարալոր տրակտորներ, վորոնք հեշտացնում են կոլտնտեսականների և զյուղատնտեսական բանվորների աշխատանքը: Միայն Խորհրդային Ուկրաինայում 1937 թ. վերջերին տրակտորային պարկի կարողությունը կազմեց ավելի քան 1·495 հազ. ձիու ուժ:

Խորհրդային Միության բոլոր ժողովուրդները ապրում են իրենց աղջային կուլտուրայի ծաղկումը: Ամրոցը յերկրով մեկ վիթխարի դպրոցական շինարարություն և ծալավել: Աղջային հանրապետություններում ուսուցումը կատարվում է մայրենի լեզվով:

Տարրական դպրոցը գլուխին ընդդրկել է բոլոր յերեխանե-

րին, իսկ միջնակարգ դպրոցը 1936/37 թվականին արդեն ներդրած վել եր մոտ 18 միլիոն յերեխա: Բոլոր ուսումնական հաստատություններում սովորողների ընդհանուր թիվը 1937/38 թվականին կազմել է ավելի քան 29,5 միլիոն՝ 1914 թվականի 8 միլիոնի գիշաց: Ներկայումս սովորողների թիվն ել ավելի յև աճել: Ի տարբերություն բուրժուական յերկրներից, ինչպես տարրական ու միջնակարգ, այնպես ել բարձրագույն կրթությունը Խորհրդային Միության մեջ ձրի յե, իսկ բարձրագույն դպրոցի և տեխնիկականների սովորողների մեծամասնությունը—մեկ միլիոնից ավելի—պետական թոշակ է ստանում:

Աղջային հանրապետություններում հաշվվում են տասնյակ-հազարալոր տարրական ու միջնակարգ դպրոցներ, տասնյակ ու հարյուրամուր բարձրագույն ուսումնական հաստատություններ: Միայն Խորհրդային Ուկրաինայում 1938 թվականին կար 123 բարձրագույն ուսումնական հաստատություն, իսկ մինչև սոցիալիստական հեղափոխությունը դրանցից յեղել են միայն միքանի հատ:

Բելոռուսական ԽՍՀ-ում խորհրդային իշխանությունը ստեղծել է 23 ԲՈՒՀ: Նույնիսկ այստեղ, վորտեղ առաջ ցարելովի կեղեքած ժողովուրդների աշխատավորները համարյա գլխովին անդադար ելին, հարյուր-հազարավոր պատանիներ ու աղջիկներ հիմա բարձրագույն կրթություն են ստանում: Միայն Ուգրեկան հայն որինակ, բարձրագույն ուսումնական հաստատություններ ավելի շատ կան, քան կային ամբողջ պանական Լեհաստանում:

Աշխարհը գեռ չի տեսել բարձրագույն դպրոցի այնպիսի զարգացում, բարձրագույն կրթության այնպիսի ծաղկում, ինչպիսին տեղի ունի ԽՍՀՄ-ում: Միենույն ժամանակ կապիտալիստական յերկրներում նկատվում է գիտության և կոլտնտեսական յաջմին 15-ին բարձրագույն դպրոցի աշխատավորների առաջին համարիութենական խորհրդակցությանը արտասանած իր ճառում ընկեր Մոլոտովը նշեց, վոր «միայն Խորհրդային Միությունը, բարձրագույն դպրոցի իր 550 հազ. սովորողներով, ունի ավելի շատ ուսանողներ, քան Յելլը-պայի մեծ տերությունների և Յապոնիայի բոլոր բուհերը միասին վերցրած»:

1 Մոլոտով, Բարձրագույն դպրոցի ժաման: Ճառ բարձրագույն դպրոցի աշխատավորների համարիութենական ասամին խորհրդակցությանը 1938 թ. մայիսի 15-ին, եջ 7, Գոսոլիտիզդատ, 1938 թ.:

Բայց բարձրագույն կրթության նույնիսկ այս վիթխարի աճուր-  
մը դեռ չի համապատասխանում Խորհրդային Միության ժողո-  
վուրդների հակայական պահանջներին։ Յեթե 1938 թվականին  
ԽՍՀՄ բարձրագույն ուսումնական հաստատությունները բաց-  
ելին թողել գիտության և տեխնիկայի բոլոր ճյուղերի 100 հազ-  
արիտատարդ մասնագետներ, ապա արդեն մերձավորագույն մի-  
քանի տարիներում շրջանավարտների թիվը կմեծանա մինչեւ  
տարեկան 170 հազ. և ավելի։

Յերրորդ հնդամյակում նախատեսվում ե բուհերում և բառու-  
ներում սովորողների թվի ավելացում մինչև 650 հազ. Հոգի,  
հետադայում բարձրացնելով բարձրագույն կրթության վորակը,  
ինչպես նաև լուրջ առաջշարժում ԽՍՀՄ բանվոր դասակարգի-  
կուլտուր-տեխնիկական մակարդակը ինժեներա-տեխնիկական աշ-  
խատանքի աշխատաղների մակարդակին բարձրացնելու վիթխարի-  
պատմական խնդիրն իրականացնելու դործում։

Աղբային հանրապետություններն արդեն հիմա ունեն տաս-  
նյակ ու հարյուր-հազարավոր իրենց գիտնականներն ու մասնա-  
գետները—բժիշկներ, ինժեներներ, դյուլաստեխներ, տեխնիկ-  
ներ և այլն։ Դրանք ունենոր խափերից յելածներ չեն, ինչպես  
բուրժուական հասարակության մեջ, այլ բանվորների, կոլտնտե-  
սականների և ինտելեկտուալիայի զավակներ։ Բազմազդ Խորհր-  
դային Միության յուրաքանչյուր ժողովուրդ պետության մեջ զե-  
կալար պոստերի յե առաջադրում իր բայլադույն տղաներին ու  
աղջիկներին։

Լեհական դամբիչների կողմէց իրենց ազգային զգացմունքի  
մեջ շարունակ սորուայցած, դաժան շահագործման յենթարկված՝  
Արևմտյան Ռեկախնայի և Արևմտյան Բոլոուսիայի աշխատա-  
վորները հիացմունքով եյին հետեւամ լենինյան-ստալինյան ազ-  
գային քաղաքականության մեծ հաղթանակներին։

Արևմտա-ռեկախնական դյուլացին գիտեր, վոր Խորհրդային  
Ռեկախնայում տեղի յե ունենում ռեկախնական կուլտուրայի  
չտեսնալած ծաղկում։ «Այսուղի, Զբրուչի այն կողմը (այսինքն՝  
Խորհրդային կողմում), —ըլում եր «Այլո»-ն, —լայնորեն տա-  
րածված ե ռեկախնական հողը։ Մեր դյուլացին գիտե, վոր այն-  
պեղ զպրոցները, թատրոնները, կինոն ռեկախնական են, նա  
տեսնում ե կամ կարող ե տեսնել Ռեկախնայի Պետական հրա-  
տարակչության հրատարակած ռեկախնական գրքեր։ իսկ յեր-  
բեմն ձեռք ե ընկնում նաև կիսկ լրադիրը ռեկախներն լեղվով։

Իսկ այստեղ նա նման վոչինչ չի տեսնում... Մեր կյանքի կա-  
րևորագույն յերկույթին ուղղախնական մասսաներում, առանձնա-  
պես հյուսիս-արևեմուտքում, Խոլմչչինայում, Վոլինում և Պոլե-  
սյեյում յեղած կոմունիստական, ավելի ճիշտ, խորհրդային տրա-  
մադրությունների աստիճանական, բայց անշեղ աճումն ե... Մեր  
մասսաների մեջ, առանձնապես մեր հյուսիս-արևեմտյան յերկը-  
ներում, կոմունիզմի աճումը դառնում ե անսովոր ահեղ յերե-  
մույթ»։

Շատ բնորոշ ե, վոր նույնիսկ «Այլո»-ն չեր կարող չնշել  
Խորհրդային տրամադրությունների հակայական աճումն արև-  
մտա-ռեկախնական մասսաների մեջ։

Լեհական կաթոլիկական «Պոլոնիա» լրադիրը հարկադրված  
յեղավ կակիծով ընդունելու, վոր «Հենց վոր մի վորեե հարավո-  
րություն ե լինում, բելոռուսական գյուղացիներն ել լեհաստա-  
նում սիրով են լսում խորհրդային ուագիոյի հաղորդումները,  
կյանքի խորհրդային պայմանների կարութը քաշելով»։ Միենույն  
ժամանակ լրագիրը մատնանշում եր. «Բելոռուսական գյուղա-  
ցու աչքին լեհաստանը—դա կալվածատերերն են, վոլոստային  
ալագները, դատական կատարածուները, և վոստիկանները, վո-  
րոնք նրան հետապնդում են ամեն մեկն իր ճեռով։ Այդ նրանք են  
գյուղացու աչքին ներկայացնում լեհաստանը. . Այդ նրանք են  
նրան շարունակ հիշեցնում աղքատության և մոռայլ իրականու-  
թյան մասին. . . Այդ պայմանները բացախիկ բարենպատ պայ-  
մաններ են ստեղծում կոմունիստական տրամադրությունների  
համար, վորոնք շարունակ ավելի ու ավելի յեն զարդանում»։

Արգեն հիշատակված «Молодое поколение польских кресть-  
ян» ժողովածուի մեջ զետեղված ե յերիտասարդական ռեակցիոն  
կազմակերպության մի ակտիվ գործչունու նամակը, վորի մեջ  
նա հարկադրված եր արձանադրելու, վոր Վիենչչինայի գյուղա-  
ցիներն արդեն 1937 թվականին իրենց բոլոր հույսերը դրել եյին  
պահական լեհաստանի ջախճախիլելու վրա այն պատերազմում,  
վորը նա ինքն եր պատրաստել։ Դեպի լեհական կեղեքիները  
Արևմտյան Բելոռուսիայի և Արևմտյան Ռեկախնայի աշխատավո-  
րական մասսաների տածած ստելությունը վճռական դեր խս-  
դաց այն զուտ արհեստական պետական կազմության պարտու-  
թյան և քայլարման մեջ, ինչպիսին եր լեհաստանը։ Ամբողջ  
սրությամբ արտահայտեց նաև լեհական գյուղացիության և  
բանվոր դասակարգի տածելությունը դեպի իրենց վրա իշխող  
բուրժուական կալվածատերական կլիկան։

Արևմտյան Ուկրաինայի, Արևմտյան Բելոռուսիայի աշխատավորները վաղուց եյին փայտայում այն միտքը, վոր խորհրդային ժողովուրդը նրանց կաղաստի ծանր լծից և կողմի արդարացի հասարակակարգ հաստատելու:

Խորհրդակին կառավարությունն անտարբեր չմնաց դեպի արյունակից ուկրաինացիների ու բելոռուսների բախտը, վորոնջ յենթարկվել ելին ամենաղաժան գաղութային շահազործման, թեկ այսուհետև անգլուիս լեհական ղեկավարների կողմից ամենեին դցվել ելին պատմահմունքը կամքին: Արևմտյան Ռուսակինայի և Արևմտյան Բելոռուսիայի աշխատավորները, վորպես կարոսայ սպասած ազատարարների և իրենց հարազատ յեղբայրների դիմավորեցին Բանվորա-Դյուլացիական Կարմիր Բանակին, վորն իր գրոշների վրա ազատություն, յեղբայրություն և յերջանկություն և տանում բոլոր ժողովուրդների աշխատավորներին: Հուզիչ տեսարաններ ելին տեղի ունենում բնակավայրերի փողոցներում կարմիր-բանակային զորամասերը ներս մտնելիս: Աժենուրեք լսվում ելին ուրախ վողջույններ: «Կեցցե՛ խորհրդային իշխանությունը», «Կեցցե՛ կարմիր Բանակը», «Կեցցե՛ ընկեր Ստալինը»: Ամենուրեք քաղաքներն ու դյուլերը զարդարված ելին կարմիր գրչակներով: Տների վրա աչքի ելին ընկնում «Շնորհաւակալությունը» ընկեր Ստալինին մեղ աղատելու համար» լոգունդները:

Բնակչությունը յեռանդով ողնում եր և ողնում ե վոլոսալու թազնված սպաներին և վոստիկաններին։ Տղամարդիկ և կանայք ուրախության արցումքներն աչքերին գրկում եյին մարտիկներին և ծաղկեսփնջեր մատուցում նրանց, հյուրասիրում եյին կաթով և խնճորներով։ Ամբողջ աշխատալորական բնակչությունը՝բանվորները, գյուղացիներն ու ինտելիգենցիան կարմիր Բանակին ցույց եյին տալիս և ցույց են տալիս գործուն ողնություն ճանապարհները վերականգնելու, կարգուկանոն պահպանելու և կյանքի խաղաղ պայմաններ ստեղծելու մեջ։ Շատերը խնդրում են իրենց վորպես կամալորներ մացնել կարմիր Բանակի շարքերը։

Պանական Լեհաստանի ծրանը լուծը տապալված է լնդմիշ։  
Սկսվել է խորհրդային ժողովրդի կողմից Արևմտյան Ռւկրաինայի  
և Արևմտյան Բելոռուսիայի ազատագրված արյունակից ժողո-  
վուրդների նոր լուսամոր կյանքը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գյուղացիական սակավահողությունը և կալվածատիրական հողառատությունը	3
Գյուղացիական ձիազգեկությունը և կովաղրկությունը	7
Արագած հույսեր հողի նկատմամբ	11
Կարմածատերերին և հույսերին ստրկացած	14
Մորկացումն ու պղային ճշգրտմը Արևմտյան Շեկրանայում և Արևմտյան Բելոռուսիայում	24
Գյուղացուն կողոպտում Եյին Փարքիկանանքը ու առելարտկանները	27
Գյուղացիական պարտքը	32
Գյուղացու Հարկային կողոպտութը	38
Գյուղացիական տնտեսության անկումը	41
Գյուղացիական մասսաների աղքատությունն ու սովը	44
Գյուղն առանց բժշկի	47
Գյուղը պահում Եյին տղիտության մէջ	51
Բնարակների և գյուղացիների իրավազորուկ դրությունը	53
Անորինության և տեռորի թագավորությունը	56
Արեւմտական պարտելոռուական, արևմտարելոռուական և լեհական գյուղացիների ձգումը, գեղի Առբէրդային, Մինություն	59
ձգումը, գեղի Առբէրդային, Մինություն	62

$$333.5(43.8) + 391.9(43.8)$$

Թարգմ. Ռուզա Վարդապետյան  
Խմբ. Աղ. Հակոբյան  
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան  
Սրբագրիչ Հ. Գոլուխանյան  
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Աբովյան

Գևագիրի լիազոր №—2917 հրատ. № 752

Պատվիր № 237, ամբաժ 5000

Հանձնված և արտադրության 5/XI 1939 թ.

Ստորագրված և տպագրելու 22/XI 1939 թ.

Գինը 1 ռ.

Քաղաքական գործառության Պետական հրատարակչության տպարան,  
Ենթական, Ալանիկը թյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0203148

ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

И. ГОЛЬДШТЕЙН

КАК ПОЛЬСКИЕ ПАНЫ УГНЕТАЛИ КРЕСТЬЯН

Государственное издательство политической литературы  
Ереван, 1939